

Կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումներ.
ուղեցույց Հայաստանի համար



Վարդան Ուռուտյան, տ.գ.թ., դոցենտ

Պատրաստված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՊԳԿ համար



Նպատակ

Սույն հետազոտության նպատակն է քննարկել ՀՀ-ում կոոպերատիվների կայուն զարգացմանն ուղղված մի շարք օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտությունը՝ հիմնվելով եվրոպական երկրների փորձի, Կոոպերատիվների միջազգային ասոցիացիայի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, ՄԱԿ-ի և բազմաթիվ այլ կազմակերպությունների հետազոտությունների արդյունքների և առաջարկությունների վրա: Հետազոտությունը վերլուծական և իրավական ուղեցույց կարող է հանդիսանալ ՀՀ կառավարության, մասնավորապես գյուղատնտեսության նախարարության համար՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվների» մասին ՀՀ օրենքի մշակման և ընդհանրապես Հայաստանում կոոպերատիվ շարժման զարգացման առումով:

«Կոոպերատիվները լավագույնս նպաստում են հասարակության զարգացմանն այն ժամանակ, երբ դրանք չեն դավաճանում իրենց բնույթին որպես ինքնավար, անդամների կողմից վերահսկվող հաստատություններ, երբ հավատարիմ են մնում իրենց արժեքներին և սկզբունքներին»

(Կոոպերատիվների նախարարական 5-րդ խորհրդաժողով, էջ 6)

«Կոոպերատիվները, ծառայելով անդամների և վերջիններիս համայնքների կարիքներին, նպաստում են երկրի զարգացմանը, աղքատության կրճատմանը, աշխատատեղերի ստեղծմանը, գյուղի և համայնքների զարգացմանը, սոցիալական ծառայությունների զարգացմանը և մարդկանց կյանքի որակի բարելավմանը. դրանք նաև ծառայում են որպես ժողովրդավարական կառավարման իրական օրինակներ»

(Կոոպերատիվների նախարարական 5-րդ խորհրդաժողով, էջ 10-11)

Բովանդակություն

Կոոպերատիվների կարևորությունը	5
Կոոպերատիվների տնտեսական ազդեցությունը	7
Կոոպերատիվների սոցիալական արժեքը.....	8
Ի՞նչ է կոոպերատիվը. կոոպերատիվների սկզբունքները և միջազգային իրավունքի հիմքը.....	10
Կոոպերացիայի գաղափարի և ինքնության ընկալումը նախկին Խորհրդային Միության երկրներում.....	16
Կոոպերատիվ շարժման ներկա վիճակը Հայաստանում. կոոպերատիվների ինքնության ընկալումը.....	19
Կոոպերատիվների վերաբերյալ ՀՀ վիճակագրությունը.....	24
Կոոպերատիվների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը.....	26
Հաշվապահական և հարկային հաշվառման խնդիրները ՀՀ սպառողական կոոպերատիվներում.....	30
Կոոպերատիվների մասին օրենքների համեմատական վերլուծություն.....	32
Կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումները հարևան Վրաստանում.....	47
Կոոպերատիվների խթանման պետական քաղաքականությունը.....	53
Եզրակացություններ.....	58
Առաջարկություններ.....	62
Օգտագործված գրականություն.....	65
Հավելվածներ.....	67

Կոոպերատիվների կարևորությունը

Կոոպերատիվները գոյություն ունեն մոտավորապես երկու հարյուր տարի: Գործելով տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում, կոոպերատիվները ավելի երկարակյաց են, քան՝ ներդրողամետ ընկերությունները: Կոոպերատիվ մոդելը մշտապես հարմարվել է փոփոխվող պայմաններին, և տնտեսական ու սոցիալական նորանոր խնդիրներին լուծում տալու համար առաջացել են կոոպերացիայի նորարարական ձևեր:

Կոոպերատիվները զարգացել են մեծապես տարբերվող քաղաքական պայմաններ, տնտեսական զարգացման աստիճան, մշակութային բնութագրեր և պատմական հենք ունեցող երկրներում: Գրեթե ամենուր ստեղծվել են գյուղատնտեսական կոոպերատիվներ, սպառողական կոոպերատիվներ, փոխօգնության խմբեր, վարկային միություններն աշխատավորական կոոպերատիվներ: Կոնկրետ երկրներում որոշակի կոնկրետ տեսակի կոոպերատիվներ արտակարգ աճ են գրանցել. օրինակ՝ վարկային կոոպերատիվները Գերմանիայում, բնակարանաշինարարական կոոպերատիվները Մեծ Բրիտանիայում, աշխատավորական կոոպերատիվները Շվեդիայում և Իտալիայում: Տասնհիններորդ դարի վերջին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում կոոպերատիվները կարևոր դեր էին խաղում որպես տնտեսական և սոցիալական հաստատություններ: Սեփական ուժերով արդյունքի հասնելու նախաձեռնությունների հետաքրքիր օրինակներ կային Չեխիայում, Բուլղարիայում, Սերբիայում և Լեհաստանում՝ նախքան սոցիալիզմի մուտք գործելը այդ երկրներ (Բորգազա և այլք, 2008): Նույնկերպ, կոոպերատիվները առանցքային դերակատարություն են ունեցել զարգացող երկրներում, թեկուզև դրանք հաճախ հաստատակարգված և նույնիսկ օրենքով կարգավորված չէին (Մյունկներ, 2012):

Կոոպերատիվների հաջողության և երկարակյացության հիմնական պատճառն այն է, որ դրանք շահագրգռված են ոչ թե առավելագույնի հասցնել ներդրողների շահույթը, այլ՝ բավարարել համայնքի կարիքները: Կոոպերատիվներին պետք է վերաբերվել որպես հիմնախնդիրների կոլեկտիվ լուծողների: Կոոպերատիվների համաշխարհային պատմությունը օգտակար դասեր է տալիս դրանց հիմնավորումը հասկանալու համար: Կոոպերատիվները կարողացել են բարգավաճել նաև այն պատճառով, որ դրանք ունեն բնորոշ առավելություններ՝ համեմատած ներդրողամետ ձեռնարկությունների հետ այն իմաստով, որ ստանձնում են այնպիսի դերակատարություն, որ այդ ձեռնարկությունները անկարող են կամ չեն կամենում իրականացնել:

Միջնորդավճարները և մանրածախ գները նվազեցնելու համար ստեղծվել են օգտագործողների և սպառողների կոոպերատիվներ, արտադրողների շուկայական թույլ ներուժը հզորացնելու համար՝ գյուղատնտեսական կոոպերատիվներ, իրենց բիզնեսը ինքնակառավարելու համար՝ աշխատավորների կոոպերատիվներ: Ընդհանուր ապահովագրություն և օժանդակություն տրամադրելու համար աշխատողները և համայնքները հիմնել են փոխօգնության ընկերություններ: Իրենց անդամների կարիքները բավարարելով՝ կոոպերատիվները նպաստել են հասարակության լայն և հաճախ խոցելի հատվածների կյանքի որակի բարելավմանը: Հանրային բարեկեցության բազմաթիվ քաղաքականություններ են կյանքի կոչվել շնորհիվ կոոպերատիվների կողմից արված գյուտերի և փորձարարական աշխատանքների: Բարեկեցություն ապահովող հիմնական հաստատությունները ի սկզբանե զարգացել են փոխադարձ օգնության և կոոպերատիվ խմբերի միջոցով: Սակայն, սկսած 20-րդ դարասկզբից, Եվրոպայի սոցիալական և առողջապահական ծառայությունների մեծ մասը ստանձնեցին պետական իշխանությունները՝ որպես բարեկեցիկ պետության ստեղծման գործընթացի մաս: Այսպիսով, նշված ծառայությունները դուրս եկան կոոպերատիվ և փոխադարձ հսկողության դաշտից և սկսեցին պետականորեն ֆինանսավորվել և մատուցվել բոլոր քաղաքացիներին՝ օրենքով սահմանված կարգով: Սակայն այս միտումը չդարձավ միակողմանի գործընթաց, քանի որ 20-րդ դարի վերջին Եվրոպական բազմաթիվ

երկրներում նոր կոոպերատիվները գնալով ավելի կարևոր դեր էին խաղում ծառայությունների մատուցման ոլորտում:

Պատմական վկայությունները ցույց են տալիս, որ կոոպերատիվները ոչ միայն ճգնաժամերի ժամանակ ավելի լավ են գոյատևում, քան ձեռնարկությունների այլ տեսակները, այլև առավել հաջողությամբ են դիմակայում ճգնաժամերի ազդեցությանը: Տասնիններորդ դարի բրիտանական սպառողական կոոպերատիվների պատմությունը ինքնահարատ գարգացման պատմություն է, որի վրա պարբերական անկումները միայն աննշան ազդեցություն են գործել (Բիրչալ, 2012): 1930-ականների մեծ դեպրեսիայի ժամանակ էլեկտրաէներգիայի և հեռահաղորդակցության ոլորտի կոոպերատիվները օգնեցին վերափոխելու ԱՄՆ-ի գյուղատնտեսությունը: 1960-ականներին կոոպերատիվ շարժում սկսվեց Նյու Յորքում, որում ներգրավվեցին 27000 ընտանիքներ (Բիրչալ և Չանոնո, Կետիլսոն, 2009): Իսկ 1970-ականների արմատական վերակառուցման ժամանակ Եվրոպայում ավելացավ աշխատավորական կոոպերատիվների թիվը, ընդ որում այդ կոոպերատիվների շրջանում ձախողումների թիվն ավելի ցածր էր, քան՝ շահույթ հետապնդող ընկերությունների շրջանում: 2008-2009թթ. ճգնաժամը ևս մեկ անգամ վկայում է կոոպերատիվների ուժի և ճկունության մասին:

Կոոպերատիվ շարժումը հասկանալու համար անհրաժեշտ է իրականացնել կոոպերատիվ հատվածի ընդհանուր չափի իրատեսական գնահատում:

Աշխարհի մասշտաբով երեք անգամ ավելի մեծ թվով կոոպերատիվների անդամ սեփականատերեր կան, քան՝ բաժնետիրական ընկերությունների անհատ բաժնետերեր, իսկ արագ զարգացող BRIC (Բրազիլիա, Ռուսաստան, Չինաստան, Հինաստան) երկրներում կոոպերատիվի անդամների թիվը չորս անգամ է գերազանցում բաժնետերերի թիվն (Մայո, 2012): Կոոպերատիվների ընդհանուր անդամակցությունը կազմում է 800 մլն-ից (ԿՄԱ, 2012) մինչև 1 մլրդ մարդ (Վորլդվոչ ինստիտուտ, 2012): Ըստ Կոոպերատիվների միջազգային ալյանսի (ԿՄԱ), կոոպերատիվներ են գործում բոլոր երկրներում, ընդ որում դրանց կարևորությունը հատկապես մեծ է աղքատ համայնքներում:

Եվրոպայում գյուղատնտեսական կոոպերատիվների գումարային շուկայաբաժինը կազմում է մոտ 60 տոկոս գյուղատնտեսական մթերքների վերամշակման և իրացման բնագավառում և մոտավորապես 50 տոկոս մասնաբաժին ներդրանքների մատակարարման բնագավառում: ԱՄՆ-ում կոոպերատիվների շուկայաբաժինը կազմում է գյուղատնտեսական մթերքների վերամշակման և իրացման շուկայի մոտ 28 տոկոսը և ներդրանքների մատակարարման շուկայի 26 տոկոսը (Վալենտինով և այլք, 2012):

Ամբողջ աշխարհում գործում են մոտավորապես 53 հազ. վարկային կոոպերատիվներ և վարկային միություններ: Եվրոպայում կան մոտ 4200 վարկային կոոպերատիվ բանկեր՝ 63 հազ. մասնաճյուղերով: Այդ կոոպերատիվ բանկերն ունեն 50 մլն անդամներ (մայրցամաքի բնակչության մոտ 10 տոկոսը), 181 մլն հաճախորդներ, 5.65 մլրդ եվրոյի ակտիվներ, 20 տոկոսի միջին շուկայաբաժին և մոտավորապես 780 հազ. աշխատակից (Վ. Ջամանի, 2012):

Եվրոպական մանրածախ առևտրի հատվածում եղած 3200 սպառողական կոոպերատիվներում աշխատում է 400 հազ. մարդ, ընդ որում դրանք ունեն 29 մլն անդամ, 36 հազ. վաճառակետ և 73 մլրդ եվրոյի շրջանառություն:

Ըստ Կոոպերատիվ և փոխադարձ ապահովագրության միջազգային դաշնության, 2008թ.-ին համաշխարհային ապահովագրական շուկայի 25 տոկոսը բաժին էր ընկնում կոոպերատիվներին, այդ թվում Գերմանիայում՝ 44 տոկոսը, Ֆրանսիայում՝ 39 տոկոսը, ճապոնիայում՝ 38 տոկոսը և համապատասխանաբար 30 տոկոս ԱՄՆ-ում և Կանադայում (Վ. Ջամանի, 2012):

Սոցիալական կոոպերատիվները, որոնք լայնորեն տարածված են հատկապես եվրոպական երկրներում և Կանադայում, կոոպերատիվի նոր ձև են, որը հստակ նպատակ է հետապնդում

բարելավելու կոլեկտիվ օգուտները: Որպես տեսակ, սոցիալական կոոպերատիվը գտնվում է ավանդական կոոպերատիվի և շահույթի նպատակ չհետապնդող կազմակերպության միջև և ընդհանուր առմամբ համատեղում է բազմաթիվ շահագրգիռ կողմերի (կոոպերատիվի անդամների) ներգրավումը ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նպատակների հետ: Իտալիայում, որտեղ այս տեսակի կոոպերատիվները ամենազարգացածն են, սոցիալական կոոպերատիվները վերջին երկու տասնամյակներին բարեկեցություն ապահովող համակարգում դարձել են առանցքային խաղողներ: Իրենց ստեղծումից ի վեր սոցիալական կոոպերատիվները Իտալիայում գրանցել են տարեկան 10-ից 20 տոկոսի միջին աճ: 2008թ.-ին գործում էին 13938 սոցիալական կոոպերատիվներ, որոնցում աշխատում էր մոտավորապես 350 հազար աշխատող և 35 հազար կամավոր, ովքեր ծառայում էին 4.5 միլիոն օգտագործողների (Անդրեուս և այլք, 2012):

Վերջին հետազոտությունները ցույց են տվել, որ ի տարբերություն լայնորեն ընդունված ավանդական տեսակետի, կոոպերատիվներ են գործում տնտեսական գործունեության բազմաթիվ ոլորտներում: Ավելին, որոշ երկրներում դրանք ավելի հզոր են, քան այլ տեսակի ձեռնարկությունները և նույնիսկ՝ ավելի լավ կապիտալացված:

Կոոպերատիվների տնտեսական ազդեցությունը

Կոոպերատիվների դերն ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել այն ներդրմանը, որ այս հաստատություններն ապահովում են տնտեսական համակարգի ընդհանուր գործունեության համար:

Կոոպերատիվները նպաստավոր են առնվազն հինգ ձևով: **Առաջին**, դրանք մեծ դեր են խաղում շուկայական ծախողումների կրճատման առումով, դրանով իսկ բարելավելով տնտեսական համակարգի գործունեությունը և մարդկանց մեծաթիվ խմբերի բարեկեցությունը (Յանսման, 1996): Այս ներդրման համար հիմք են հանդիսանում կոոպերատիվներին բնորոշ սեփականատիրությունը և կառավարման կանոնները: Սեփականության տարբեր կառուցվածքներ և տարբեր նպատակներ հետապնդող բազմաթիվ ձեռնարկությունների գոյակցությունը նպաստում է շուկայական մրցակցության բարելավմանը, որն էլ իր հերթին սպառողին առաջարկում է ավելի մեծ ընտրություն, օգնում մենաշնորհների ձևավորման կանխմանը, իջեցնում մանրածախ գները, հնարավորություններ ստեղծում նորարարությունների համար և սահմանափակում տեղեկատվական անհամաչափությունը:

Երկրորդ, կոոպերատիվներն առանցքային դեր են խաղում տնտեսության կայունացման գործում, հատկապես զգալի անորոշություն և գների անկայունություն ունեցող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են, օրինակ, ֆինանսները և գյուղատնտեսությունը: Եվրոպայի կոոպերատիվ բանկերը և Յյուսիսային Ամերիկայի վարկային միությունները դիտվում են որպես բանկային համակարգի վրա կայունացնող ազդեցություն ունեցող գործոններ (Բիրչալ, 2012): Ինչպես ցույց են տալիս տնտեսական նախկին անկումների պատմական վկայությունները, կոոպերատիվների կայունացնող դերը խիստ կարևորվում է ճգնաժամային ժամանակներում: Ավելին, կոոպերատիվների գոյությունը բարելավում է հասարակությունների՝ ապագայում հնարավոր անկայուն փոփոխություններին արձագանքելու ընդունակությունը:

Երրորդ, կոոպերատիվները նպաստում են ապրանքների և ծառայությունների արտադրությունը այն մարդկանց կարիքներին մոտեցնելուն, ուն դրանք ծառայում են: Կոոպերատիվները մատակարարում են այնպիսի ապրանքներ և ծառայություններ, հաճախ՝ նորարարական, որոնք բավարարում են իրենց անդամների կոնկրետ կարիքները և ոչ թե անպայման արձագանքում առավելագույն շահույթ ստանալու հիմնավորմանը: Կոոպերատիվները հաճախ արտադրում են

ցածր և անորոշ, եթե չասենք՝ բացասական շահութաբերություն ունեցող ապրանքներ և ծառայություններ, որոնց արտադրությունը ներդրողամետ ձեռնարկությունների համար ձեռնտու չէ, իսկ պետական իշխանություններն էլ ի վիճակի չեն մատակարարել: Ցածր կամ բացասական շահութաբերություն ունեցող ծառայությունները ներառում են սոցիալական, առողջապահական, կրթական և այլ անձնական ու համայնքային ծառայությունները: Բացասական շահութաբերության դեպքերում կոոպերատիվները կարող են հասնել ծախսածածկման կետին՝ շնորհիվ լրացուցիչ ռեսուրսների ներգրավման - ինչպիսիք են. օրինակ, կամավորական աշխատանքը և նվիրատվությունները - կամ՝ շնորհիվ գների խտրականության քաղաքականության: Կոոպերատիվների փորձը վկայում է, որ կամավորական աշխատանքը կամ նվիրատվությունները հատկապես կարևոր են բոլոր տեսակի կոոպերատիվների մեկնարկային փուլում՝ անկախ դրանց գործունեության բնույթից:

Չորրորդ, կոոպերատիվները միտված են ընդունելու երկարաժամկետ հեռանկարներ, քանի որ վերջիններս հաճախ արդյունավետ միջոցներ են դառնում այն համայնքներում, որտեղ այդ կոոպերատիվները գործում են: Ընդհանրապես կոոպերատիվներին մտահոգում է ներկա և ապագա սերունդների բարեկեցությունը: Անդամների տնտեսական մասնակցության վերաբերյալ ԿՄԱ 3-րդ սկզբունքին համահունչ՝ բազմաթիվ կոոպերատիվների կանոնադրություններով նախատեսվում է կոոպերատիվի ավելցուկային եկամտի մի բաժինը հատկացնել պահուստային և անբաժանելի ֆոնդին, որը չի պատկանում անհատ անդամներին, այլ պետք է օգտագործվի ի օգուտ բոլորի և ապագա սերունդների: Որոշ երկրներում կոոպերատիվների երկարաժամկետ հեռանկարը ներառվում է այն օրենքների մեջ, որոնք կոոպերատիվներին պարտավորեցնում են իրենց տարեկան ավելցուկի մի մասը ուղղել դեպի այսպես կոչված «արգելանքի տակ դրված ակտիվներ», որը նշանակում է, որ իրենց ակտիվների մի մասը պետք է օգտագործվի ի շահ համայնքի:

Յինգերորդ, կոոպերատիվները նպաստում են եկամտի ավելի արդարացի բաշխմանը: Քանի որ կոոպերատիվները ստեղծվում են իրենց անդամների կարիքները բավարարելու նպատակով և նախատեսված չեն շահույթներ կուտակելու համար, դրանք միտված են իրենց ռեսուրսները վերաբաշխել կամ աշխատողներին՝ ավելացնելով նրանց աշխատավարձերը կամ զբաղվածությունը, կամ էլ սպառողներին՝ էժանացնելով իրենց արտադրանքի գները:

Կոոպերատիվների սոցիալական արժեքը

Իրենց հիմնադրումից ի վեր կոոպերատիվները գործում են ոչ միայն որպես տնտեսական հաստատություններ, այլև՝ սոցիալական դերակատարներ, որոնք հստակ պարտավորություն են ստանձնում լուծելու տեղական համայնքների կամ շահագրգիռ կողմ հանդիսացող կարիքավոր խմբերի խնդիրները:

Կոոպերատիվների սոցիալական դերը հաճախ է շեշտադրվում, բայց հազվադեպ է ենթարկվում համակարգային վերլուծության: Կոոպերատիվների սոցիալական ազդեցությունը ավելին է, քան լրացուցիչ հատկություն կամ արտաքին ցուցանիշ. այն կամավոր հիմունքներով գոյացող հավելյալ արժեք է և կոոպերատիվների գործունեության անբաժանելի մաս:

Պատմական վկայությունները ցույց են տալիս, որ, համեմատած ներդրողամետ ձեռնարկությունների հետ, կոոպերատիվ լուծումներն ավելի ներառական են և ավելի կողմնորոշված են նպաստելու ընդհանուր հետաքրքրություն ունեցող նպատակների իրականացմանը, որոնք շահեկան ազդեցություն են ունենում բարեկեցության վրա:

ԿՄԱ-ի կողմից 1995թ. ընդունված Կոոպերատիվների ինքնության և սկզբունքների հռչակագիրը ներառում է 7-րդ սկզբունքը՝ «մտահոգություն համայնքի մասին», որն արտահայտում և վերակենդանացնում է կոոպերատիվների տարբեր տեսակների սոցիալական ընդգրկումը (ՄաքՖերսոն, 2012): Այս սկզբունքի ներառումը նախատեսում էր դիմակայել կոոպերատիվների կողմից անդամակցության տնտեսական օգուտները սոցիալական ազդեցությունից զերադասելու միտմանը, օգուտներ, որոնք կապված են ավելցուկային եկամուտն ըստ անդամների փայամասնակցության բաշխելու հետ: Հաստատելով կոոպերատիվների կապն իրենց համայնքների հետ, այս սկզբունքը շեշտադրում է երկու բնորոշ հատկություններ՝ կոոպերատիվների մեծ ուշադրությունը իրենց գործունեության սոցիալական հետևանքներին և դրանց պատասխանատվությունը՝ հոգ տանելու այն համայնքի մասին, որտեղ իրենք գործում են:

Կոոպերատիվների սոցիալական կողմնորոշումը հանգեցնում է մի քանի շահավետ արդյունքների: **Նախ**, շնորհիվ տեղական մակարդակում արմատավորված լինելու – ինչին նպաստում է բազմաթիվ շահագրգիռ կողմերի մասնակցությունը, այդ թվում՝ անդամները, շահառուները և աշխատողները – կոոպերատիվները նպաստում են սոցիալական կապիտալի մեծացմանը և համայնքի ներսում փոխվստահության հարաբերությունների ամրապնդմանը: Ուստի կոոպերատիվներին կարելի է վերաբերվել որպես քաղաքացիական վերաբերմունքի ձևավորման, ինչպես և, իր հերթին, սոցիալական արժանիքներ ստեղծելու արդյունավետ գործիքի (Դասգուպտա, 2012): Այն դրական ազդեցությունը, որ կոոպերատիվներն ունենում են սոցիալական համերաշխության վրա, խարսխվում է փոխշահավետ գործարքների իրականացումն ապահովող առանցքային կանոնները հաստատակարգելու՝ կոոպերատիվների ընդունակության վրա: Կոոպերատիվներին բնորոշ է փոխկապվածությունը, որը բխում է կոոպերատիվի անդամների կողմից փոխադարձ կախվածության մեջ գտնվող ծառայությունների համատեղ օգտագործումից, ընդ որում անդամները հակված են դրսևորելու պրո-սոցիալական դիրքորոշում, քանզի նրանք հետամուտ են ընդհանուր նպատակի, որը հաճախ համընկնում է ընդհանուր բարիքի հետ: Ավելին, քանի որ նրանք իրենց անդամներին խթանում են կատարելու իրենց խոստումները, կոոպերատիվներին կարելի է համարել հաստատություններ, որտեղ մարդիկ յուրատեսակ ոչ պաշտոնական պայմանագրային հարաբերությունների մեջ են մտնում իրենց ռեսուրսները համատեղելու վերաբերյալ: Հետևաբար կոոպերատիվներին կարելի է համարել սոցիալապես կողմնորոշված վարքագծերի արտաքին իրականացնողներ (Դասգուպտա, 2012):

Երկրորդ, ապահովելով եկամուտների և զբաղվածության պաշտպանվածությունը, կոոպերատիվները լուծում են խնդիրներ, որոնք այլ պարագայում պետական քաղաքականության պատասխանատվության ներքո կլինեին: Կոոպերատիվները դրսևորել են շուկայական վատթար պայմաններում աշխատատեղեր ստեղծելու և պահպանելու ավելի մեծ ունակություն, քան ներդրողամետ ձեռնարկությունները: Որոշ երկրներում աճում է աշխատողների կողմից բաժնետերերից ձեռնարկությունների ամբողջական գնման ծավալները, որը աշխատանքը կորցնելու մտահոգության հետևանք է: Ինչպես ցույց է տալիս վերջին շրջանում մի քանի երկրների փորձը, ի տարբերություն այլ տեսակի ձեռնարկություններին պատուհասած կլանումների, խորը ճգնաժամի պայմաններում կոոպերատիվները կարող են պահպանել աշխատատեղերը (Պերոտին, 2012):

Երրորդ, կոոպերատիվները իրենց չեն սահմանափակում զբաղվածության հնարավորություններ ստեղծելով, դրանք հաճախ արտոնություններ են ստեղծում խոցելի աշխատողների համար, ովքեր դուրս են մնացել աշխատաշուկայից կամ դուրս մնալու վտանգի առջև են: Որոշ երկրներում կոոպերատիվներն ակնհայտորեն բարենպաստ պայմաններ են ստեղծում այլ տիպի ձեռնարկությունների կողմից խտրականության ենթարկված աշխատողների համար և նրանց ապահովում աշխատանքին զուգահեռ ուսուցմամբ՝ անբարենպաստ իրավիճակից դուրս գալու հարցում նրանց օգնելու նպատակով (Դեֆուրնի և Նիսենս, 2012):

Կոոպերատիվների ստեղծած սոցիալական օգուտները հազվադեպ են հաշվի առնվում տարբեր տեսակի ձեռնարկությունների կատարողականությունը համեմատության մեջ դնող ազդեցության գնահատման վերլուծությունների ժամանակ, քանի որ այդ վերլուծությունների համար սովորաբար որպես հիմք են ընդունվում արդյունավետության բավականին նեղ չափանիշներ: Այդ համեմատությունների մեծ մասը կողմնակալ կերպով արտահայտում են ներդրողի սեփականությունը հանդիսացող ընկերությունների տվյալները, քանի որ չեն ընդգրկում այն սոցիալական նպատակները, ներքին արդյունքները և կոլեկտիվ օգուտները, որ ստեղծում են կոոպերատիվները: Այս մոտեցումը ոչ միայն զուտ իմացաբանական տեսանկյունից թերի է, այլև անընդունակ՝ համարժեք քաղաքականություն մշակելու առումով (Ս. Չամանի, 2012):

Ի՞նչ է կոոպերատիվը. կոոպերատիվների սկզբունքները և միջազգային իրավունքի հիմքը

Կոոպերատիվների միջազգային այլաձևի (ԿՄԱ) 1995թ ընդունված «Կոոպերատիվների ինքնության հռչակագիրը», Միավորված ազգերի կազմակերպության 2001թ. ընդունված «Կոոպերատիվների զարգացման համար աջակցող միջավայրի ստեղծման» ուղեցույցը և Աշխատանքի միջազգային կազմակերպության 2002թ. ընդունված «Կոոպերատիվների աջակցության» թիվ 193 առաջարկությունը¹ (այսուհետ՝ Ա193) կազմում են կոոպերատիվների հանրային, միջազգային իրավունքի հիմքը²: Այս փաստաթղթերի բովանդակությունը պետք է հարգել օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու կամ ազգային օրենքներ մշակելու ժամանակ:

Կոոպերատիվների մասին օրենք մշակելու համար նախևառաջ պետք է իմանալ, թե ինչ է կոոպերատիվը: Կոոպերատիվների մասին բազմապիսի կարծիքներ կան, սակայն կոոպերատիվի իրավական սահմանման վերաբերյալ համաձայնության հասնելուց հետո կարծիքների բազմակիությունը տեղափոխվում է այլ քննարկման դաշտ, սակայն ոչ՝ կոոպերատիվների օրենսդրական դաշտ:

Ըստ ԿՄԱ-ի «Կոոպերատիվների ինքնության հռչակագրի», «կոոպերատիվը մարդկանց ինքնավար ընկերակցություն է, ովքեր կամավոր կերպով միավորվում են՝ համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով իրենց ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքներն ու ձգտումները բավարարելու համար»: Այս սահմանումը ներառված է Ա193-ի մեջ, որը կոոպերատիվների հանրային, միջազգային իրավունքի կարևոր բաղադրիչն է կազմում:

Կոոպերատիվների այս սահմանումը չպետք է ընդունել որպես սոսկ սահմանում: Սահմանումը պետք է ուղեցույց լինի օրենսդիր մարմնի համար՝ օրենքի մնացած մասերի մշակման ժամանակ: Կոոպերատիվների արժեքները և սկզբունքները, որոնք նույնպես ներառված են Ա193-ի մեջ (հոդված 3) կօգնեն հասկանալու այս սահմանումը, սակայն դրանք չեն արտացոլում բավարար քանակությամբ մասնիկներ իրավական սկզբունքների ձևավորման համար, որոնք ուղեցույց կլինեին օրենսդիր մարմինների համար:

Յոշակագրում նշված է այն արժեքային համակարգը, որի վրա հիմնված են կոոպերատիվները: Կոոպերատիվները հիմնված են փոխադարձ օգնության, ինքնապատասխանատվության, ժողովրդավարության, հավասարության, անաչառության, համերաշխության և համախմբվածության արժեքների վրա: Կոոպերատիվի անդամները հավատում են ազնվության, շիտակության, սոցիալական պատասխանատվության և այլոց մասին հոգատարության բարոյական արժեքներին:

¹Հայաստանը անդամակցում է ԱՄԿ-ին 1992թ.-ից:

²Ամբողջական Ա193-ը և ՄԱԿ-ի ուղեցույցը տես հավելված 1-ում և 2-ում:

Կոոպերատիվների սկզբունքներն այն ուղենիշերն են, որոնց միջոցով կոոպերատիվները գործի մեջ են դնում իրենց արժեքները: ԿՄԱ-ի հռչակած յոթ սկզբունքները հետևյալներն են (տես նաև Ա193, հոդված 3բ)³:

- 1. Կամավոր և բաց անդամություն:** Կոոպերատիվները կամավոր կազմակերպություններ են, որոնք բաց են բոլոր այն անձանց համար, ովքեր ի վիճակի են ստանալ կոոպերատիվների ծառայությունները և պատրաստակամ են պարտավորություններ վերցնել որպես անդամ՝ առանց սեռային, սոցիալական, ռասայական, քաղաքական կամ կրոնական որևէ խտրականության:
- 2. Անդամների գործունեության ժողովրդավարական վերահսկողություն:** Կոոպերատիվները իրենց անդամների կողմից վերահսկվող ժողովրդավարական կազմակերպություններ են, անդամներ, ովքեր ակտիվորեն մասնակցում են կոոպերատիվների քաղաքականության մշակմանն ու որոշումների կայացմանը: Որպես ներկայացուցիչներ ընտրված տղամարդիկ և կանայք հաշվետու են կոոպերատիվի անդամների առջև: Պարզկոոպերատիվներում անդամներն ունեն հավասար ձայնի իրավունք (մեկ անդամ, մեկ ձայն): Այլ մակարդակների կոոպերատիվների աշխատանքները նույնպես կազմակերպվում են ժողովրդավարական սկզբունքներով:
- 3. Անդամների տնտեսական մասնակցություն:** Անդամները նպաստում են իրենց կոոպերատիվի ունեցվածքի նկատմամբ հավասար իրավունքների իրականացմանը և ժողովրդավարական ձևով վերահսկում այն: Այդ ունեցվածքի առնվազն մի մասը կոոպերատիվի ընդհանուր սեփականությունն է: Անդամները սովորաբար փոքր փոխհատուցումներ են ստանում, եթե առհասարակ ստանում են, այն կապիտալից, որը մասհանված է որպես անդամության պայման: Անդամները հավելյալ միջոցներ են հատկացնում հետևյալ նպատակներով՝ կոոպերատիվի զարգացում (հնարավոր է՝ ռեզերվային ֆոնդի ստեղծմամբ, որի առնվազն մի մասը կլինի անբաժանելի), անդամներին օգնելու համար՝ ըստ տվյալ անդամի և կոոպերատիվի միջև փոխգործողության համամասնության, ինչպես նաև անդամների կողմից հաստատված այլ գործունեություն ծավալելու նպատակով:
- 4. Ինքնավարություն և անկախություն:** Կոոպերատիվները իրենց անդամների կողմից վերահսկվող ինքնավար, ինքնօգնող կազմակերպություններ են: Եթե կոոպերատիվները պայմանագրային հարաբերությունների մեջ են մտնում այլ կազմակերպությունների, այդ թվում՝ պետության հետ, կամ միջոցներ են հայթայթում արտաքին աղբյուրներից, ապա նրանք դա անում են կոոպերատիվի ինքնավարությունը և անկախությունը պահպանելու պայմանով:
- 5. Կրթություն, վերապատրաստում և տեղեկատվություն:** Կոոպերատիվները կրթություն և վերապատրաստում են ապահովում իրենց անդամների, ընտրված ներկայացուցիչների, ղեկավարների և աշխատողների համար, որպեսզի վերջիններս կարողանան նպաստել իրենց կոոպերատիվի զարգացմանը: Նրանք հանրությանը, մասնավորապես երիտասարդությանը և նրանց, ում կարծիքները կարևորում են, տեղեկացնում են կոոպերացիայի բնույթի և օգուտների մասին:
- 6. Գործակցություն կոոպերատիվների միջև:** Կոոպերատիվներն իրենց անդամներին առավել արդյունավետ կերպով են ծառայում և առհասարակ նպաստում են կոոպերատիվ շարժման հզորացմանը, եթե աշխատում են միասին՝ տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային կառույցների միջոցով:

³Stu ICA Statement of Cooperative Identity. www.ica.coop

7. Համայնքի մասին մտահոգվածություն: Կոոպերատիվներն աշխատում են հանուն իրենց համայնքների կայուն զարգացման՝ համաձայն անդամների կողմից հաստատված քաղաքականության:

Կոոպերատիվների միջազգային ալյանսը (ԿՄԱ), Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) և Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ), որպես միջազգային ունիվերսալ կազմակերպություններ, ունեն կոոպերատիվների զարգացման մանդատ և քարոզում են կոոպերատիվների վերոնշյալ արժեքները և սկզբունքները:

Կոոպերատիվները ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է հասկանալ **կոոպերատիվների և բաժնետիրական ընկերությունների տարբերությունները**, ինչպես նաև **կոոպերատիվների և սոցիալական ձեռնարկությունների** նմանությունները և տարբերությունները: Շատ երկրներում այս երևույթները բարդություններ են առաջացրել կոոպերատիվների մասին օրենսդրություն մշակելու ժամանակ:

Սոցիալական տնտեսության մասին առհասարակ վերջերս շատ է խոսվում: Գլոբալ մակարդակով մենք տեսնում ենք բազմաթիվ մարդկանց սոցիալական, հասարակական և քաղաքական մեկուսացման աննախադեպ բարձր մակարդակ: Որպես բարձր տեխնոլոգիաների զարգացման և շուկաների ապակարգավորման արդյունք՝ արտադրության միջոցները և ակտիվների սեփականությունը կենտրոնանում է ավելի քիչ մարդկանց ձեռքում: Գեյսլերի տվյալներով, համաշխարհային մակարդակով 400 ընտանիք ավելի շատ են վաստակում, քան 3 մլրդ մարդ միասին վերցրած⁴:

Աստիճանաբար հանրային քննարկումները վերակենտրոնանում են կոոպերացիայի, մարդկային արժանապատվության և համերաշխության վրա՝ այդ մեկուսացումը մեղմելու նպատակով: Այս համատեքստում «սոցիալական տնտեսությունը» ստանում է բիզնեսի վարման այլընտրանքային ձև՝ միավորելով մարդկանց, ովքեր իրենց համարում են սոցիալական տնտեսության համար աշխատողներ:

Սոցիալական տնտեսության ընդգրկման ծիրը մշտապես եղել է վեճերի և քննարկումների առարկա: Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները գործում են տարբեր ոլորտներում և ունեն կազմակերպահրավական տարբեր ձևեր: Օրինակ ԱՄՆ-ում շատ հիվանդանոցներ գործում են հիմնադրամի կարգավիճակով, իսկ Ֆրանսիայում և Գերմանիայում՝ ընկերակցությունների (ասոցիացիաներ): Շվեդիան հայտնի է իր մանկապարտեզներով, որոնք հանդես են գալիս որպես ծնողների կողմից ստեղծված և վերահսկվող կոոպերատիվներ⁵:

Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ սոցիալական տնտեսությունն ունի առնվազն 2 առաձեռնահատկություն: Մի կողմից այն ներառում է **գործառույթներ և նպատակներ**՝ առողջապահություն, տարեցների և հաշմանդամների խնամք, կրթություն, աշխատատեղերի ստեղծում, հաշմանդամների ինտեգրում աշխատաշուկային, նախկին թմրամոլների վերաինտեգրում հասարակության մեջ և այլն: Այս գործառույթների ընդհանուր մասնիկն այն է, որ նրանք բավարարում են այնպիսի կարիքներ, որոնք անհատապես շատ դժվար է բավարարել և որոնք գնալով ավելի քիչ են բավարարվում և ուշադրության արժանանում հանրային ինստիտուտների կողմից: Մյուս կողմից սոցիալական տնտեսությունն ընդգրկում է այն **ձեռնարկությունները**, որոնց միջոցով իրականացվում են այս գործառույթները:

Այս առանձնահատկության պատեհությունը դժվար է հասկանալ, քանի որ գործառույթները տեսանելի են, իսկ ձեռնարկությունների իրավական ձևը՝ ոչ: Այս ձեռնարկությունների իրավական կառուցվածքը հայտնի չի դառնում՝ քանի դեռ շահառուների միջև խնդիրներ չկան:

⁴Stu Henry's Guidelines, page 32.

⁵Stu Henry's Guidelines, page 33.

Մեկ այլ խնդիր է իրավական կառուցվածքի և գործառույթների միջև ֆունկցիոնալ հարաբերությունների թերագնահատումը կամ գերագնահատումը: Սրա վառ օրինակն է այն տարածված երևույթը, երբ մասնավոր ձեռնարկություններից, ներառյալ կոոպերատիվներից, գնալով ավելի շատ հանրային շահեր են ակնկալվում, իսկ հանրային ինստիտուտներից պահանջվում է երբեմն դրսևորել մասնավոր ձեռնարկությունների վարքագիծ:

Սոցիալական տնտեսության վերաբերյալ քննարկումները ինքնանպատակ չեն: Խմբավորման ցանկացած փորձ, ինչպես և սոցիալական տնտեսության խաղողղների դասակարգումը, որոշակի նպատակ է հետապնդում: Նպատակը այս խաղողղներին տրամադրվող աջակցությունն է քաղաքական դրդապատճառներով: Բացի շատ հազվադեպ դեպքերից, այդ աջակցությունը չի պահանջում տվյալ խաղողղների՝ գոյություն ունեցող իրավաբանական ձևերի փոփոխություն: Շատ երկրներում սոցիալական տնտեսության գործիչներ են համարվում կոոպերատիվները, հիմնադրամները, ասոցիացիաները (ընկերակցությունները), հասարակական կազմակերպությունները և փոխօգնության կազմակերպությունները: Սովորաբար յուրաքանչյուրի դեպքում առանձին օրենք է գործում: Ներկայումս տվյալ խաղողղների իրավական կառուցվածքը վերակարգավորվում է, որպեսզի հնարավոր լինի գնահատել նրանց ֆունկցիոնալությունը սոցիալական տնտեսության պահանջներին համապատասխան:

Սոցիալական տնտեսությանը վերաբերող եվրամիության կանոնադրության և գոյություն ունեցող գրականության համաձայն, սոցիալական տնտեսության ձեռնարկությունները մասնավոր իրավունքի ինքնավար սուբյեկտներ են և ունեն հետևյալ կառուցվածքային և գործառնական առանձնահատկությունները.

- սոցիալական նպատակի գերակայություն
- կամավոր և բաց անդամակցություն
- անդամների կողմից ժողովրդավարական վերահսկողություն
- անդամների/օգտագործողների շահերի և ընդհանուր շահերի միավորում
- պատասխանատվության և համերաշխության սկզբունքների պաշտպանություն և իրականացում
- ինքնավար կառավարում և անկախություն հանրային ինստիտուտներից
- ավելցուկի էական մասը օգտագործվում է կայուն զարգացման նպատակների իրագործման, անդամների շահերին կամ հանրային շահերին ուղղված ծառայությունների մատուցման համար⁶:

Սրանք սոցիալական ձեռնարկությունների ընդհանուր առանձնահատկություններն են, սակայն կան նաև էական տարբերություններ, մասնավորապես կոոպերատիվների, հիմնադրամների, ասոցիացիաների միջև:

Առաջինը վերաբերում է **«շահույթի նպատակ հետապնդելուն»** և **«շահույթի նպատակ չհետապնդելուն»**: Այս ձեռնարկությունները պետք է դրական տնտեսական արդյունք ապահովեն, որպեսզի գոյատևեն և զարգանան: Սա չի նշանակում, որ նրանց միակ նպատակը շահույթ ստանալն է՝ «ձեռնարկատիրական կամ կապիտալիստական շահույթի» բուն իմաստով: Հարցը այստեղ շահույթի նպատակ հետապնդելու կամ չհետապնդելու մեջ չէ, այլ «շահույթի նպատակ հետապնդելու» նպատակի մեջ է: Արդյոք տվյալ ձեռնարկության գործունեության հիմնական նպատակը շահույթ ստանալն է, թե՞ շահույթի ստացումը միջոց է՝ բարելավելու ձեռնարկության շահառուների բարեկեցությունը կամ իրականացնելու ավելի լայն սոցիալական նպատակներ:

Հաջորդը վերաբերում է **«շահույթի բաշխման ձևաչափին»**: Բաժնետիրական ընկերությունները շահույթը բաշխում են ըստ բաժնետերերի կողմից ներդրված կապիտալի համամասնության: Հիմնադրամները, ասոցիացիաները, հասարակական կազմակերպությունները սովորաբար շահույթ չեն բաշխում: Փոխարենը, նրանք պետք է շահույթը ուղղեն իրենց ապրանքների կամ ծառայությունների բարելավմանը: Կոոպերատիվները պետք է տարբերեն դրական տնտեսական

⁶ See www.socialeconomy.eu.org

արդյունքի բաղադրիչները՝ **շահույթ**, որը առաջանում է ոչանդամների հետ ունեցած գործարքներից, և **ավելցուկ**, որը առաջանում է կոոպերատիվի անդամների հետ ունեցած գործարքներից՝ կոոպերատիվի սկզբունքների համաձայն: Կոոպերատիվի սկզբունքների համաձայն, շահույթը պետք է ուղղել կոոպերատիվի անբաժանելի և պահուստային ֆոնդերին, իսկ ավելցուկը կամ գոնե դրա մի մասը պետք է բաշխվի անդամների միջև՝ ըստ կոոպերատիվի հետ ունեցած գործարքների համամասնության, որոշակի նշված ժամանակահատվածում:

Մեկ այլ տարբերություն է **«ակտիվների սեփականությունը»**: Ասոցիացիայի անդամներին չի թույլատրվում համատեղ սեփականություն հանդիսացող ակտիվներ ունենալ: Հիմնադրամների կամ հասարակական կազմակերպությունների օրենքներով կամ դրանց պարզ սահմանմամբ, դրանց անդամները չունեն համատեղ սեփականություն հանդիսացող ակտիվներ: Իսկ կոոպերատիվների սահմանման մեջ ասվում է՝ «... համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով իրենց ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքներն ու ձգտումները բավարարելու համար»:

Հաջորդ տարբերությունը վերաբերում է **«ներդրումներ կամ կապիտալիզացիա»** հասկացությանը: Եթե ներդրողը ներդրում է ունենում որևէ հիմնադրամում, դա բառի բուն իմաստով ներդրում չէ ներդրողի համար, այլ օգնություն տվյալ հիմնադրամի կանոնադրական ֆոնդին: Տվյալ հիմնադրամից այդ ներդրողը ներդրման հատույց չի ակնկալում: Ավելին, դա նույնիսկ ֆինանսական կորուստ կարելի է համարել այդ ներդրողի համար: Հասարակական կազմակերպությունները կամ ասոցիացիաները հազվադեպ, այն էլ հատուկ օրենսդրական ընթացակարգով կարող են ներդրումներ ընդունել:

Կոոպերատիվները այս առումով ավելի ճկուն են: Շատ երկրների կոոպերատիվների մասին օրենքներ թույլատրում են կոոպերատիվներին գործարքներ ունենալ ոչանդամների հետ և ներդրումներ, թեկուզ սահմանափակ, ներգրավել ոչանդամներից:

Քննարկումները և խորհրդակցությունները, որոնք հանգեցրին Ա193-ի ընդունմանը 2002թ-ին, առնչվում էին այն հարցերին, թե արդյոք կոոպերատիվները հանդիսանում են սոցիալական տնտեսության բաղկացուցիչ մաս կամ սոցիալական ձեռնարկության հատուկ տեսակներ են կամ բիզնես ձեռնարկության առանձնահատուկ տեսակ են: ԱՄԿ Ա193-ի ձևակերպումը այդքան էլ հստակ չի նշում այս մասին, սակայն կասկածից վեր է այն փաստը, որ Ա193-ը, ԿՄԱ հռչակագրի և ՄԱԿ-ի ուղեցույցի հետ միասին, հնարավորություն են տալիս կոոպերատիվները դիտարկել որպես «սոցիալական տնտեսության ձեռնարկությունների» տարբերակված տարր⁷:

Կոոպերատիվների և բաժնետիրական ընկերությունների տարբերությունները ավելի ցայտուն են: Փորձենք համեմատել՝ հաշվի առնելով կապիտալի կառուցվածքը, կառավարումը և վերահսկումը:

- Բաժնետիրական ընկերությունները կապիտալակենտրոն, ներդրողամետ և ներդրումային հարաբերություններով պայմանավորված ընկերություններ են: Կոոպերատիվները մարդակենտրոն, անդամ-օգտագործողից բխող և անդամների հետ գործարքային հարաբերություններով պայմանավորված ընկերություններ են: Բացի բաժնետիրոջ և բաժնետիրական ընկերության միջև և կոոպերատիվի ու իր անդամի միջև փոխհարաբերությունների էական տարբերությանը, էպես տարբերվում է նաև այդ հարաբերությունների հիմնական բովանդակությունը: Բաժնետեր-ներդրողը կարող է լինել բաժնետիրական ընկերության ապրանքների կամ ծառայությունների գնորդը կամ օգտվողը: Կոոպերատիվների դեպքում սա շատ կարևոր և կառուցվածքային տարր է: Անդամները կոոպերատիվի ծառայությունների հիմնական օգտագործողներն են:
- Բաժնետիրական ընկերությունների շարժիչ ուժը շահույթն է, և դրանք փորձելու են առավելագույն հատույց ապահովել ներդրված կապիտալից: Կոոպերատիվները, որպես տնտեսական կազմակերպություններ, նույնպես պետք է ապահովեն դրական տնտեսական արդյունք: Սակայն դրանց նպատակը ոչ թե հենց այդ դրական արդյունքի ապահովումն է,

⁷Տես ILO R.193, paragraphs 4(h), 5, 8(2), (b).

այլ դրա միջոցով իրենց անդամների ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքների բավարարումը: Ինչպես արդեն նշել ենք, կոոպերատիվների դրական տնտեսական արդյունքը բաժանվում է 2 կոնկրետ մասերի՝ ոչ անդամներից ստացված շահույթ և անդամներից ստացված ավելցուկ: Շատ երկրների օրենսդրության մեջ, օրինակ՝ լատինաամերիկյան երկրներում 2008թ. ընդունված «Լեյ Սարկոն» (կոոպերատիվների մոդելային օրենք) անդամների հետ գործարքների միջոցով ձևավորված շահույթը որակում է որպես “acto cooperativo”, այսինքն կոոպերատիվ գործարք, իսկ մնացած գործարքները՝ առևտրային գործարք:⁸

- «Շահույթի» և «ավելցուկի» տարբերությունն ոչ միայն այն է, թե ինչպես են դրանք ստացվել, այլև այն, թե ինչպես են բաշխվելու: Բաժնետիրական ընկերությունները շահույթը բաշխում են ըստ ներդրված կապիտալի համամասնության: Կոոպերատիվները շահույթը չեն բաշխում և ուղղում են անբաժանելի ֆոնդերի համալրմանը: Կոոպերատիվները եթե բաշխում են, ապա բաշխում են ավելցուկի մի մասը, այն էլ՝ անդամների մասնակցության համամասնությամբ (տես ԿՄԱ 3-րդ սկզբունքը):
- Բաժնետիրական ընկերության կառավարումը կենտրոնանում է կապիտալ ներդրումների և ընկերության աճի վրա: Կոոպերատիվներում կառավարումը կենտրոնանում է անդամների վրա: Կոոպերատիվը պետք է ծառայի ոչ միայն ներկա, այլև ապագա անդամների կարիքներին, ուստի սա է պատճառը, որ կոոպերատիվի կապիտալի հիմնական մասը՝ պահուստային ֆոնդը, անբաժանելի է և համարվում է «փականքի տակ»: Շատ երկրներում այս ֆոնդերը անդամների միջև չեն բաժանվում նույնիսկ կոոպերատիվի լուծարման ժամանակ և ուղղվում են կոոպերատիվ շարժման զարգացմանը կամ համայնքային ծրագրերի իրականացմանը:

Իհարկե, վերոնշյալը տարբերությունների ընդհանուր առանձնահատկություններն էին, իսկ իրականում այդ տարբերությունները ավելի խորն են:

Ազգային օրենսդիրների համար ԿՄԱ-ի հռչակագրի, Ա193-ի և ՄԱԿ-ի ուղեցույցի պարտավորեցնող ուժը շատ է քննարկվել: ԿՄԱ-ն միջազգային ոչ կառավարական կազմակերպություն է, որի որոշումները պարտադիր չեն անդամ երկրների համար: ՄԱԿ-ի ուղեցույցը կոնվենցիաների ու ժ չունի, իսկ Ա193-ը ծառայում է որպես ուղեցույց անդամ երկրների համար և կրկին կոնվենցիաների ուժը չունի: Սակայն անդամ երկրները հաշվետու են ԱՄԿ-ի Կոնվենցիաների և առաջարկությունների կիրարկման փորձագետների հանձնաժողովին: Այն տեսակետները, որ վերոնշյալ փաստաթղթերը չունեն իրավական ուժ, արդեն հնացած են և վիճելի, քանի որ՝

- Միջազգային կազմակերպությունների առաջարկությունները և բանաձևերը կարող են համարվել հանրային, միջազգային իրավունքի աղբյուր, չնայած դրանք նշված չեն Միջազգային արդարադատության դատարանի կանոնադրության 38-րդ հոդվածում:⁹
- Այն փաստը, որ Ա193-ը ընդունվեց որպես առաջարկություն, այլ ոչ թե կոնվենցիա, ընդհանրապես չի նվազեցնում առաջարկության իրավական արժեքը, քանի որ ԱՄԿ սահմանադրության 19-րդ և 30-րդ հոդվածները, ինչպես նաև ԱՄԿ-ի Կոնվենցիաների և առաջարկությունների կիրարկման փորձագետների հանձնաժողովի հրամանագրերի 7-րդ հոդվածը չեն տալիս այդպիսի մեկնաբանություն:¹⁰
- ԱՄԿ-ն կոոպերատիվների չափորոշիչներ մշակելու սահմանադրական մանդատ ունի: ԱՄԿ-ի մանդատը չի սահմանափակվում միայն աշխատուժին վերաբերող օրենսդրական հարցերով:¹¹
- Ա193-ը ընդունվել է ճնշող մեծամասնությամբ, իսկ ՄԱԿ-ի ուղեցույցը՝ լիակատար համաձայնությամբ:

⁸Տես www.aciamericas.coop Ley-Marco.

⁹Տես Henry's Guidelines, page 47.

¹⁰Տես ILO Constitution.

¹¹Տես Standing Orders of the ILC, also 2010 General Survey concerning employment instruments in the light of the 2008 ILO Declaration on Social Justice for a Fair Globalization.

- ԿՄԱ-ի կոոպերատիվների ինքնության հռչակագրով սահմանված կոոպերատիվների արժեքները և սկզբունքները, ինչպես նաև կոոպերատիվների սահմանումը կազմում են Ա193-ի ամբողջական մասը (հոդված 2, 3 և հավելված), իսկ ՄԱԿ-ի ուղեցույցը հղում է կատարում «կոոպերատիվների սկզբունքներին և արժեքներին» (հոդված 4):
- ԱՄԿ բազմաթիվ անդամ երկրներ արդեն ընդունել են համապատասխան օրենքներ՝ հաշվի առնելով Ա193-ը:¹²
- Ա193-ը կոնկրետացնում է կոոպերատիվներին վերաբերող մարդու իրավունքների պարտադիր (պարտավորեցնող) գործիքները, որոնք պարունակում են բոլոր նախադրյալները կոոպերատիվների օրենսդրության համար:
- Բազմաթիվ վերին ատյանի դատարաններ իրենց որոշումներում բազմիցս հղումներ են կատարել Ա193-ին և կոոպերատիվների սկզբունքներին:¹³

Կոոպերացիայի գաղափարի և ինքնության ընկալումը նախկին Խորհրդային Միության երկրներում

Համաձայն միջազգային կոոպերատիվ չափորոշիչների, կոոպերատիվների բոլոր տեսակներն ու ձևերը, սկսած ծառայություններ մատուցող կոոպերատիվներից մինչև արտադրական կոոպերատիվներ, սահմանվում են նույն չափորոշիչներով և երկրների մեծ մասում կարգավորվում են մեկ, համընդհանուր օրենքով: Կոոպերատիվ հանրություններն ունեն նույն ընդհանուր նպատակները, անդամակցության նույն իրավունքներն ու պարտականությունները, նույն կազմակերպական և ֆինանսական կառուցվածքը և հետևում են նույն կանոններին: Հիմնական տարբերությունն այն է, որ ծառայություններ մատուցող կոոպերատիվներում **սեփականատերերն ու օգտագործողները** նույն անձինք են, իսկ արտադրական (կամ արտադրողների) կոոպերատիվներում էլ նույն անձինք են **սեփականատերերն ու աշխատողները**: Այս նկատառումները կարևորվում են կոոպերացիայի գաղափարի ընկալման տեսակետից, որի անհրաժեշտությունը շարունակում է հրատապ մնալ նախկին Խորհրդային Միության երկրներում՝ ներառյալ Հայաստանում:

Խորհրդային Միությունում կոոպերատիվներ զարգացնելու Լենինի 1923թ. պլանը հիմնված էր կոոպերացիայի գաղափարի՝ որպես քաղաքական գործիքի, վրա: ԽՍՀՄ-ում կոոպերատիվների առաջադրանքն ու նպատակն էր ծառայել որպես կենտրոնացված պլանային պետական տնտեսության գործիք: Կոոպերատիվների դերն էր օգնել արտադրամիջոցների մասնավոր սեփականությունը վերափոխելու պետական սեփականության և մասնավոր ձեռնարկությունները՝ պետության կողմից վերահսկվող կոլեկտիվ ձեռնարկությունների կամ պետական ձեռնարկությունների՝ ելնելով «Այն, ինչ չենք կարող ազգայնացնել, կկոոպերացնենք» նշանաբանից: Սպառողական կոոպերատիվները համարվում էին կոմունիստական կուսակցության զանգվածային կազմակերպություններ, որոնք հետապնդում էին տնտեսական և սոցիալական նպատակներ: Այսօր, քիչ բացառություններով (Հյուսիսային Կորեա, Կուբա) սոցիալիստական տիպի կոոպերատիվ հանրությունները դադարել են գոյություն ունենալուց: Սակայն Սառը պատերազմի ավարտից հետո, սոցիալիստական կոլեկտիվների և պետական ձեռնարկությունների վերափոխումը շուկայամետ մասնավոր ձեռնարկությունների և ծառայություններ մատուցող կոոպերատիվների, պարզվում է, շատ ավելի դժվար գործընթաց է, քան կարելի էր կարծել, հատկապես՝ նախկինում ԽՍՀՄ մաս կազմած պետություններում, մասնավորապես՝ ասիական պետություններում:

Ըստ հիմնական հայեցակարգի, կենտրոնացված պլանային սոցիալիստական տնտեսության մաս կազմող կոոպերատիվները տարբերվում են շուկայական տնտեսության պայմաններում աշխատող

¹² Կամբոջիա, Ղազախստան, Նորվեգիա, Տանզանիա, Թուրքիա, Ուրուգվայ, Ուզանդա:

¹³ Stu Henry's Guidelines, Page 51.

և առաջխաղացման կողմնորոշում ունեցող բիզնես կազմակերպություններ հանդիսացող կոոպերատիվներից: Սոցիալիստական կոոպերատիվները բաժանված էին **արտադրական կոոպերատիվների**, որոնք դասակարգվում էին իբրև առևտրային կազմակերպություններ և **սպառողական կոոպերատիվների**, որոնք դասակարգվում էին իբրև ոչ առևտրային կազմակերպություններ: Երկուսն էլ իրականացնում են ձեռնարկչական գործունեություն՝ այն նպատակներին հասնելու համար, որոնց համար դրանք ստեղծվել են: Համաձայն սոցիալիստական գաղափարի, կոոպերատիվ կազմակերպություններն ունեն քաղաքական, տնտեսական և սոցիալական գործառույթներ, իսկ շուկայական տնտեսության պայմաններում գործող կոոպերատիվներն ունեն հիմնականում տնտեսական գործառույթներ, որոնց հետամուտ են արժեքների վրա հիմնված կառավարման միջոցով: Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում սոցիալիստական անցյալի ժառանգության հետ ինչպես վարվելու հարցը շարունակում է խնդրահարույց մնալ: Երկրների մեծ մասում կոոպերատիվները դեռևս հարկադրված են պայքարել սոցիալիստական անցյալի բացասական իմիջի դեմ: Օրենսդիրների համար հիմնախնդիրը եղել և որոշ դեպքերում շարունակում է մնալ կոոպերատիվ բնույթի ինքնավար և ինքնօգնող կազմակերպությունների համար օրենսդրական դաշտ ստեղծելը, որոնք սպասարկում են իրենց անդամների տնտեսական և սոցիալական շահերը շուկայական տնտեսության նոր միջավայրում:

Առ այսօր, կոոպերատիվների համար ստեղծված օրենսդրական դաշտը ուղղակիորեն կրում է քաղաքական ասպարեզում առկա երկիմաստությունների և հակասությունների ազդեցությունը, օրինակ՝ տարբեր հայեցակարգերի վրա հիմնված միևնույն օրենքի առկայությունը, նույն եզրույթները տարբեր իմաստներով օգտագործելը, կիսատ-պռատ բարեփոխումներն՝ առանց հիմնականակարգումներից հստակորեն հրաժարվելու և առանց կոոպերատիվների համար այլ ձեռնարկությունների հետ իրավահավասար դաշտ ստեղծելու: Մյուս կողմից, արմատական փոփոխություններն էլ, ինչպիսիք տեղի ունեցան Լեհաստանում և Չեխիայում, ավելի շատ վնաս պատճառեցին, քան օգուտ:

Չեխիայում անցումային փուլում երեք քայլ կատարվեց. վերացվեց պետական վերահսկողությունը. վերահաստատվեցին անդամների իրավունքներն ու կարգավորիչ սեփականությունը, այն է՝ կոլեկտիվացված ամբողջ ունեցվածքի վերահանձնումը նախկին տերերին, նույնիսկ եթե խոսքը վերաբերում էր մեծ կոլեկտիվ ձեռնարկությունների մասնատմանը՝ առանց դույզն-ինչ հնարավորություն թողնելու այլընտրանքային աշխատող տարբերակների համար. և վերափոխված ձեռնարկությունների վերագրանցումը որպես կոոպերատիվներ կամ իրավաբանական այլ ձևեր:

Այլ երկրներում կիրառվեցին անցման ավելի մեղմ մեթոդներ: **Հունգարիայում** 1981թ. փոքր կոոպերատիվների մասին օրենքի ընդունումից հետո կոոպերատիվների մասին նոր օրենքը ընդունվեց 1992թ.-ին, միաժամանակ ընդունելով այդ նոր օրենքի կիրարկումն ապահովող օրենք՝ մասնավոր սեփականության հիման վրա: Սոցիալիստական կոլեկտիվները վերափոխվեցին մասնավոր սեփականության վրա հիմնված կոլեկտիվների, որոնց պարտադրվում էր իրենց միջոցները հատկացնել իրենց անդամներին բաժնեչափերի (քվոտաների), այսինքն՝ փոխանցելի «բիզնես բաժնեմասերի» տեսքով: Անդամներին վերապահվեց նախապատվության իրավունք, միաժամանակ նրանց հատկացնելով տարեկան շահութաբաժինները, բայց՝ ոչ անդամներին ձայնի իրավունք չէր տրվում: Այս բարեփոխումը մասամբ ծառայեց ապօրինի մասնավորեցմանը՝ փոքր ընտանեկան ֆերմերային տնտեսությունների կամ ընկերությունների հիմնադրման տեսքով:

Ռումինիայում փորձ արվեց վերականգնել 1897թ.-ի հին Առևտրային օրենսգիրքը, որը բովանդակում էր կանոնակարգեր կոոպերատիվների մասին (հոդվածներ 221-235): Բայց ի վերջո նոր օրենքներ ընդունվեցին 1990-ին և 1991-ին:

Ռուսաստանի Դաշնության Քաղաքացիական օրենսգիրքը բովանդակում է դրույթներ արտադրական կոոպերատիվների և սպառողական կոոպերատիվների մասին: Հատուկ կոոպերատիվների մասին օրենքներ ընդունվեցին սպառողական կոոպերատիվների համար (1992), արտադրական կոոպերատիվների (1995) և գյուղատնտեսական արտադրական

կոոպերատիվների մասին (1995): 1992-ից առաջ ձևավորված կոոպերատիվ կազմակերպությունները հարկադրված էին վերագրանցվել ըստ նոր օրենքի և համապատասխանեցվեցին օրենքի դրույթներին:

Նախկին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ասիական երկրներում լուրջ խնդիր է նախկին կոլտնտեսությունների և պետական ձեռնարկությունների վերակազմավորումը շուկայամետ կազմակերպությունների և կոոպերատիվների վերաբերյալ օրենսդրության արդիականացումը՝ ԿՄԱ-ի սկզբունքներին և ՄԱԿ-ի ուղեցույցին համապատասխան: Բարեփոխիչները շարունակում են պայքարել սոցիալիստական անցյալի ստվերոտ կողմերի դեմ:

Օրինակ, **Տաջիկստանի Հանրապետության** Քաղաքացիական օրենսգրքում (ՔՕ, Հոդ. 50, Մաս 1)¹⁴ արտադրական կոոպերատիվները դասակարգված են որպես առևտրային կազմակերպություններ, իսկ սպառողական կոոպերատիվները՝ որպես ոչ առևտրային կազմակերպություններ, դրանով իսկ սպառողական կոոպերատիվները դնելով նույն կատեգորիայի ներքո, ինչ կրոնական կազմակերպությունները, համայնքային ու բարեգործական նպատակներով ստեղծված հիմնադրամները: Կոոպերատիվների խորհրդային հայեցակարգի համաձայն, սպառողական կոոպերատիվները պետության կողմից վերահսկվող և կուսակցական գերիշխանություն ունեցող համակարգի մաս էին կազմում և դիտվում էին որպես կուսակցության զանգվածային կազմակերպություններ: Դրանց նպատակները ներառում էին ոչ միայն քաղաքացիներին սպառողական ապրանքներ մատակարարելը, այլև զանազան սոցիալական ծառայություններ առաջարկելը, ինչպիսիք են երեխաների և տարեցների խնամքը, հյուրանոցները, հանգստյան տները և այլն:

Շուկայական տնտեսությունում սպառողական կոոպերատիվները ծառայություններ մատուցող կոոպերատիվներ են, որոնց առաջնային նպատակն է մատուցել ծառայություններ՝ հիմնականում իրենց անդամներին նպաստավոր պայմաններով բարձրորակ սպառողական ապրանքներ վաճառելու տեսքով, և իրենց անդամների հետ իրականացված գործարքներից ստացված ավելցուկային գումարը որպես պատրոնաժային վերաֆինանսավորում վերադարձնել իրենց՝ ըստ անդամների և կոոպերատիվ ձեռնարկության կողմից իրականացված բիզնեսի համամասնության:

Եվս մեկ խնդիր է առաջացնում *«ձեռնարկչական գործունեություն»* եզրույթը, որը սահմանվում է որպես անկախ գործունեություն, որն ուղղված է կանոնադրությամբ սահմանված կարգով (Տաջիկստանի ՔՕ, Հոդ. 1, Մաս 3) գրանցված անձանց կողմից գույքի օգտագործումից, ապրանքների վաճառքից, աշխատանքի կատարումից, ծառայության մատուցումից սիստեմատիկ շահույթի ստացմանը: «Շահույթ» բառի օգտագործումն այս սահմանմամբ կարիք ունի մեկնաբանման, երբ կիրառվում է կոոպերատիվ կազմակերպությունների առումով: Բոլոր գրանցված կոոպերատիվ կազմակերպությունները շուկայում տնտեսական գործարքներ իրականացնող իրավաբանական անձինք են: Դրանք աշխատում են որպես անկախ խաղորդներ, որոնք դիմում են ռիսկի՝ ծախսերը գերազանցող եկամուտ ստանալու ակնկալիքով: Դրանք իրականացնում են ձեռնարկչական գործունեություն՝ հասնելու համար այն նպատակին, որի համար ստեղծվել են՝ նպաստել օգտագործողներ կամ աշխատողներ հանդիսացող իրենց անդամների տնտեսական և սոցիալական շահերին՝ վերջիններիս ծառայություններ մատուցելով համատեղ սեփականություն հանդիսացող և իրենց իսկ վերահսկողության տակ գտնվող ձեռնարկության միջոցով: **Դրանց հիմնական նպատակը կապիտալի սեփականատերերի կամ բաժնետերերի միջև բաշխման ենթակա շահույթներ ունենալը է:**

Ոչ սպառողական կոոպերատիվների և ոչ էլ արտադրական կոոպերատիվների համար շահույթը հիմնական նպատակը է: Շուկայում գոյատևելու համար դրանք պետք է վաստակեն ավելին, քան ծախսում են, այն է՝ ֆինանսական տարվա ավարտին ունենան ավելցուկային եկամուտ: Դրանց եկամուտները գոյանում են մասամբ շուկայի իրենց գործընկերների և հաճախորդների հետ գործարքներից: Այս ավելցուկն անհրաժեշտ է կոոպերատիվի, որպես ծառայություն մատուցող

¹⁴Stu Muenkner, 2012.

կազմակերպության, ծախսերը ծածկելու համար՝ հասնելու այն նպատակին, որի համար կազմակերպությունը ստեղծվել է: Կոոպերատիվ կազմակերպությունների հիմնական գործունեությունը և գլխավոր նպատակն է ծառայություն մատուցել իրենց անդամներին՝ նպաստավոր պայմաններով (ինքնարժեքին մոտ) կամ - արտադրողների կոոպերատիվների դեպքում – իրենց անդամներին առաջարկել անվտանգ և լավ վարձատրվող աշխատատեղեր: Կոոպերատիվների՝ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների տարաբաժանումը անհրաժեշտ է վերանայել՝ ելնելով այսօրվա պայմաններից: Կոոպերատիվ ձեռնարկությունների ձեռնարկչական գործունեությունը, լինելով ավելի շատ ծառայությունների մատուցման կողմնորոշում ունեցող, քան շահույթ հետապնդող ձեռնարկություններ, պետք է ճանաչվի օրինական, ներառյալ տարեկան ավելցուկային եկամտի բաշխումը կոոպերատիվի անդամների միջև՝ պատրոնաժի տեսքով, կոոպերատիվի անդամների հետ կատարած բիզնես գործարքների համամասնությամբ (ծառայություններ մատուցող կոոպերատիվների դեպքում) և համատեղ սեփականություն հանդիսացող ձեռնարկության համար կատարած աշխատանքի համամասնությամբ (արտադրողների կոոպերատիվների դեպքում):

Ընդհանուր առմամբ, կոոպերատիվների ընկալման վերոնշյալ խնդիրները առկա են նաև Հայաստանում: Կոոպերատիվների վերաբերյալ ՀՀ օրենսդրական դաշտը դեռևս կրում է երկիմաստությունների և հակասությունների ազդեցությունը, նույն եզրույթները տարբեր իմաստներով օգտագործելը և կիսատ-պռատ բարեփոխումների ազդեցությունը:

Կոոպերատիվ շարժման ներկա վիճակը Հայաստանում. Կոոպերատիվների ինքնության ընկալումը

Հայաստանի ագրոպարենային ոլորտի առջև ներկայումս ծառայած խնդիրների բնույթը ակնհայտ է դարձնում, որ գյուղատնտեսության և ագրոբիզնեսի հաջող զարգացումը էապես պայմանավորված է կոոպերատիվների արմատավորմամբ և զարգացմամբ: Շուկայական հարաբերությունների պայմաններում կոոպերացիան կարող է համակարգել տարբեր գործառնություններ ինչպես գյուղմթերքի արտադրության, այնպես էլ սպասարկումների, իրացման և մատակարարման ոլորտներում: Կոոպերացիայի գաղափարի իրականացումը պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտում մշված այնպիսի խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, ինչպիսիք են գյուղմթերքի իրացման դժվարությունները, տեխնիկայի, վառելանյութերի, պարարտանյութերի և այլ ռեսուրսների ոչ մատչելիությունը:

Բազմաթիվ միջազգային և պետական ծրագրեր և միջոցառումներ միտված են եղել խթանելու կոոպերատիվների զարգացումը ՀՀ-ում:

1993թ.-ից սկսած, առաջնորդվելով կամավորության և ինքնավարության սկզբունքներով, որոշակի քանակությամբ տեղական և տարածաշրջանային կազմակերպություններ, ասոցիացիաներ գրանցվեցին, որոնք սակայն, հետագայում չգործեցին:

ՀՀ-ում կոոպերատիվ շարժումը կարելի է ներկայացնել 3 փուլով:

Փուլ 1: 1993-1999թթ.(հիմնականում կառավարության հորդորներից բխող)

1994թ. կազմակերպվեց Հայ ֆերմեր ասոցիացիան, որի կազմում ընդգրկվեցին հիմնականում գյուղացիական տնտեսություններ, և քանի որ այդ տնտեսությունները տարաբնույթ էին, այդ ասոցիացիան երկար չգործեց և դադարեցրեց իր գործունեությունը: 1995թ. ստեղծվեց Հայաստանի գյուղացիական միություն հասարակական կազմակերպությունը: 1998թ.-ին ստեղծվեց Ֆերմերների ազգային միությունը: 2004 թ.-ին միությունը վերանվանվեց Ֆերմերների ազգային միավորումի:

90-ականների վերջերին կազմակերպվեցին մոտ 400 ոռոգման ջուր օգտագործողների սպառողական կոոպերատիվներ, որոնք ոռոգման ջուր էին մատակարարում առանձին համայնքների ֆերմերներին: Այս կազմակերպությունների մեծ մասը լուծարվեց 2002թ. «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի¹⁵ ընդունումից հետո, երբ տվյալ գործառույթը իրականացնելու համար ստեղծվեցին ջրօգտագործողների ընկերություններ: Ներկայումս Հայաստանում գործում են 44 ջրօգտագործողների ընկերություններ:

Այս փուլում ֆերմերների մտածելակերպի, կոոպերատիվների ինքնության և սկզբունքների մասին թյուր պատկերացումների, կոոպերատիվի կառավարմանը, ինչպես նաև տնտեսական գործունեությանը անդամների մասնակցության բացակայության կամ պասիվ մասնակցության պատճառով այս կազմակերպությունների մեծ մասը փակվեց:

Փուլ 2: 2000-2010թթ. (հիմնականում դոնորային ծրագրերից բխող)

Երկրորդ փուլի առանձնահատկությունն այն է, որ ՀՀ-ում բազմաթիվ միջազգային զարգացման կազմակերպություններ սկսեցին իրենց ծրագրերը իրականացնել կոոպերատիվների հիմնադրմամբ կամ դրանց միջոցով: 2001թ.-ից ստեղծվեցին «գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվներ: 2001թ.-ից ԱՄՆ գյուղտնտեսության Մարկետինգի աջակցության ծրագրի ֆինանսատնտեսական օժանդակությամբ ստեղծվեցին 50 վարկային ակումբներ: Մինչև 2005թ. այս ակումբները ունեին մոտ 900 անդամներ և դրանց պորտֆելը հասնում էր 1.5 միլիոն ԱՄՆ դոլարի, որից մոտ 500000-ը ակումբների սեփական ֆոնդերն էին: Այս ակումբների մեծ մասը ներկայումս լուծարված են: Պատճառների վերաբերյալ տարբեր կարծիքներ են հնչում. մի կողմից՝ ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի աջակցության դադարեցումը, մյուս կողմից՝ ՀՀ Կենտրոնական բանկի վերահսկողության տակ հայտնվելը: Նշենք, որ «Գյուղատնտեսական վարկային ակումբների» մասին ՀՀ օրենքը գործում է մինչ օրս, ընդ որում բավականին լավ մշակված, կոոպերատիվների ինքնությանը վերաբերող ցայտուն տարրեր պարունակող օրենք է:

ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի աջակցությամբ 2001թ.-ից ստեղծվեցին կաթի մարկետինգային սպառողական կոոպերատիվներ: 2001թ.-ին ստեղծվեց Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա իրավաբանական անձանց միությունը՝ 8 ֆերմերային կազմակերպությունների նախաձեռնությամբ: Ներկայումս ասոցիացիայի կազմում ընդգրկված է 22 սպառողական կոոպերատիվ ՀՀ 6 մարզերից: Բազմաթիվ դոնոր ծրագրերի շրջանակներում ԳԱՖ-ը իրականացրել է սպառողական կոոպերատիվների կարողությունների հզորացման ծրագրեր, ուսուցումներ, խորհրդատվություն, լոբբինգ և այլն:

2007թ.-ի փետրվարի 21-ին, ԱՄՆ ԳԴ աջակցությամբ հիմնադրվեց Ֆարմ Կրեդիտ Արմենիա ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվը, որը Հայաստանում գործող առաջին միակ ֆինանսական կոոպերատիվն է: Այն ստեղծել են 57 ֆերմերներ: 2007թ.-ի սեպտեմբերի 18-ին ՀՀ ԿԲ-ի կողմից այն գրանցվեց որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվ: Ֆարմ Կրեդիտ Արմենիան ընդգրկված է ՀԱՀ-Հայաստանի Ջրից դեպի շուկա ծրագրի վարկային բաղադրիչի, Համաշխարհային բանկի (ՎԵԲ) «ՓՄՁ ֆինանսական միջոցների հասանելիություն» վարկային ծրագրի (իրականացվում է Գերմանահայկական հիմնադրամի կողմից), ինչպես նաև Գյուղատնտեսության զարգացման միջազգային ֆոնդի (IFAD) վարկային ծրագրերում: Ֆարմ Կրեդիտ Արմենիա ՈւՎԿ առևտրային կոոպերատիվը ՀՀ տարածքում իրականացնում է գյուղատնտեսությամբ զբաղվող և գյուղատնտեսական մթերքի վերամշակում իրականացնող, ինչպես նաև այլ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկավորում: Կազմակերպությունը տրամադրում է 4 հիմնական տեսակի ֆինանսական պրոդուկտներ՝ գյուղատնտեսական վարկեր, ագրոբիզնեսի վարկեր, ՓՄՁ վարկեր և գյուղատնտեսական

¹⁵Այս օրենքին կանդիդատնամբ հաջորդ բաժիններում:

տեխնիկայի ֆինանսական վարձակալություն (լիզինգ): 2012թ. տարեկերջյան տվյալներով Ֆարմ Կրեդիտ Արմենիա ՈւՎԿ ԱԿ անդամ-փայատերերի թիվը կազմում է ավելի քան 2300: Կազմակերպությունն ունի 4 մասնաճյուղ¹⁶:

Մի շարք դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվեցին ծրագրեր և այդ ծրագրերի շրջանակներում աջակցություն տրամադրվեց կոոպերատիվների ստեղծմանը: Օր.՝ ԱՄՔՈՐ-ի հայաստանյան գրասենյակի միջոցներով 1999-2003թթ. իրականացվեց Համայնքային ասոցիացիաների ծրագիր (CAP), որի շրջանակում ստեղծվեցին 7 կոոպերատիվներ, 2003-2006թթ. ֆերմերային կազմակերպություններին օժանդակող ծրագիր (FOSPA) - 6 կոոպերատիվ, 2009-2011թթ. Կոոպերատիվ կազմակերպությունների կայունությունը գյուղատնտեսության զարգացման նպատակով (SCEAD) ծրագրի շրջանակում - 14 կոոպերատիվ: Վերջինիս շրջանակում կոոպերատիվները ստացան էժան վարկեր մեծ քանակությամբ գյուղատնտեսական ներդրանքների զննման նպատակով: Ծրագրի գործընկեր կոոպերատիվները նաև ստացան կառավարման և մարկետինգային ուսուցումներ և խորհրդատվություն:

2011թ. ՕՔՄՖԱՄ-ի հայաստանյան գրասենյակը իրականացրեց «Փոքր ֆերմերների բարեկեցություն» ծրագիրը, որի շրջանակում 10 գյուղատնտեսական կոոպերատիվներ հիմնադրվեցին, 3 սառնարանային և հավաքման կենտրոններ հիմնադրվեցին թիրախային համայնքներում, որի կառավարումը հանձնվեց նորաբաց կոոպերատիվներին: Նմանօրինակ ծրագրեր ներկայումս նույնպես իրականացվում են ՕՔՄՖԱՄ-ի կողմից:


Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունն իր տեղական տնտեսական զարգացման բաղադրիչով նույնպես աշխատում է կոոպերատիվների հետ: Մասնավորապես Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում կազմակերպության աջակցությամբ 10 սպառողական կոոպերատիվներ ստեղծվեցին՝ նպատակ ունենալով կոոպերատիվների միջոցով տնտեսական զարգացման ծրագրեր իրականացնել թիրախային համայնքներում:

Բացի վերը նշված կազմակերպություններից, կոոպերատիվների զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր են իրականացրել նաև տեղական հասարակական կազմակերպությունները՝ մեծ մասամբ դոնորային ծրագրերի շրջանակներում (օր.՝ Կանաչ արահետ, Շեն և այլն):

Ուսումնասիրելով մոտ 73 սպառողական կոոպերատիվների տվյալները, կարելի է եզրակացնել, որ ստեղծված կոոպերատիվների ավելի քան 75 տոկոսը ստեղծվել է որևիցե դոնորային ծրագրի շրջանակում և այդ դոնորների ակտիվ միջամտությամբ: Գծանկարից երևում է, թե որ դոնոր կազմակերպություններն են հիմնականում իրականացրել տնտեսական զարգացման ծրագրեր կոոպերատիվների հիմնադրմամբ և/կամ դրանց միջոցով: Ուրախալի է տեսնել, որ այս ցանկում կան նաև սեփական նախաձեռնությամբ ստեղծված կոոպերատիվներ: Բայց հաշվի առնելով այն փաստը, որ այս ժամանակահատվածում բավականին ակտիվ էին դոնոր կազմակերպությունները և առկա էր կոոպերատիվներին հատկացվող բազմապիսի օգնություն, ուստի մեծ հաշվով այս կոոպերատիվները ստեղծվում էին առկա դոնորական «կարկանդակից» իրենց փայլ ստանալու ակնկալիքով, այլ ոչ թե ֆերմերների կողմից հստակ սահմանված և ընդունված կոոպերատիվի ռազմավարության և բիզնես ծրագրի համաձայն:

¹⁶www.fca.am

Գծանկար 1. ՀՀ-ում կոոպերատիվներին աջակցող հիմնական դոնոր կազմակերպությունները:



Աղբյուրը՝ հեղինակի:

Փաստորեն այս փուլում մասնակի հաջողություններ գրանցվեցին դոնորային ծրագրերի, միջազգային կազմակերպությունների տեխնիկական և ֆինանսական օժանդակության շնորհիվ:

Երկրորդ փուլում պատկերը նույնն էր, ինչ առաջին փուլում. կոոպերատիվների արագ հիմնադրում դոնոր ծրագրի պահանջով, առանց կոոպերատիվների մասին հստակ պատկերացում տալու պոտենցիալ անդամներին, կոոպերատիվների սկզբունքների ու արժեքների մասին թյուր պատկերացումներ, կառավարման որոշումների ընդունման գործընթացներին անդամների մասնակցության բացակայություն կամ թույլ մասնակցություն և այլն:

Օրինակ, կաթի մարկետինգային կոոպերատիվների անդամ մոտ 300 ֆերմերների շրջանում 2007թ.-ին անցկացված հարցումները ցույց տվեցին, որ հարցվողների մոտ 25 տոկոսն էր համաձայն այն պնդմանը, որ իրենք կոոպերատիվի օգտագործող-սեփականատերեր են, իսկ որպես օգտագործող-վերահսկողներ իրեն տեսնում էր անդամների 28 տոկոսը:¹⁷ Կոոպերատիվի տնտեսական նախաձեռնություններին իրենց միջոցներով մասնակցում էին էլ ավելի քիչ անդամներ:

Երկրորդ փուլում ձևավորված կոոպերատիվների մեծամասնությունը դադարեց գոյություն ունենալ դոնորային ծրագրերի ավարտից հետո կամ գոյություն ուներ միայն թղթի վրա:

Այսպիսով, առ այսօր, կոոպերատիվները մնում են թերզարգացած և հեռու են գյուղատնտեսական արժեքային շղթաների լիարժեք մասը համարվելուց: Պատճառները, որոնք խանգարում են կոոպերատիվներին հասնել հաջողության՝ տարաբնույթ են, որոնք, սակայն, կարելի է դիտարկել

¹⁷ Melkonyan, Khachatryan, Arakelyan, Pogosyan (2008). Dairy Cooperatives' development constraints in transition countries. Analysis of Basic Cooperative Principles (Armenian Dairy Sector Case).

իրավական, տնտեսական, տեղեկատվական, երբեմն նաև սոցիալ-հոգեբանական հարթություններում:

Փուլ 3: 2010-2020թթ. (ռազմավարական ծրագրերից բխող)

Առաջին անգամ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մեծապես կարևորեց ֆերմերային կազմակերպությունների և կոոպերատիվների դերը իր ռազմավարական ծրագրերում և այն ամրագրեց «2010-2020թթ. Գյուղատնտեսության և գյուղի զարգացման կայուն ռազմավարության» մեջ¹⁸:

Մասնավորապես 2-րդ գլխի առաջին կետում ասվում է. «Ագրարային բարեփոխումների և տնտեսության շուկայական կողմնորոշման հետևողական խորացման և ագրարային հատվածի առանձնահատկություններով պայմանավորված՝ պետական աջակցության արդյունքում գյուղի և գյուղատնտեսության զարգացման տեսլականն է ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների, կոոպերատիվների և շուկայական ենթակառուցվածքների հետ ինտեգրված ընտանեկան գյուղացիական տնտեսությունների զարգացումը»: Իսկ 4-րդ գլխի 2-րդ կետում նշված է. «Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության հիմնական խնդիրներն են ագրարային բարեփոխումների խորացումը և գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը»: 5-րդ գլխում մեծածավալ անդրադարձ է կատարված գյուղատնտեսական կոոպերատիվներին, որը վկայում է դրանց կարևորության մասին:

Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկում առանձնացված են Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանն ու զործունեության խթանմանն ուղղված միջոցառումներ:

Պետական ծրագրերից է Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության (CARMAC) ծրագիրը,¹⁹ որն ունի 4 բաղադրիչ: Ծրագիրն ընդգրկված է «2010-2020թթ. Գյուղատնտեսության և գյուղի զարգացման կայուն ռազմավարության» մեջ, իրականացվելու է 5 տարվա ընթացքում՝ Համաշխարհային բանկի վարկի հաշվին և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ:

Ծրագրի շրջանակում հիմնադրվեցին համայնքային արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներ, որոնք պետք է ակտիվ մասնակցություն ունենան ծրագրում և ծրագրով նախատեսված տնտեսական և համայնքային նախագծերին: Ներկայումս 55 նման կոոպերատիվ է հիմնադրվել սկսած 2011թ.-ից:

Այս կոոպերատիվների զործունեության մասին դեռ վաղ է խոսել, քանի որ դրանք նոր են ստեղծվել: Սակայն դիտարկումները ցույց են տալիս, որ այս կոոպերատիվները նույնպես ստեղծվել են հապճեպ, ծրագրի պահանջներից ելնելով: Կոոպերատիվի անդամները թույլ պատկերացումներ ունեն կոոպերատիվի ինքնության, սկզբունքների մասին և մեր տեղեկությամբ անդամները որևէ տնտեսական ներդրում դեռևս չունեն կոոպերատիվի մեջ, իսկ կոոպերատիվի փայամասնակցային ֆոնդը ձևավորվել է սիմվոլիկ մոտեցման հիման վրա, առանց հաշվի առնելու կոոպերատիվի տնտեսական նախաձեռնությունները կյանքի կոչելու համար անհրաժեշտ երաշխիքների առկայությունը: Այսինքն, այս կոոպերատիվները նույնպես կրկնում են 2-րդ փուլում ստեղծված կոոպերատիվների սխալները, և մեծ հավանականություն կա, որ ծրագրի կամ դոնորական ֆինանսավորման դադարումից հետո այս կոոպերատիվները կարժանանան նույն ճակատագրին:

¹⁸www.minagro.am

¹⁹<http://www.arspiu.com/en/carmac>

Կոոպերատիվների վերաբերյալ ՀՀ վիճակագրությունը

2013թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում, ըստ Պետական ռեգիստրի տվյալների, գրանցված են 3737 արտադրական և 307 սպառողական կոոպերատիվներ²⁰: 2012թ. ընթացքում գրանցվել են 2 արտադրական և 41 սպառողական կոոպերատիվներ, իսկ 2011թ.՝ համապատասխանաբար 1 արտադրական և 48 սպառողական կոոպերատիվներ: Սպառողական կոոպերատիվների թվաքանակի նման կտրուկ աճը հիմնականում պայմանավորված է Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության (CARMAC) ծրագրի շրջանակում ստեղծված արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներով: 2011թ. արտադրական կոոպերատիվների ընդհանուր թիվը 4988 էր: Այսինքն, վերջին 2 տարվա ընթացքում դրանց թիվը 1251-ով կրճատվել է:

Թե իրականում քանի արտադրական կոոպերատիվ է փաստացի աշխատում, և որքան է գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների մասնաբաժինը այս թվի մեջ, դժվար է պարզել: Սակայն նշենք, որ ինչպես նախկին ԽՍՀՄ այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում, արտադրական կոոպերատիվները կրում են սոցիալիստական անցյալի ազդեցությունը, համարվում են ավելի շատ ընտանեկան փոքր բիզնեսներ, քան միջազգայնորեն ընդունված կոոպերատիվ ինքնություն և սկզբունքներունեցող կազմակերպություններ: Հաջորդիվ ավելի մանրամասն կանդրադառնանք արտադրական կոոպերատիվներին:

ՀՀ-ում ներկայումս գրանցված 307 սպառողական կոոպերատիվների քանակը ըստ մարզերի ներկայացված է աղյուսակ 1-ում:

Սպառողական կոոպերատիվներ անհամեմատ ավելի շատ են գրանցվել Արագածոտնի (10.4%), Արարատի (11.7%), Արմավիրի (12%), Գեղարքունիքի (12.4%) և Տավուշի (11.4%) մարզերում: Դա կարելի է բացատրել այդ մարզերի գյուղատնտեսական ուղղվածությամբ (հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպառողական կոոպերատիվների մեծ մասը գյուղատնտեսական է) և նշված մարզերում դրնորային գյուղատնտեսական ծրագրերի մեծ քանակով:

Գծանկար 2-ից երևում է, որ սպառողական կոոպերատիվների ընդամենը 21 տոկոսը որևէ կապ չունի գյուղատնտեսության հետ: Մնացածը այս կամ այն չափով կարելի է համարել գյուղատնտեսական:

Աղյուսակ 1. Սպառողական կոոպերատիվների քանակն ըստ մարզերի:

Մարզեր	Կոոպերատիվների քանակը
Երևան	26
Արագածոտն	32
Արարատ	36
Արմավիր	37
Գեղարքունիք	38
Լոռի	23
Կոտայք	15
Շիրակ	22
Սյունիք	20
Վայոց Ձոր	23
Տավուշ	35


Աղբյուրը՝ ՀՀ պետռեգիստր, 2013:

²⁰Համատիրություններին, որպես ոչ-առևտրային կոոպերատիվների, սույն վիճակագրության մեջ չենք անդրադարձել:

Հայաստանում գրանցված են 127 ընդհանուր բնույթի գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվներ, 22 կաթ արտադրողների սպառողական կոոպերատիվներ, 40 ոռոգման ջուր օգտագործողների սպառողական կոոպերատիվներ և 53 արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներ:

Քանի որ 2002թ. «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, ոռոգման ջրի մատակարարման գործառույթը սկսեցին իրականացնել ջրօգտագործողների ընկերությունները, 90-ականներին ստեղծված մոտ 400 համայնքային ոռոգման ջուր օգտագործողների սպառողական կոոպերատիվները լուծարվեցին: Փաստորեն դեռևս 40 նման կոոպերատիվ շարունակում է մնալ թղթի վրա.ամենայն հավանականությամբ այս կոոպերատիվները չեն գործում:

Գծանկար 2. Սպառողական կոոպերատիվները ըստ գործունեության ոլորտի:



Աղբյուրը՝ ՀՀ պետնեգիստր, 2013:

Ինչպես նշվեց, այս 53 արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվները նոր են և ստեղծվել են վերջին 2 տարվա ընթացքում: Իսկ թե մնացած 149-ից (ընդհանուր բնույթի կամ խառը գյուղատնտեսական և կաթ արտադրողների սպառողական կոոպերատիվներ) քանիսն են փաստացի աշխատում, անհրաժեշտ է պարզել ՀՀ պետականուտների կոմիտեից:

Պատճառները, որոնք խանգարում են կոոպերատիվներին հասնել հաջողության, համարվել արժեքային համակարգի լիիրավ անդամներ, ինչպես նշեցինք,բազմապիսի են: Այս պատճառների մեջ իրենց ուրույն տեղն են գրավում իրավական հարթության մեջ գտնվող պատճառները, մասնավորապես ՀՀ-ում գործող կոոպերատիվներին առնչվող օրենքները:

ՀՀ գործող օրենքները լիարժեքորեն չեն կարգավորում կոոպերատիվների ձևավորման, գործունեության և լուծարման գործընթացի հարաբերությունները և ունեն կատարելագործման ու համալրման անհրաժեշտություն:Օրենսդրական բարեփոխումները էական նշանակություն կունենան կոոպերատիվների զարգացման և կայունության համար:

Կոոպերատիվների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը

Հայաստանը չունի կոոպերատիվների վերաբերյալ մեկ, ամբողջական, համապարփակ օրենք, ինչպես ընդունված է շատ երկրներում: Կոոպերատիվների ոլորտը հիմնականում կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որի 51.3 հոդվածը նշում է, որ «կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ-առևտրային) կազմակերպություններ»: ՀՀ - քաղօրենսգրքի 117-121 հոդվածները ամբողջությամբ վերաբերում են կոոպերատիվներին²¹: 117-րդ հոդվածը վերաբերում է կոոպերատիվների հիմնական դրույթներին, որոնցով տրվում են կոոպերատիվի սահմանումը, կոոպերատիվի կանոնադրության պարունակությունը և հղումներ են արվում կոոպերատիվների առանձին տեսակների առանձնահատկություններին և իրավական վիճակը սահմանող այլ օրենքներին:

Ըստ ՀՀ քաղօրենսգրքի, «կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը»:

ՀՀ քաղօրենսգրքում, որպես կոոպերատիվների առանձին տեսակներ, նշվում են սպառողական կոոպերատիվները և համատիրությունները: Այս տեսակների առանձնահատկությունները կարգավորվում են առանձին օրենքներով՝ «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը (ընդունված 2012թ. սեպտեմբերի 11-ին²²) և «Համատիրության մասին» ՀՀ օրենքը (ընդունված 2002թ. մայիսի 7-ին²³):

Այս օրենքները վերլուծելով պարզ է դառնում, որ ըստ ՀՀ քաղօրենսգրքի և վերը նշված կոոպերատիվների առանձին տեսակների մասին օրենքների, կոոպերատիվները Հայաստանում կարող են լինել **առևտրային**, որի մեջ մտնում են նաև **արտադրական կոոպերատիվները**, որոնք ըստ 51.3 հոդվածի շահույթի նպատակ հետապնդող կազմակերպություններ են և **ոչ-առևտրային**, որի մեջ մտնում են սպառողական կոոպերատիվները և համատիրությունները, որոնք շահույթի նպատակ չհետապնդող կազմակերպություններ են: Նշենք, որ համատիրությունը, որպես ոչ-առևտրային կոոպերատիվ, հիմնականում եզակի նպատակ է հետապնդում, այն է՝ բազմաբնակարան շենքի կամ շենքերի բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարումը: Այս օրենքը, ինչպես և կոոպերատիվներին առնչվող ՀՀ մնացած օրենքները, մեծ հաշվով չեն համապատասխանում Ա193-ի և ԿՄԱ դրույթներին:

«Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը պարունակում է ընդամենը 5 հոդված: Օրենքով սպառողական կոոպերատիվը սահմանվում է որպես 5-ից ոչ պակաս անդամների կարիքներն ապրանքներով և ծառայություններով բավարարելու, նրանց շահերը ներկայացնելու և դրանք պաշտպանելու նպատակով, կամավոր հիմունքներով ձևավորված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ: Կոոպերատիվի մասնակիցներ կարող են լինել քաղաքացիները, համատեղ գործունեության պայմանագիր կնքած անհատ ձեռնարկատերերն ու գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիները: Օրենքի 3-րդ հոդվածը վերաբերում է սպառողական կոոպերատիվների միությանը: 4-րդ հոդվածը լրիվ նորություն է և կարգավորում է սպառողական կոոպերատիվների և պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները: Այս հոդվածը, իր ենթահոդվածներով, հաստատում է, որ պետությունը ճանաչում և պաշտպանում է սպառողական կոոպերատիվների օրինական շահերը, աջակցում է նրանց զարգացմանը և ինքնուրույնության ամրապնդմանը (ԿՄԱ 4-րդ սկզբունք՝ Ինքնավարություն

²¹Տես ՀՀ քաղօրենսգրքը

²²Տես «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքը

²³Տես «Համատիրության մասին» ՀՀ օրենքը

և անկախություն): Եվ վերջին հողվածը վերաբերում է սպառողական կոոպերատիվի գրանցմանը: Այս օրենքից ենթադրվում է, որ սույն օրենքով չկարգավորվող այլ հարցերը կարգավորվում են ՀՀ քաղօրենսգրքով կամ այլ իրավական ակտերով:

«Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղօրենսգրքի վերլուծությունից պարզ է դառնում, որ կոոպերատիվների գործունեության բազմաթիվ օրենսդրական տարրեր պետք է իրենց կարգավորումը ստանան կոոպերատիվների կանոնադրություններում, քանի որ այս օրենքները լիարժեքորեն չեն կարգավորում կոոպերատիվների ձևավորման, գործունեության և լուծարման գործընթացի հարաբերությունները և ունեն կատարելագործման ու համալրման անհրաժեշտություն: Ավելին, սպառողական կոոպերացիայի մասին օրենքի դրույթները չեն համապատասխանում սպառողական կոոպերատիվների մասին միջազգայնորեն ընդունված պատկերացումներին և սկզբունքներին: Միջազգայնորեն ընդունված չափանիշներով սպառողական կոոպերատիվները մատակարարման կոոպերատիվների յուրահատուկ տեսակ են: Որոշ դեպքերում այս կոոպերատիվները զբաղվում են մանրածախ և մեծածախ վաճառքով միայն, այսինքն իրականացնում են տնտեսական և առևտրային ձեռնարկներ: Այս կոոպերատիվների հիմնական նպատակը ֆերմերների կողմից գնումներ կատարելու գործընթացում խնայողությունների ապահովումն է: Ֆերմերների խնայողությունները զոյանում են ներդրանքների և ծառայությունների համեմատաբար մեծ ծավալների ձեռք բերման պայմաններում. ցածր գների ու փոխադրման նվազ ծախսերի, առավել կատարյալ տեխնիկական միջոցների ծանրաբեռնված օգտագործման և այլ նպաստող գործոնների շնորհիվ: Իսկ սպառողական կոոպերատիվները շատ երկրներում հայտնի են որպես սննդամթերքի կոոպերատիվներ կամ բնական, էկոլոգիապես մաքուր սննդի խանութներ:

Քանիոր կոոպերատիվի կանոնադրությունը, ըստ էության, կոոպերատիվների մասին օրենքից բխող դրույթներն են կոնկրետ կոոպերատիվի դեպքում, ուստի, չունենալով նորմալ, բովանդակալից օրենսդրական դրույթներ կոոպերատիվների մասին օրենքներում, հնարավոր չէ ունենալ նաև նորմալ կանոնադրություն, որը պետք է լինի կոոպերատիվների ներքին օրենսդրությունը: Կոնկրետ Հայաստանի պարագայում ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրեթե բոլոր կոոպերատիվները, թե արտադրական, թե սպառողական, ընդունել են «օրինակելի» կանոնադրություն՝ առանց քննարկելու կամ հասկանալու, թե արդյոք տվյալ նմուշն առհասարակ պետք է իրենց կոոպերատիվին, թե ոչ:

Կոոպերատիվների ինքնությանը վերաբերող տարրեր կան նաև «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին»²⁴ ՀՀ օրենքում (ընդունվել է 2002թ. ապրիլի 30-ին) և «Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» ՀՀ օրենքում (ընդունվել է 2002թ. հունիսի 4-ին):²⁵

Առաջինի դեպքում ջրօգտագործողների ընկերությունը սահմանվում է որպես ջրօգտագործողների (մեր պարագայում մեծ մասամբ ֆերմերների) կողմից ստեղծված, շահույթի նպատակ չհետապնդող, հանրային շահերով առաջնորդվող կազմակերպություն, որի նպատակն է իրականացնել ոռոգման համակարգի շահագործումը և պահպանումը: Ընկերությունը ոռոգման ջուր է մատակարարում իր անդամ և ոչ անդամ ֆիզիկական և իրավաբանական անձ հանդիսացող ոռոգման ջուր օգտագործողներին, ովքեր ընկերության սպասարկման տարածքում ունեն սեփականության կամ 3 տարուց ավելի ժամկետով օգտագործման իրավունքով իրենց պատկանող հողատարածք: Ի տարբերություն կոոպերատիվների, ՋՕԸ-ները անդամների համատեղ սեփականությունը չեն և ընկերության անդամ ջրօգտագործողը ընկերության գույքի նկատմամբ բաժնի իրավունք չունի: Այս օրենքում առկա են կոոպերատիվների միջազգային իրավունքի դրույթներին համապատասխան որոշ կետեր, օրինակ՝ կազմակերպական կառուցվածքը, մեծ թվով անդամների առկայության դեպքում ընդհանուր ժողովի անցկացում ներկայացուցիչների միջոցով

²⁴Տես «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքը

²⁵Տես «Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» ՀՀ օրենքը

ըստ ներկայացուցչական գոտիների, մեկ անդամ մեկ ձայն (չնայած կանոնադրությամբ ձայների քանակը կարող է սահմանվել ելնելով սպասարկման տարածքում ջրօգտագործողի ունեցած հողատարածքի չափից) և այլն:

Այս ընկերությունների գործունեությունը համակարգվում է ՀՀ կառավարության կողմից ստեղծված Կանոնակարգող խորհրդի կողմից, որի սպասարկվող տարածքների տեխնիկատնտեսական նպատակահարմարության մասին գրավոր դրական եզրակացությունից հետո նոր միայն հնարավոր է 1 ամսվա ընթացքում հրավիրել հիմնադիր ժողով և նշանակել ընկերության առաջին ժողովի գումարման ժամկետը: Այս կանոնակարգող խորհուրդը և ջրային համակարգերի կառավարման մարմինը մեծ հաշվով վերահսկում և համակարգում են ջրօգտագործողների ընկերությունների և դրանց միությունների գործունեությունը՝ ներառյալ կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու, ընկերության վերակազմակերպվելու և լուծարվելու հարցում համաձայնություն տալը (տես հոդված 4, 6, 32, 32.1):

Այս օրենքով նաև սահմանվում է, որ պետության կողմից ոռոգման համակարգերի շահագործմանը և պահպանմանն ուղղված օգնությունները, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության մյուս օգնությունները, կարող են տրամադրվել ընկերությունների և միությունների միջոցով: Մեր տվյալներով նման օգնություն մինչ այժմ եղել է ոռոգման ջրի գնի նվազմանն ուղղված պետական սուբսիդիան:

Մինչև այս օրենքի ընդունումը, 90-ականների վերջերին ստեղծվել էին 400-ից ավելի «ոռոգման ջուր օգտագործողների սպառողական կոոպերատիվներ», որոնք հիմնականում գյուղական համայնքներում ոռոգման ջրի մատակարարման ծառայություն էին մատուցում ֆերմերներին: Նախորդ բաժնում նշվեց, որ մինչև այժմ, ամենայն հավանականությամբ միայն թղթի վրա, դեռևս գործում են ոռոգման ջուր օգտագործողների որոշ սպառողական կոոպերատիվներ (մոտ 40): Սակայն իրականում այս կազմակերպությունները չեն գործում, չնայած, որպես սպառողական կոոպերատիվներ, դրանք կարող էին այլ ծառայություններ մատուցել իրենց անդամ ոռոգման ջուր օգտագործողներին:

Ավելորդ չի լինի նշել, որ ջրօգտագործողների ընկերությունները, չնայած օրենքում առկա կոոպերատիվ գաղափարախոսության որոշ տարրերի, մեծ հաշվով ընկալվում են որպես պետական գրասենյակներ, ջրօգտագործողները բավականին պասիվ են մասնակցում ընկերության կառավարման հարցերին և ոռոգման ջրի մատակարարման հարցերում բազմաթիվ վեճեր, տարաձայնություններ և դատական հայցեր են առկա ընկերությունների և ջրօգտագործողների (դե յուրե ընկերություններում որոշում կայացնողների) միջև:

Կոոպերատիվների ինքնությանը և գործունեությանը վերաբերող տարրեր պարունակող մյուս օրենքը «Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» ՀՀ օրենքն է, որն ամենայն հավանականությամբ կարող էր հավակնել կոոպերատիվների մասին օրենք կոչվելուն, քանի որ պարունակում է կոոպերատիվների գաղափարախոսությանը և արժեքային համակարգին մոտարկված ավելի շատ տարրեր, քան ՀՀ Քաղօրենսգիրքը կամ «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքը: Այս օրենքը կարող է ուղեցույց լինել նաև գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենք մշակելու համար:

Օրենքով գյուղատնտեսական վարկային ակումբը սահմանվում է որպես գյուղատնտեսական գործունեություն իրականացնող անձանց անդամության վրա հիմնված, ֆինանսական փոխադարձ օգնության նպատակով ստեղծված կամավոր միավորում: Այն շահույթի նպատակ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է և կարող է ստեղծվել ոչ առևտրային կոոպերատիվի կամ իրավաբանական անձանց միության կազմակերպարավական ձևով: Օրենքում հստակ նշվում է, որ ակումբի անդամներին մատուցվող ֆինանսական փոխադարձ օգնության ծառայություններն ու սպասարկումները չեն հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության առարկա և իրականացվում են բոլոր անձանց անունից և նրանց սուբսիդիար ռիսկով:

Օրենքում տեղ են գտել ԿՄԱ-ի և Ա193-ի դրույթներին համապատասխան բազմաթիվ տարրեր: Օրինակ, ակումբի սեփական միջոցները տարաբաժանվում են 2 մասի՝ **բաժանելի սեփականության** և **համատեղ**՝ անբաժանելի սեփականության: Ակումբի բաժանելի սեփականությունն են նրա անդամների պարտադիր և կամավոր վճարներից ձևավորված կանոնադրական հիմնադրամի միջոցները: Դրանց դիմաց շահաբաժիններ չեն վճարվում: Այս միջոցները կարող են հետ ստացվել ակումբից դուրս գալու դեպքում միայն (ԿՄԱ 3-րդ սկզբունք):

Ակումբի անբաժանելի սեփականությունն են փոխառությունների վերականգնման պահուստի միջոցները, ֆինանսական փոխադարձ օգնության պահուստի միջոցները և դրամաշնորհներից ձևավորվող պահուստի միջոցները: Այս միջոցների նկատմամբ ակումբի անդամը կորցնում է սեփականության իրավունքը ակումբից դուրս գալու դեպքում (ԿՄԱ 3-րդ սկզբունք):

Ակումբի անբաժանելի միջոցներն անդամների միջև չեն բաժանվում (հոդված 4), այլ տնօրինվում և օգտագործվում են ակումբի անդամների ընդհանուր որոշմամբ և կարող են բաժանվել միայն ակումբի լուծարման դեպքում լուծարման պահին առկա անդամների միջև՝ բաժնային սեփականության մեջ նրանցից յուրաքանչյուրի բաժնեմասին համապատասխանող հարաբերակցությամբ (ԿՄԱ 3-րդ սկզբունք):

Ակումբը փոխառու միջոցներ չի կարող ներգրավել ոչ անդամներից և փոխառու միջոցներ տրամադրել ակումբի ոչ անդամներին (ԿՄԱ 4-րդ սկզբունք): Ակումբը ստեղծվում է տնտեսական շահերով միավորված միևնույն համայնքում կամ իրենց տարածքներով հարակից համայնքներում՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնող 10-ից ոչ պակաս անձանց հիմնադիր ժողովի որոշմամբ:

Օրենքում անդամակցության հարցերը բավականին հստակ են շարադրված և լիովին համապատասխանում են Հենրիի ուղեցույցին²⁶: Ակումբի խորհրդում և վերստուգիչ հանձնաժողովում կարող են ընդգրկվել միայն ակումբի անդամները: Որոշումներ կայացնելիս ակումբի անդամները ունեն 1 ձայնի իրավունք (ԿՄԱ 2-րդ սկզբունք):

Ինչպես վերևում նշեցինք, կոոպերատիվներին վերաբերող որոշ անհրաժեշտ դրույթների կարգավորումը, որը բացակայում է օրենքներում, թողնված է կոոպերատիվների կանոնադրություններին:

Սպառողական և արտադրական կոոպերատիվների որոշ կանոնադրությունների վերլուծությունը²⁷ ցույց է տալիս, որ կոոպերատիվների կանոնադրությունները նույնպես չեն արտացոլում կոոպերատիվների սկզբունքներն ու արժեքային համակարգը, ավելին, արտադրական կոոպերատիվների դեպքում, նույնիսկ հակասում են միջազգայնորեն ընդունված արտադրական կոոպերատիվների սահմանմանը և գործունեության ընդհանուր առանձնահատկություններին: Ըստ արտադրական կոոպերատիվի կանոնադրության, կոոպերատիվն իրականացնում է բնակչությանը տարբեր բնույթի ծառայությունների մատուցում, արտաքին տնտեսական գործունեության իրականացում, առևտուր, բեռնափոխադրումներ և այլն:

Սակայն, այս ամենի հետ մեկտեղ, արտադրական կոոպերատիվը, համաձայն իր կանոնադրության, կոոպերատիվի ինքնության որոշ տարրեր է պարունակում, երբեմն ավելի շատ, քան սպառողական կոոպերատիվը: Օրինակ, արտադրական կոոպերատիվը կարող է սահմանել անբաժանելի ֆոնդ ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ, իր շահույթից կատարած մասհանումներից կարող է ստեղծել պահուստային, կուտակման և այլ ֆոնդեր, հստակ սահմանված է փայամասնակցային ֆոնդը և յուրաքանչյուր անդամի փայաբաժինը և այլն:

²⁶Stu Henry's Guidelines

²⁷Հայաստանում կոոպերատիվները գրանցվելիս հիմնականում օգտվում են կանոնադրության նմուշներից, որոնք, որպես կանոն, նույն բառապաշարով տեղայնացվում են կոնկրետ կոոպերատիվի դեպքում: Թե սպառողական, թե արտադրական կոոպերատիվների պարագայում դրանց կանոնադրությունները բավականին նման են:

վերլուծությունը ցույց է տալիս, որ կոոպերատիվների օրենսդրական մոտ 20 ուսումնասիրված հիմնական տարրերի մեծ մասի կարգավորումը առկա չէ կոոպերատիվների կանոնադրություններում:

Հաշվապահական և հարկային հաշվառման խնդիրները ՀՀ սպառողական կոոպերատիվներում

«Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը սահմանում է, որ սպառողական կոոպերատիվները իրավաբանական անձինք են, որոնք շահույթ ստանալու նպատակ չեն հետապնդում: Սպառողական կոոպերատիվներն ունեն բազմաթիվ բարդություններ իրենց գործունեության հաշվապահական և հարկային հաշվառման ճիշտ իրականացման հարցերում, քանի որ`

- իրենց կազմակերպական և գործունեության իրականացման բնույթով էականորեն տարբերվում են մյուս իրավաբանական անձանցից,
- հիմնականում իրականացնում են ոչ առևտրային գործառնություններ, սակայն դրանք կարող են իրականացնել նաև ձեռնարկատիրական գործունեություն, երբ դա ծառայում է իրենց կանոնադրական նպատակների իրականացմանը.

ՀՀ գործող հարկային օրենսդրության համաձայն, այս կազմակերպությունները կարող են լինել ինչպես շահութահարկ, այնպես էլ ԱԱՀ վճարողներ, քանի որ սպառողական կոոպերատիվների կողմից իրականացվող գործառնությունները կարող են դիտարկվել ինչպես շահույթի ստացման նպատակ հետապնդող, այնպես էլ շահույթի նպատակ չհետապնդող գործառնություններ:

«ՇԱՀՈՒՔԱԿԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք

Հոդված 4. Շահութահարկ են վճարում (հարկատու են) ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ պետական ոչ առևտրային կազմակերպությունների` բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե փոխանցվող եկամուտների մասով:

Հոդված 7. Համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է` անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Հոդված 8. Եկամուտ չեն համարվում ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում` անդամավճարները) և ծառայությունները:

Հոդված 11. Ծախս չեն համարվում`

ե) ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացված ակտիվների (այդ թվում` անդամավճարների) գծով ծախսերը կամ դրանց հաշվին կատարված ծախսերը:

Հոդված 46/3. Շահութահարկի հաշվարկ չեն լրացնում (և չեն ներկայացնում)`

ա) գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ (հիմնականում) զբաղված հարկատուները,

բ) ոչ առևտրային կազմակերպությունները, եթե ստացված միջոցները բացառապես սույն օրենքի 8 հոդվածի համաձայն եկամուտ չեն համարվում:

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք

Հոդված 3. ԱԱՀ վճարող են համարվում ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունները և գյուղատնտեսական արտադրանք արտադրողները`

2) օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառությունը ԱԱՀ-ի շենք գերազանցելու պահից մինչև

օրացուցային տարվա ավարտը: Օրացուցային տարվա ընթացքում ԱԱՀ-ի շենք* գերազանցվելու դեպքում ԱԱՀ վճարվում է ԱԱՀ-ի շենք գերազանցող գումարից.

*Սույն օրենքի կիրառման առումով ԱԱՀ-ի շենք է համարվում «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ շրջանառության հարկ վճարող համարվելու համար ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման իրացման շրջանառության չափը, որը չի գերազանցել 58.35 մլն դրամը:

Կոոպերատիվի անդամների կողմից անդամավճարների մուծումը որոշ նորմատիվ իրավական ակտերով կարող է դիտարկվել որպես հասույթ, որն իր հերթին կարող է առաջացնել լրացուցիչ հարկային պարտավորություններ:

ՀՀ ՀԱՇՎԱՊԱՅՎԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ (ՀՀՀՍ)

ՀՀՀՍ 18-րդ՝ «Հասույթ» ստանդարտի «Անդամագրության վճարներ և անդամավճարներ» 17-րդ կետով սահմանվում է, որ հասույթի ճանաչումը կախված է մատուցված ծառայությունների բնույթից, մասնավորապես, «Եթե մուծումներն (անդամավճարների) անդամներին իրավունք են տալիս անդամակցության ընթացքում ստանալու տարբեր ծառայություններ կամ հրապարակումներ կամ գնելու ապրանքներ և ծառայություններ՝ ավելի ցածր գներով, քան ոչ անդամներից գանձվող գները, ապա վճարները ճանաչվում են որպես հասույթ այն հիմունքով, որն արտացոլում է ներկայացվող օգուտների ստացման ժամանակը, բնույթը և արժեքը»:

Ինչպես տեսնում ենք սպառողական կոոպերատիվները ՀՀ հարկային օրենսդրության համաձայն կարող են համարվել ինչպես շահութահարկի, այնպես էլ ԱԱՀ-ի վճարողներ, այդ պատճառով էլ կոոպերատիվների կողմից հաշվապահական և հարկային հաշվառման գծով թույլ տրված սխալներն ու անճշտությունները կարող են հանգեցնել էական ֆինանսական կորուստների և տուգանքների վճարման:

Գործնականում շատ հազվադեպ են հանդիպում հաշվապահներ, ովքեր տիրապետում են սպառողական կոոպերատիվների հաշվապահական և հարկային հաշվառման առանձնահատկություններին:

Հաշվապահական և հարկային հաշվառման վարումն օրենսդրական պարտավորություն է յուրաքանչյուր իրավաբանական անձի համար: Այդ գործընթացի իրականացման արդյունավետությունը էականորեն կապված է առաջին հերթին կոոպերատիվի գործունեության համապատասխան կանոնակարգման, պայմանագրային հարաբերությունների կարգավորման և իրականացվող գործառնությունների փաստաթղթավորման հետ:

Մասնավորապես, անհրաժեշտ է՝

- կոոպերատիվի գործունեության կազմակերպման վերաբերյալ սահմանել գրավոր կանոնակարգեր.
- կոոպերատիվի և դրա անդամների միջև գործառնությունների գծով կողմերի միջև կնքել պայմանագրեր.
- իրականացվող գործառնությունների փաստաթղթավորումը կատարել հաշվապահական հաշվառման և հարկային օրենսդրությամբ, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշների պահպանմամբ և այլն:

Մասնավորապես, կոոպերատիվների կողմից իր անդամների կողմից արտադրված մթերքների իրացման գործընթացը կազմակերպելիս անհրաժեշտ է պայմանագիր կնքել կոոպերատիվի և դրա անդամի միջև: Կոոպերատիվներում եկամուտների և ծախսերի հաշվառման չափանիշների պահպանումը հնարավորություն կտա նվազեցնել լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացման հետ կապված ծախսերը. այդ նպատակով անհրաժեշտ է՝

ա) եկամուտների և ծախսերի գծով գործառնություններն իրականացնել՝ պահպանելով օրենսդրությամբ և նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշները:

բ) կանոնակարգել եկամուտների և ծախսերի իրականացման գործընթացը, այդ նպատակով մշակել և հաստատել ներքին կանոնակարգ՝ «եկամուտների և ծախսերի իրականացման վերաբերյալ», որը սահմանում էնուծված անդամավճարների կամ փայավճարների հաշվին կոոպերատիվի կողմից իրականացվելիք ծախսերի հարցերը և վաճառված մթերքներից և կոմիսիոն վարձատրությունից ստացված միջոցների գծով իրականացվելիք ծախսերի կատարման ուղղությունները և այլն:

Կոոպերատիվների և հարկային օրենսդրության ներկայիս պայմաններում, սպառողական կոոպերատիվների հաշվապահները պետք է տիրապետեն վերը նշված առանձնահատկություններին և կոոպերատիվի հարկային, հաշվապահական հաշվառումը, ինչպես նաև կոոպերատիվի ամբողջ փաստաթղթաշրջանառությունը վարեն հավուր պատշաճի: Այլապես սխալ վարվող հաշվառման պատճառով կոոպերատիվները կարող են կրել էական ֆինանսական կորուստներ:

Հաշվի առնելով, որ սպառողական կոոպերատիվների մեծ մասը գտնվում է մարզերում, և նկատի ունենալով գյուղական վայրերում աշխատող հաշվապահների մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակը, պետք է քայլեր ձեռնարկել վերոնշյալ խնդիրների հրատապ լուծման ուղղությամբ:

Կոոպերատիվների մասին օրենքների համեմատական վերլուծություն

Հաջորդիվ փորձենք ներկայացնել կոոպերատիվների օրենսդրական համակարգերի համեմատական վերլուծությունը՝ օգտագործելով կոոպերատիվների օրենսդրության մեջ ամենացայտուն կերպով արտահայտված կոոպերատիվների ինքնության և սկզբունքներին վերաբերող, ինչպես նաև չվերաբերող, սակայն իրավական առումով կարևոր տարրեր՝ մեր ընտրած որոշ երկրների օրինակով:

Կոոպերատիվների օրենքների համեմատության համար վերցրել ենք Անտոնիո Ֆիչիի մեթոդաբանությունը և EURICSE-ի²⁸ կողմից 2010թ.²⁹ իրականացված լայնամասշտաբ հետազոտությունը, որտեղ ուսումնասիրվել են մոտ 30 երկրների կոոպերատիվների օրենքներ: Համեմատությունը ներկայացվում է աղյուսակի տեսքով, որի ձախ մասում տեղ են գտել մոտ 20 տարրեր, որոնք այս կամ այն չափով կարգավորվում են կոոպերատիվների օրենքներով, ինչպես նաև թե ուղղակիորեն, թե անուղղակիորեն առնչվում են կոոպերատիվների սկզբունքներին և Ա193-ի դրույթներին: Այս տարրերը կոոպերատիվների օրենքների համար շատ կարևոր տարրեր են: Ստորև ներկայացնում ենք աղյուսակը, որից հետո կներկայացնենք համեմատական վերլուծությունը՝ մեր ընտրած երկրների օրինակով:

²⁸Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնը (ICARE) և EURICSE-ն ներկայումս իրականացնում են կոոպերատիվների հետազոտական համատեղ միջազգային ծրագիր:

²⁹EURICSE, 2010. Study on the implementation of the Regulation 1435/2003 on the Statute for European Cooperative Society (SCE).

Աղյուսակ 2. Կոոպերատիվների օրենսդրական տարրերը:

	ԿՄԱ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ - 193/2002 ԱՄԿ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ (Ա193)
1) Սահմանումը և նպատակը	Կոոպերատիվները կամավոր կազմակերպություններ են, որոնք բաց են բոլոր անձանց համար, ովքեր ի վիճակի են օգտվել դրանց ծառայություններից և ցանկանում են ընդունել անդամակցության պարտականությունները՝ առանց գենդերային, սոցիալական, ռասայական, քաղաքական կամ կրոնական խտրականության (ԿՄԱ1-ին սկզբունքը՝ Կամավոր և բաց անդամակցություն): «Կոոպերատիվ» նշանակում է անձանց ինքնավար ընկերակցություն, ովքեր կամավոր կերպով միացել են՝ ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքներն ու ձգտումները բավարարելու համար՝ համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով (193/2002 ILO Rec., I.2):
2) Տնտեսական գործունեություն (սահմանափակումներ)	Ընդունված է, որ կոոպերատիվները գործում են տնտեսության բոլոր ոլորտներում (193/2002 ILO Rec., I.1):
3) Գործունեություն ոչ անդամների հետ (ընդունելիություն և սահմանափակումներ)	Այս մասին դրույթներ չկան
4) Գրանցում	Կառավարությունները պետք է ապահովեն նպաստավոր քաղաքականություն և օրենսդրական միջավայր ... որը (ա) կստեղծի կոոպերատիվների՝ հնարավորինս արագ, պարզ, մատչելի և արդյունավետ գրանցմանը նպաստող հաստատակարգային՝ ինստիտուցիոնալ, շրջանակ (193/2002 ILO Rec., II.6):
5) Անդամների նվազագույն թիվը	Համապատասխան դրույթներ չկան, բայց տես «Կոոպերատիվի» սահմանումը որպես անձանց ինքնավար ընկերակցություն (193/2002 ILO Rec., I.2):
6) Ներդրող անդամներ (ընդունելիություն)	Կոոպերատիվներն ինքնավար, ինքնօգնող կազմակերպություններ են, որոնք վերահսկվում են սեփական անդամներից: Եթե դրանք համաձայնագրեր են կնքում այլ կազմակերպությունների հետ, այդ թվում՝ կառավարությունների, կամ կապիտալ են հայթայթում արտաքին աղբյուրներից, ապա դա անում են՝ ելնելով սեփական անդամների կողմից ժողովրդավարական վերահսկողության և կոոպերատիվի ինքնավարությունը պահպանելու պայմաններից (ԿՄԱ4-րդ սկզբունք՝ Ինքնավարություն և անկախություն): Կառավարությունները պետք է հնարավորության սահմաններում ձեռնարկեն միջոցներ կոոպերատիվների համար ֆինանսական ներդրումներն ու վարկերը մատչելի դարձնելու համար (193/2002 ILO Rec., III.12):
7) Նոր անդամների ընդունումը	Կոոպերատիվները կամավոր կազմակերպություններ են, որոնք բաց են բոլոր անձանց համար, ովքեր ի վիճակի են օգտվել դրանց ծառայություններից և ցանկանում են ընդունել անդամակցության պարտականություններն՝

	առանց գենդերային, սոցիալական, ռասայական, քաղաքական և կրոնական խտրականության (ԿՄԱ1-ին սկզբունք՝ Կամավոր և բաց անդամակցություն):
8) Կապիտալի փոփոխականությունը	Կոոպերատիվները կամավոր կազմակերպություններ են, որոնք բաց են բոլոր անձանց համար, ովքեր ի վիճակի են օգտվել դրանց ծառայություններից և ցանկանում են ընդունել անդամակցության պարտականությունները (ԿՄԱ1-ին սկզբունքը՝ Կամավոր և բաց անդամակցություն):
9) Նվազագույն կապիտալի պահանջ	Համապատասխան դրույթներ չկան
10) Ավելցուկի բաշխումը և մասնավորապես ավելցուկի հատկացումը օրինական պարտադիր պահուստային ֆոնդերին	<p>Այդ կապիտալի առնվազն մի մասը սովորաբար լինում է կոոպերատիվի ընդհանուր սեփականությունը ... Անդամները ավելցուկը հատկացնում են հետևյալ բոլոր նպատակներին կամ դրանցից որևիցե մեկին. կոոպերատիվի զարգացում, հնարավոր է՝ պահուստային ֆոնդերի ստեղծմամբ, որի առնվազն մի մասը կլինի անբաժանելի (ԿՄԱ3-րդ սկզբունք՝ Անդամների տնտեսական մասնակցություն):</p> <p>Կոոպերատիվները կրթության և վերապատրաստման հնարավորություններ են ստեղծում իրենց անդամների, ընտրված ներկայացուցիչների, ղեկավարների և աշխատակիցների համար, որպեսզի վերջիններս կարողանան արդյունավետ կերպով նպաստել իրենց կոոպերատիվների զարգացմանը (5-րդ սկզբունք՝ Կրթություն, վերապատրաստում և տեղեկատվություն): Կոոպերատիվներն աշխատում են սեփական համայնքների ինքնահարատ զարգացման ուղղությամբ՝ իրենց անդամների կողմից հաստատված քաղաքականության հիման վրա (ԿՄԱ7-րդ սկզբունք՝ Համայնքի մասին մտահոգվածություն):</p> <p>Կառավարությունները պետք է ապահովեն աջակցող քաղաքականություն և օրենսդրական միջավայր ... որը՝ (բ) կնպաստեր համապատասխան պահուստների ստեղծմանն աջակցող քաղաքականությամբ, որոնց առնվազն մի մասը կարող է լինել անբաժանելի, ինչպես նաև՝ համերաշխության ֆոնդեր կոոպերատիվի ներսում (193/2002 ILO Rec., II.6):</p>
11) Պահուստների բաշխումը	Այդ կապիտալի առնվազն մի մասը սովորաբար լինում է կոոպերատիվի ընդհանուր սեփականությունը ... Անդամները ավելցուկը հատկացնում են հետևյալ բոլոր նպատակներին կամ դրանցից որևիցե մեկին. կոոպերատիվի զարգացում, հնարավոր է՝ պահուստային ֆոնդերի ստեղծմամբ, որի առնվազն մի մասը կլինի անբաժանելի (ԿՄԱ3-րդ սկզբունք՝ Անդամների տնտեսական մասնակցություն):
12) Վճարված կապիտալի շահաբաժինների բաշխումը (ընդունելիություն և սահմանափակումներ)	Անդամները սովորաբար սահմանափակ փոխհատուցում են ստանում, եթե առհասարակ ստանում են, այն կապիտալից, որը նախատեսված է որպես անդամակցության պայման (ԿՄԱ3-րդ սկզբունք՝ Անդամների տնտեսական մասնակցություն):
13) Շահաբաժինների/փոխհատուցումների	Անդամները ավելցուկը հատկացնում են հետևյալ բոլոր

/պատրոնաժի տարբերակումը և բաշխումը գործունեության հիման վրա և գործունեության համամասնությամբ	նպատակներին կամ դրանցից որևիցե մեկին ... Օգուտ ստացող անդամները՝ կոոպերատիվի հետ իրենց փոխգործողության համամասնությամբ (ԿՄԱ3-րդ սկզբունք՝ Անդամների տնտեսական մասնակցություն):
14) Չայնի իրավունքը	Կոոպերատիվները ժողովրդավարական կազմակերպություններ են, որոնք վերահսկվում են իրենց անդամների կողմից, ովքեր ակտիվորեն մասնակցում են դրանց քաղաքականության մշակմանը և որոշումների ընդունմանը: Որպես ընտրովի ներկայացուցիչներ ծառայող տղամարդիկ և կանայք հաշվետու են կոոպերատիվի անդամներին: Առաջնային կոոպերատիվներում անդամներն ունեն հավասար ձայնի իրավունք (մեկ անդամ, մեկ ձայն), իսկ այլ մակարդակների կոոպերատիվները նույնպես կազմակերպվում են ժողովրդավարական ձևով (ԿՄԱ 2-րդ սկզբունք՝ Անդամների կողմից ժողովրդավարական վերահսկողություն):
15) Ոլորտային բաժինների ժողովներ (ընդունելիություն)	Համապատասխան դրույթներ չկան
16) Փոխարկում ընկերության կամ կազմակերպության այլ իրավաբանական ձևի (ընդունելիություն)	Համապատասխան դրույթներ չկան
17) Կառավարման կամ վարչական խորհուրդներ/մարմիններ. արդյո՞ք միայն անդամներն են իրավասու	<p>Կոոպերատիվները ժողովրդավարական կազմակերպություններ են, որոնք վերահսկվում են իրենց անդամների կողմից, ովքեր ակտիվորեն մասնակցում են դրանց քաղաքականության մշակմանը և որոշումների ընդունմանը: Որպես ընտրովի ներկայացուցիչներ ծառայող տղամարդիկ և կանայք հաշվետու են կոոպերատիվի անդամներին: (ԿՄԱ 2-րդ սկզբունք՝ Անդամների կողմից ժողովրդավարական վերահսկողություն):</p> <p>Կոոպերատիվներն ինքնավար, ինքնօգնող կազմակերպություններ են, որոնք վերահսկվում են իրենց անդամների կողմից (ԿՄԱ4-րդ սկզբունք՝ Ինքնավարություն և անկախություն)</p> <p>Կառավարությունները պետք է ապահովեն նպաստավոր քաղաքականություն և օրենսդրական միջավայր ... որը (ե) կխրախուսի կոոպերատիվների զարգացումը որպես ինքնավար և ինքնակառավարվող ձեռնարկություններ (193/2002 ILO Rec., II.6)</p>
18) Լուծարման դեպքում ակտիվների փոխանցում	Անդամակցության պայման հանդիսացող կապիտալի դիմաց անդամները սովորաբար սահմանափակ փոխհատուցում են ստանում, եթե առհասարակ ստանում են (ԿՄԱ3-րդ սկզբունք՝ Անդամների տնտեսական մասնակցություն):
19) Հարկային հատուկ մոտեցում (հիմնական միջոցառումներ)	Կոոպերատիվներին պետք է վերաբերվել համաձայն ազգային օրենքների և իրավակիրառական փորձի, այնպիսի պայմաններով, որոնք ավելի պակաս նպաստավոր չեն, քան ձեռնարկատիրական և սոցիալական կազմակերպության այլ տեսակների համար նախատեսված պայմանները: Կոոպերատիվների գործունեությանն օժանդակելու համար կառավարությունները պետք է

	<p>հնարավորության դեպքում ներդնեն աջակցության այնպիսի միջոցառումներ, որոնք կնպաստեն սոցիալական և հանրային քաղաքականության կոնկրետ արդյունքներին, ինչպես օրինակ՝ զբաղվածության խթանումը կամ խոցելի խմբերի կամ խոցելի տարածաշրջանների համար օգտակար գործունեության զարգացմանը: Նման միջոցառումները, ի թիվս այլոց և հնարավորության սահմաններում, կարող են ներառել նաև հարկային արտոնությունները, վարկերը, դրամաշնորհները, հանրային աշխատանքների ծրագրերի մատչելիությունը և գնումների վերաբերյալ հատուկ դրույթները (193/2002 ILO Rec., II.7.2):</p>
<p>20) Վերստուգման (աուդիտի) հանրային և/կամ այլ ձևեր, ներառյալ՝ կոոպերատիվների և ներհատուկ կանխազգուշացնող ստուգումը, ընդ որում՝ ոչ զուտ ֆինանսական (հիմնական օբյեկտներ)</p>	<p>Կառավարությունները պետք է ապահովեն աջակցող քաղաքականություն և օրենսդրական միջավայր ... որը (գ) կնպաստեր կոոպերատիվների նկատմամբ վերահսկողության միջոցների ընդունմանը այնպիսի պայմաններով, որոնք համատեղելի են կոոպերատիվների բնույթի և գործառնությունների հետ, որոնք հարգում են կոոպերատիվների ինքնավարությունը և համապատասխանում են ազգային օրենքներին և իրավակիրառական փորձին և որոնք ավելի պակաս նպաստավոր չեն, քան՝ ձեռնարկության և սոցիալական կազմակերպության այլ ձևերի համար կիրառելի պայմանները (193/2002 ILO Rec., II.6):</p>

Աղբյուրը՝ EURICSE, 2010.

Ներկայացնենք այս աղյուսակի մեկնաբանությունը և օրինակները բերենք մեր կողմից ուսումնասիրված երկրների օրենքներից:

Համեմատության համար վերցրել ենք հետևյալ երկրները՝ Բուլղարիա, Հունգարիա, Գերմանիա և Իտալիա: Առանձին բաժնում ուսումնասիրել ենք նաև հարևան Վրաստանի՝ արդեն իրականացրած կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումների փորձը:

Բուլղարիան և Հունգարիան ունեցել են նմանօրինակ անցումային շրջան, ինչ Հայաստանը՝ սոցիալիստական կարգերի փլուզումից հետո: Այս երկրներում նույնպես կոմունիզմի ժամանակաշրջանում պետության շահերից բխող սպառողական կոոպերատիվները մաքրեցին ավանդական կոոպերատիվների բազմազանությունը, շեղվեցին կոոպերատիվի արժեքային համակարգից և սկզբունքներից, և ի վերջո, բացասական իմիջ ձեռք բերեցին:

Գյուղատնտեսությունը կարևոր դեր է խաղացել և շարունակում է խաղալ այս երկրների տնտեսություններում: 1996թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմում էր Բուլղարիայի ՀՆԱ-ի 26%-ը: 2010թ. այն կազմում էր մոտ 4.5%: 1993թ. գյուղատնտեսության համատարած հաշվառման տվյալներով Բուլղարիայում ֆերմերային տնտեսությունների մոտ 86 տոկոսը ուներ 1հա-ից պակաս միջին հողատարածք: 2010թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալներով անհատ ֆերմերային տնտեսություններն ունեին 3.5 հա միջին հողատարածք: Այսինքն, փոքրամասշտաբ ֆերմերային տնտեսությունները (հիմնականում չգրանցված, թերկապիտալացված, արդիական տեխնոլոգիաներից զուրկ), որոնք մեծ հաշվով նաև իրենց գյուղատնտեսական արտադրանքի հիմնական սպառողներն են, դեռևս մեծ տեղ են զբաղեցնում Բուլղարիայի գյուղատնտեսությունում³⁰: Բուլղարիայի գյուղատնտեսական արտադրության հիմնական ուղղություններն են՝ հացահատիկի, մրգի և բանջարեղենի, կաթի և խոզի մսի արտադրությունը:

³⁰Boevsky, I. (2012). Support for Farmers' Cooperatives; Country Report Bulgaria. Wageningen: Wageningen UR.

Հունգարիայի գյուղատնտեսական համախառն արտադրանքը 1998թ. կազմում էր երկրի ՀՆԱ-ի 8%-ը, իսկ 2007թ.՝ 4%-ը: Գյուղատնտեսական համախառն արտադրանքի մեջ մեծ տեղ է գրավում հացահատիկի արտադրությունը, մրգերի, բանջարեղենի արտադրությունը և խոզի մսի արտադրությունը: Ի դեպ, խոզաբուծությամբ զբաղվում են ամենաշատ քանակով ֆերմերային տնտեսություններ՝ մոտ 140000, հացահատիկի արտադրությամբ՝ 70000: Հողի մասնավորեցումից հետո անհատ տնտեսություններին բաժին էր հասել 0.5 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք: 1991-2005թթ. ընթացքում անհատ ֆերմերային տնտեսությունների կողմից օգտագործվող գյուղատնտեսական հողատարածքը հասավ 3.4 հա-ի: 2005թ. տվյալներով երկրի միջինը կազմում է 8.6 հա: Անհատ ֆերմերային տնտեսությունների մոտ 93%-ը ունեն 10 հեկտարից պակաս հողատարածք, սակայն սրանց 70%-ն ունի մինչև 1 հեկտար³¹: Այսինքն, Հունգարիայում նույնպես փոքրամասշտաբ տնտեսությունները և հողերի կտրտվածությունը գերակշռում են: Հունգարիայում կան ավելի քան 5000 կոոպերատիվներ, որոնց գերակշռող մասը գյուղատնտեսական են:

Բուլղարիան ունի կոոպերատիվների մեկ ընդհանուր օրենք, որը վերջին անգամ փոփոխվել է 2008թ.: Գործում են մաս կոոպերատիվների առանձին տեսակների գործունեությունը կարգավորող օրենքներ: Կոոպերատիվների ընդհանուր օրենքը համարվում է կոոպերատիվների «ավանդական» օրենք՝ խստորեն ենթարկվելով ԿՄԱ-ի կոոպերատիվների ինքնության սկզբունքներին: Հունգարիան նույնպես ունի կոոպերատիվների մեկ համընդհանուր օրենք՝ ընդունված 2006թ.: Հունգարիայում նույնպես գործում են կոոպերատիվների առանձին տեսակների գործունեությունը կարգավորող օրենքներ (բանկային, բնակարանային): Հունգարիայի կոոպերատիվների օրենքը համարվում է ժամանակակից, մանրամասն և նորարար օրենք:

Գերմանիայի և Իտալիայի ընտրությունը զուտ կապված էր կոոպերատիվների գործունեության հարուստ, երկարամյա փորձով, վերջերս կատարված այնպիսի օրենսդրական բարեփոխումներով, որոնք ուղղված էին նպաստելու բացառապես փոքր ֆերմերների ներգրավմանը կոոպերատիվներում: Իտալիան հետաքրքիր է մաս այն հանգամանքով, որ կոոպերատիվների կարևորությունը ամրագրված է երկրի սահմանադրությամբ, իսկ կոոպերատիվների հիմնական օրենսդրական հոդվածները ներկայացված են Իտալիայի Քաղօրենսգրքում: Ընդհանուր առմամբ կոոպերատիվների իտալական օրենսդրական մոդելը համարվում է միևնույն ժամանակ և ավանդական, և ժամանակակից³²:

Ստորև ներկայացված է աղյուսակի մեկնաբանությունը ինչպես մաս վերոնշյալ երկրների կոոպերատիվների օրենքների հիմնական տարրերը: Ամբողջական համեմատությունը տրված է Հավելված 3-ում և 4-ում:

1) Սահմանումը և նպատակը

Ակնկալվում է, որ կոոպերատիվի սահմանումը պետք է կազմի կոոպերատիվի կանոնակարգման այն մասը, որը բովանդակում է կոոպերատիվի առանցքային տարրերը, ներառյալ՝ կոոպերատիվի նպատակը, որը կարևորվում է կոոպերատիվը ընկերությունների կամ իրավական ձևերի այլ տեսակներից տարբերակելու տեսակետից: Թեպետ կոոպերատիվի առանձնահատկությունները կարելի է բխեցնել մաս կարգավորման այլ տարրերից, այսուհանդերձ, կոոպերատիվների գործունեության կանոնակարգման գործում սահմանումը գլխավոր դեր է ստանձնում:

ԿՄԱ-ի սկզբունքներում սահմանումը ուղղակիորեն կենտրոնանում է ոչ թե կոոպերատիվների կոնկրետ նպատակի, այլ՝ դրա կառուցվածքի և գործունեության որոշ տարրերի վրա, այն է՝ կոոպերատիվի բաց բնույթի և կոոպերատիվի և դրա անդամների փոխհարաբերությունների վրա,

³¹Szabó, G. G., (2012). Support for Farmers' Cooperatives; Country Report Hungary. Wageningen: Wageningen UR.

³²EURICSE, 2010.

որոնք խարսխվում են «ծառայության օգտագործման» և անդամների կողմից «պատասխանատվության ստանձնման» կողմնորոշման վրա: Հակառակ սրա, Ա193-ի սահմանումը նախանշում է կոնկրետ նպատակ և կազմակերպական կոնկրետ տարր (խոսքը «համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության» մասին է):

Մեր կողմից ընտրված երկրները ունեն կոոպերատիվների միանման սահմանումներ:

- **Բուլղարիա** - Կոոպերատիվը ֆիզիկական անձանց ընկերակցություն է փոփոխական կապիտալով և անդամների փոփոխական թվով, ովքեր գործունեություն են ծավալում կոոպերացիայի և փոխադարձ օգնության հիման վրա՝ բավարարելու իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքները: Անդամները իրավունք ունեն մասնակցելու և օգտվելու կոոպերատիվի գործունեությունից և պարտավորվում են աջակցել կոոպերատիվի գործունեությանը:
- **Հունգարիա** - Կոոպերատիվը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող տնտեսավարող սուբյեկտ է, որը հիմնադրվում է փայնասնակցային կապիտալով, որի չափը նշվում է կանոնադրությամբ: Այն գործում է բաց անդամության սկզբունքով և փոփոխական կապիտալով՝ նպատակ ունենալով աջակցել անդամներին բավարարելու իրենց տնտեսական, մշակութային, կրթական, սոցիալական և առողջապահական կարիքները:
- **Գերմանիա, Իտալիա** - նմանօրինակ սահմանումներ:

2) Տնտեսական գործունեություն (սահմանափակումներ)

Այս կետը այն ասպեկտներից մեկն է, որը կապված է կոոպերատիվների ինքնության հետ: Խնդիրն այստեղ ստուգելն է, թե արդյոք կոոպերատիվներին թույլատրվում է նախաձեռնել որևէ տնտեսական գործունեություն, թե՞ համեմատած ընկերությունների այլ տեսակների հետ՝ գոյություն ունեն որոշակի արգելքներ: Ուստի այս կետի նպատակն է ցույց տալ տնտեսական գործունեության՝ զուտ կոոպերատիվներին վերաբերող սահմանափակումները, այլ կերպ ասած՝ սահմանափակումներ, որոնք վերաբերում են միայն կոոպերատիվներին՝ զուտ կոոպերատիվ լինելու փաստի բերումով:

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրների մեծ մասում նման արգելքներ չկան, ուստի կոոպերատիվները գործում են այլ ընկերությունների հետ հավասար պայմաններում: Բացի այդ, դրական է այն փաստը, որ որոշ օրենքներ կոոպերատիվներին հնարավորություն են տալիս ազատորեն զբաղվել որևէ տնտեսական գործունեությամբ (տես՝ Ֆրանսիայի, Պորտուգալիայի, Իսպանիայի օրինակները³³): Սա կատարելապես համահունչ է ԱՄԿ առաջարկությամբ նախանշված այն դրույթին, ըստ որի ճանաչվում է, որ կոոպերատիվները գործում են տնտեսության բոլոր ոլորտներում (193/2002 ILO Rec., I.1)³⁴:

- **Հունգարիա, Իտալիա** - սահմանափակումներ չկան:
- **Գերմանիա** - ապահովագրություն (նախատեսված է հատուկ իրավական ձև՝ փոխադարձ ապահովագրության ընկերակցություն և սեփական վերահսկողական մարմին):
- **Բուլղարիա** - վերաապահովագրում, բանկային գործ:

³³EURICSE, 2010.

³⁴Տես Հավելված 1:

3) **Գործունեություն ոչ անդամների հետ** (ընդունելիություն և սահմանափակումներ)

Այս կետը անուղղակիորեն վերաբերում է այն գաղափարին, որ կոոպերատիվը այնպիսի կազմակերպություն է, որը նպատակ է հետապնդում իր անդամների հետ գործ ունենալ որպես գնորդների (ովքեր գնում են կոոպերատիվի տրամադրած ծառայություններն ու ապրանքները. խոսքը սպառողական կոոպերատիվների, կոոպերատիվ բանկերի և այլ կոոպերատիվների մասին է), վաճառողների (ովքեր վաճառում են կոոպերատիվի տնտեսական գործունեության համար օգտագործվող ծառայությունները և ապրանքները. խոսքը մասնագիտական կոոպերատիվների, գյուղատնտեսական կոոպերատիվների և այլ կոոպերատիվների մասին է) կամ աշխատողների (աշխատավորական կոոպերատիվներ):

Այսպիսով, պետք է հարց տալ՝ արդյո՞ք օրենքն ուղղված է և պաշտպանում է կոոպերատիվների այս պրոֆիլը՝ բացառելով կամ (որ ավելի հավանական է) սահմանափակելով ոչ անդամների հետ կոոպերատիվների գործունեությունը (որը նշանակում է՝ ոչ անդամներին վաճառել, նրանցից գնել կամ նրանց աշխատանքի ընդունել):

- **Գերմանիա, Իտալիա** - Թույլատրվում է միայն այն դեպքում, եթե նախատեսվում է կանոնադրությամբ:
- **Բուլղարիա, Յունգարիա** - դրույթներ չկան:

4) **Գրանցում**

Այս կետը նպատակ է հետապնդում ստուգել, թե արդյոք կա հատուկ ռեեստր կոոպերատիվների համար, թե դրանք գրանցվում են այլ ընկերությունների հետ նույն ռեեստրում: Սա կոոպերատիվների տեսանելիության վրա ազդող պրոֆիլ է, թեպետ, այս առումով, ընկերությունների կամ ձեռնարկությունների ընդհանուր ռեեստրում կոոպերատիվների համար հատուկ ծածկագրի կամ բաժնի գոյությունը տեսականորեն կարող է ծառայել նույն նպատակին:

Սովորաբար կոոպերատիվների համար հատուկ ռեեստր չի լինում, և կոոպերատիվները գրանցվում են ընդհանուր ռեեստրում (իրավաբանական անձանց, ընկերությունների, առևտրային/բիզնես կազմակերպությունների ռեեստրներ):

- **Բուլղարիա, Յունգարիա** - առևտրային կազմակերպությունների ռեեստրում:
- **Գերմանիա, Իտալիա** - կոոպերատիվների ռեեստրում:

5) **Անդամների նվազագույն թիվը**

Եթե այլ ընկերությունները կարող են հիմնվել և գործել երկու անձանց կողմից (կամ նույնիսկ միայն մեկ անձի), ենթադրվում է, որ կոոպերատիվները, լինելով «անձանց ընկերակցություններ» (տես Ա193-ի սահմանումը), պետք է բաղկացած լինեն անդամների նվազագույն նպատակահարմար թվաքանակից: Հարկ է նշել, որ օրենսդրության մեջ միտում կա կրճատելու այդ նվազագույն թվաքանակը (տես, օրինակ, Գերմանիայի և Իտալիայի օրինակները):

- **Գերմանիա** - 3 ֆիզիկական անձ
- **Իտալիա** - 3 ֆիզիկական անձ,
- **Բուլղարիա** - 7 ֆիզիկական անձ
- **Յունգարիա** - 7 ֆիզիկական կամ իրավաբանական անձ (սակայն իրավաբանական անձանց քանակը չպետք է գերազանցի անդամների քանակի կեսը):

6) Ներդրող անդամներ (ընդունելիություն)

Շնորհիվ անդամների հետ փոխգործողությունների մեջ մտնելու կոոպերատիվների առանձնահատուկ նպատակի, ըստ որի անդամները «օգտագործող անդամներ» են, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ անդամների կողմից տրամադրված կապիտալի համար փոխհատուցում մեծ հաշվով չի նախատեսվում, չհաշված սահմանափակ չափով փոխհատուցումը, հարց է առաջանում, թե արդյոք կոոպերատիվ կարող են ընդունվել անդամներ, ովքեր շահագրգռված են միայն փոխհատուցում ստանալ իրենց տրամադրած կապիտալից և ոչ թե շահագրգռված են կոոպերատիվի հետ գործակցելու հարցում:

Այս կետը նպատակահարմար է կոոպերատիվ ինքնության համար, քանի որ ներդրողի սեփականությունը հանդիսացող ընկերությունների նպատակը հենց կապիտալի փոխհատուցումն է: Սակայն, եթե մի կողմից կոոպերատիվներում ներդրող անդամների բացառումը տեսականորեն կարող է կարևորվել կոոպերատիվ ինքնության համար կամ նպաստել դրա ամրապնդմանը, ապա մյուս կողմից կոոպերատիվները, ինչպես և բոլոր մյուս ձեռնարկությունները, իրենց տնտեսական գործունեության համար ռիսկային կապիտալի կարիք ունեն. կոոպերատիվները, առավել քան այլ ձեռնարկությունները, կապիտալի սահմանափակ գործառույթի պատճառով, կարող են բախվել ֆինանսների պակասի խնդրին, որը նշանակում է, որ անհրաժեշտ է հավասարակշռություն գտնել երկու պահանջումների միջև: Մասնավորապես, եթե կոոպերատիվ ընդունվեն ներդրող անդամներ, ապա նշված հավասարակշռության շնորհիվ պետք է ապահովվել, որ կոոպերատիվի վերահսկողությունը օգտագործող անդամներից չանցնի ներդրող անդամներին:

- **Գերմանիա, Իտալիա** - ԱՅՈ, եթե կանոնադրությունը թույլ է տալիս:
- **Բուլղարիա** - դրույթներ չկան:
- **Հունգարիա** - Եթե կանոնադրությամբ թույլատրվում է: Ներդրող անդամների քանակը չպետք է գերազանցի ամբողջ անդամների 10%-ը:

7) և 8) – Նոր անդամների ընդունումը (կանոններ ընդունման մասին) և Կապիտալի փոփոխականությունը

Ադյուսակի այս կետերը վերաբերում են երկու փոխկապակցված պրոֆիլների, ընդ որում երկուսն էլ կապված են ԿՄԱ 1-ին սկզբունքով նախատեսված կոոպերատիվի սահմանման և կոոպերատիվի՝ որպես «բաց» կազմակերպության դրույթի հետ: Սա նաև կոոպերատիվի ինքնության պրոֆիլներից մեկն է, որն ուղղակիորեն կապված է կոոպերատիվների սոցիալական գործառույթի հետ՝ որպես դրական արտաքին ազդեցություն առաջացնող, այսինքն, ոչ միայն իր անդամներին, այլև համայնքին օգուտ տվող կազմակերպություն:

Փաստորեն, քանի որ կոոպերատիվը «բաց» է նոր անդամների համար, բոլոր մարդիկ, դառնալով անդամ, կարող են օգտվել այն ապրանքներից, ծառայություններից կամ աշխատատեղերից, որ կոոպերատիվը նպատակ ունի ապահովել իր անդամների համար: Կապիտալի փոփոխականության (ի տարբերություն այլ ընկերությունների հաստատագրված կապիտալի) և նոր անդամների ընդունման մասին կանոնները ծառայում են օգուտ ստանալու ցանկություն ունեցող մարդկանց համար կոոպերատիվը «բաց» դարձնելու նպատակին:

- **Գերմանիա, Իտալիա** - ընդունումը ենթակա է ղեկավարության կողմից հաստատման:
- **Բուլղարիա, Հունգարիա** - Նոր անդամների ընդունումը թույլատրվում է կառավարման խորհրդի կողմից և հաստատվում Ընդհանուր ժողովի կողմից: Մերժված թեկնածուները կարող են բողոքարկել Ընդհանուր ժողովին:

9) Նվազագույն կապիտալի պահանջը

Կոոպերատիվներում, որոնք ներդրողի կողմից ղեկավարվող ձեռնարկություններ չեն, նվազագույն կապիտալի պահանջը սահմանափակ դեր է խաղում վարկատուներին ապահովելու և վերջիններիս պաշտպանելու հարցում: Սակայն այս գործառույթը հարցականի տակ է առնվում որոշ իրավաբանների և տնտեսագետների կողմից, ընդ որում փաստարկն այն է, որ որևէ ընկերության ֆինանսավորելու մասին որոշում կայացնելիս վարկատուները հիմնվում են ոչ թե սեփական կապիտալի վրա, այլ՝ բազմաթիվ այլ տարրերի վրա: Մասնավորապես, ներդրողների տեսակետից կոոպերատիվի հուսալիությունը կարող է ավելի շատ բարձրանալ անբաժանելի պահուստների և շահույթ չհետապնդող նպատակների միջոցով, քան՝ բուն նվազագույն կապիտալի միջոցով:

- **Գերմանիա, Բուլղարիա, Հունգարիա** - Ոչ, բայց կանոնադրությամբ կարելի է ամրագրել նվազագույն կապիտալ:
- **Իտալիա** - Ոչ, բայց յուրաքանչյուր անդամ պետք է բաժանորդագրվի 25 եվրոյի չափով առնվազն մեկ փայ:

10) և 11) –Ավելցուկի հատկացումը և մասնավորապես ավելցուկի հատկացումը պարտադիր իրավական պահուստային ֆոնդերին և Պահուստների բաշխումը (ընդունելիություն և սահմանափակումներ)

Այս կետերի կոնկրետ նպատակն է ավելի շատ բան իմանալ կոոպերատիվի պահուստային ֆոնդերի իրավական տնօրինման մասին, որը խիստ կարևորվում է կոոպերատիվների օրենսդրական կարգավորման տեսակետից, ընդ որում՝ բազմաթիվ ասպեկտներով, ներառյալ վարկատուի պաշտպանությունը (հատկապես երբ օրենքը չի նախատեսում նվազագույն կապիտալ) և կոոպերատիվների սոցիալական գործառույթը (հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ օրենքը կարող է պահանջել, որ այդ ֆոնդերը կոնկրետ օգտագործվեն ոչ անդամների օգտին, ինչպես օրինակ՝ այլ կոոպերատիվների, կոոպերատիվ շարժման, համայնքի և այլն):

Ավելի ստույգ, ուշադրություն է պետք դարձնել պարտադիր օրինական պահուստային ֆոնդերի կարգավորմանը, որպեսզի պարզվի, թե արդյոք կոոպերատիվների մասին օրենքները երաշխավորում են պարտադիր պահուստային ֆոնդի ստեղծումը, և եթե այո, ապա՝ ինչպես և որքանով է այդ պահուստային ֆոնդը ձևավորվում և աճում:

Ուշադրություն է պետք դարձնել նաև պահուստների բաշխման հարցին՝ պարզելու համար, թե արդյոք պարտադիր (ինչպես նաև կամավոր) պահուստային ֆոնդերը բաշխվում են անդամներին կոոպերատիվի գոյության ընթացքում և դրա լուծարման դեպքում (տես աղյուսակի տող 18-ը): Այս առումով պետք է նշել, որ թե ԿՄԱ սկզբունքները և թե Ա193-ը մի կողմից, իսկ մյուս կողմից էլ եվրոպական կոոպերատիվ ընկերակցության կանոնակարգը նախատեսում են անբաժանելի պահուստներ:

- **Բուլղարիա** - Պահուստային և ներդրումային ֆոնդերը պարտադիր են: Տվյալ ֆոնդերի չափը համապատասխանաբար պետք է լինեն փայամասնակցային կապիտալի ոչ պակաս 20%-ի և 10%-ի չափով:
- **Հունգարիա** - Կոոպերատիվը իր հարկված շահույթի մի մասը պետք է հատկացնի կրթական ֆոնդին:
- **Գերմանիա** - պետք է նախատեսվեն կանոնադրությամբ և սովորաբար լինեն անբաժանելի:

- **Իտալիա** - տարեկան ընդհանուր շահույթի 30%-ը պետք է հատկացվի օրինական պահուստային ֆոնդին՝ նախքան որևիցե այլ հատկացում անելը, ընդ որում՝ առանց սահմանափակումների:

12) - Շահաբաժինների բաշխումն ըստ վճարված կապիտալի (ընդունելիություն և սահմանափակումներ)

Այս կետը վերաբերում է կոոպերատիվների գործունեության կարգավորման կենտրոնական հարցին և կոոպերատիվի ինքնության և կապիտալիստական (ներդրողի սեփականությունը հանդիսացող) ձեռնարկություններից կոոպերատիվի տարբերակման առանցքային տարրին, այն է՝ ավելցուկի բաշխումը անդամներին:

- **Բուլղարիա** - Սահմանափակում չկա, սակայն շահույթի բաշխումը պետք է կատարվի պահուստային և ներդրումային ֆոնդերին մասհանումներ կատարելուց հետո միայն:
- **Գերմանիա, Զուևգարիա - ԱՅՈ:**
- **Իտալիա** - ԱՅՈ, բայց սահմանափակումներ կան «հիմնականում փոխադարձ կոոպերատիվների» (mainly mutual cooperatives) առումով: Կոոպերատիվները պետք է շահույթներից պարտադիր կարգով մասնաբաժին հատկացնեն օրինական պահուստային ֆոնդին (30%) և կոոպերատիվների դաշնությունների կողմից վարվող փոխադարձ ֆոնդերին (3%):

13) –Շահաբաժինների/փոխհատուցումների/պատրոնաժի տարբերակումը գործունեության հիման վրա և գործունեության համամասնությամբ

Կապիտալիստական ձեռնարկություններում շահույթի բաշխման սովորական ձևը ներդրողին որոշակի գումարով պարգևատրելն է, որը հիմնավորվում է ներդրողի կողմից տրամադրված կապիտալով և համամասնական է այդ կապիտալին:

Կոոպերատիվների դեպքում, որոնք կառավարվում են ոչ թե ներդրողների, այլ օգտագործողների կողմից, ակնկալվում է, որ ավելցուկը պետք է բաշխվի ըստ բոլորովին այլ մոդելի, այն է՝ պատրոնաժային փոխհատուցումների տեսքով: Այս դեպքում, անդամներին ավելցուկի բաշխումը կատարվում է անդամների (որպես գնորդ, վաճառող, աշխատող)՝ կոոպերատիվի տնտեսական գործունեության մեջ ունեցած մասնակցության հիման վրա և պետք է համամասնական լինի նման մասնակցության քանակին և/կամ որակին: Այսպիսով, ի տարբերություն կապիտալիստական (ներդրողի կողմից կառավարվող) ձեռնարկության, անդամների ունեցած կապիտալը այս առումով որևիցե գործառույթ չունի, քանի որ անդամներին ավելցուկի հատկացումը նպատակ է հետապնդում ոչ թե փոխհատուցելու անդամների կողմից տրամադրված կապիտալի դիմաց, այլ՝ որպես կոոպերատիվի օգտագործողներ կամ պայմանագրային գործընկերներ՝ անդամների մասնակցության դիմաց:

- **Բուլղարիա** - Չի նշված, թե արդյոք շահույթը բաշխվում է անդամի՝ կոոպերատիվի գործունեության մեջ ունեցած մասնակցության հիման վրա (գործարքների քանակ և որակ), թե ըստ կոոպերատիվում իր ունեցած փայամասնակցային կապիտալի:
- **Զուևգարիա** - ԱՅՈ, Ընդհանուր ժողովը կորոշի, թե արդյոք հարկված շահույթը պետք է բաշխվի անդամների միջև ըստ կոոպերատիվի հետ ունեցած տնտեսական գործակցության, թե անդամների միջև ըստ կոոպերատիվում ունեցած իրենց փայամասնակցային կապիտալի:

- **Իտալիա** - Պատրոնաժը հստակ կերպով տարբերվում է շահաբաժնից: Փոխհատուցումները պետք է բաշխել կոոպերատիվի հետ անդամների փոխգործողությունների քանակի և որակի համամասնությամբ:

14) Չայնի իրավունքը

Գրեթե բոլոր երկրներում հետևում են «Մեկ անդամ, մեկ ձայն» կանոնին, որը կոոպերատիվի գործունեության կարգավորման հիմնական և էական կետերից մեկն է: Սակայն միայն մի քանի դեպքերում է, որ այս կանոնը պարտադիր է և ենթակա է աներկբա կատարման (օր.՝ Բուլղարիայում):

- **Գերմանիա, Իտալիա** - Գործում է մեկ անդամ, մեկ ձայն սկզբունքը, բայց կանոնադրությամբ կարելի է նախատեսել որոշ բացառություններ:
- **Յունգարիա, Բուլղարիա** - Մեկ անդամ, մեկ ձայն սկզբունքը:

15) Ուրտային բաժինների ժողովներ (ընդունելիություն)

Կազմակերպման ժողովրդավարական սկզբունքը, որը վերաբերում է կոոպերատիվներին, անհրաժեշտ է հարմարեցնել կոնկրետ տվյալ կոոպերատիվի բնույթին: Կոոպերատիվը վերահսկելու իրենց իրավունքն իրականացնելու՝ անդամների շահագրգռվածության բացակայության պարագայում (որը երբեմն ռացիոնալ հիմքեր է ունենում), որոշ դեպքերում նպատակահարմար լուծում կարող է հանդիսանալ ներկայացուցիչների միջոցով իրականացվող անուղղակի ժողովրդավարությունը:

- **Գերմանիա** - Պատվիրակների ժողով՝ եթե այդպիսին նախատեսված է 1500 –ից ավելի անդամ ունեցող կոոպերատիվների կանոնադրություններում:
- **Իտալիա** - Եթե նախատեսված է կանոնադրությամբ, ինչպես նաև՝ որոշակի հանգամանքների առկայության դեպքում կան անդամների որոշակի կատեգորիաների դեպքում: Դրանք նույնիսկ պարտադիր են, եթե կոոպերատիվն ունի 3000-ից ավելի անդամներ և իր գործունեությունն իրականացնում է 2 կամ ավելի շրջաններում կամ եթե ունի ավելի քան 500 անդամ և իր անդամների հետ իրականացնում է 2 տարբեր բնույթի փոխադարձ հարաբերություններ:
- **Բուլղարիա** - Այո:
- **Յունգարիա** - Սահմանվում է կանոնադրությամբ, եթե կոոպերատիվը ունի 500-ից ավելի անդամներ կամ այլ հիմնավորված դեպքերում:

16) Փոխարկում ընկերության կամ կազմակերպության իրավաբանական այլ ձևի (ընդունելիություն)

Աղյուսակի նպատակն է ստուգել, թե արդյոք կոոպերատիվների մասին օրենքները թույլ տալիս են կոոպերատիվը փոխարկել ընկերության մեկ այլ իրավաբանական ձևի, ինչպես նաև՝ թե արդյոք օրենքները սահմանափակումներ են մտցնում նման փոխարկման և/կամ դրա պայմանների հարցում, որի նպատակը պետք է լինի խուսափել այնպիսի փոխարկումից, որը կարող է հանգեցնել կոոպերատիվի՝ օրենքով սահմանված այլ նպատակներով կուտակած ռեսուրսների յուրացմանը անդամների կողմից:

- **Իտալիա** - «Հիմնականում փոխադարձ կոոպերատիվները» չեն կարող: Մնացած տեսակի կոոպերատիվները կարող են (բայց այս դեպքում դրանք պետք է իրենց միջոցները փոխանցեն փոխադարձ ֆոնդերին՝ համաժ պարտադիր նվազագույն կապիտալը, որը փոխանցվում է որպես արդյունք ստեղծված ընկերությանը):
- **Գերմանիա, Դոմինգարիա - ԱՅՈ:**
- **Բուլղարիա** - Այս մասին օրենքում դրույթներ չկան:

17) Կառավարման և վարչական խորհուրդներ/մարմիններ. արդյոք միայն անդամներն են իրավասու

Անդամների կողմից վերահսկողությունը և ինքնակառավարումը կոոպերատիվների կարգավորման այն սկզբունքներն են, որոնք կարելի է և պետք է կիրարկել տարբեր ձևերով, հաշվի առնելով տվյալ կոոպերատիվի կոնկրետ հատկանիշները, օրինակ՝ մեծությունը: Այս կետում ուշադրություն է դարձվում միայն այն հանգամանքին, թե արդյոք կառավարման և վարչական մարմինների ձևավորման հարցում գոյություն ունի որևիցե սահմանափակում, մասնավորապես՝ արդյոք այս մարմիններում ընտրվելու համար միայն կոոպերատիվի անդամներն են իրավասու:

- **Բուլղարիա, Դոմինգարիա - ԱՅՈ:**
- **Իտալիա** - Կառավարման մարմին – ՈՉ, բայց վերահսկիչ մարմնի անդամներն ընտրվում են կոոպերատիվի անդամներից: Վարչական մարմին - վարչական մարմնի անդամների մեծամասնությունը ընտրվում է կոոպերատիվի անդամների թվից:
- **Գերմանիա** - Իրավասու են միայն անդամները: Սակայն, որպես անդամ հաճախ ընդունվում են պրոֆեսիոնալ մենեջերներ՝ միայն այն նպատակով, որպեսզի իրավասու լինեն խորհուրդում ծառայելու համար (աջակից անդամներ): Կոոպերատիվների դիտորդ խորհուրդները պետք է բաղկացած լինեն առնվազն 2 անդամից:

18) Լուծարման դեպքում միջոցների հանձնումը

Եվրոպայում կոոպերատիվ ընկերակցությունների խթանման վերաբերյալ ԵՅ 2004թ. հայտարարության մեջ ասվում է. «Հանձնաժողովը անդամ երկրներին խրախուսում է ապահովել, որ կոոպերատիվների լուծարման կամ փոխարկման դեպքում կոոպերատիվների միջոցները բաշխվեն համաձայն «անշահախնդիր բաշխման» կոոպերատիվ սկզբունքի, այսինքն՝ կամ տրամադրել այլ կոոպերատիվների, որոնցում կարող են մասնակցել լուծարվող կոոպերատիվի անդամները կամ էլ տրամադրել համանման կամ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նպատակներ հետապնդող կոոպերատիվ կազմակերպությունների: Նման միջոցները հաճախ գոյանում են մի քանի սերունդների ուժերով և շարունակում են մնալ կոլեկտիվ սեփականություն, ընդ որում «արգելափակված» են մնում տվյալ կոոպերատիվների նպատակների շրջանակում: Սակայն, լավագույնս քննության առնելով իրադրությունը, պետք է հնարավորություն ստեղծել, որ կոոպերատիվի լուծարման դեպքում վերջինիս միջոցները բաշխվեն իր անդամներին»:³⁵

- **Գերմանիա** - Կարգավորվում է կանոնադրության համաձայն: Լուծարման դեպքում մնացած միջոցները կարելի է բաշխել անդամների միջև:

³⁵ **Stu** Communication from the Commission to the Council and the European Parliament, the European Economic and Social Committee and the Committee of Regions: On the Promotion of Cooperative Societies in Europe. Brussels, 23.02.2004, COM (2004)18.

- **Իտալիա** - Մնացորդային զուտ միջոցների փոխանցում փոխադարձ ֆոնդերին՝ կոոպերատիվ շարժմանը նպաստելու նպատակով:
- **Հունգարիա** - Ակտիվները բաշխվում են անդամների միջև, բացառությամբ կրթական ֆոնդի, որը փոխանցվում է այլ կոոպերատիվի կամ կոոպերատիվների ֆեդերացիայի:
- **Բուլղարիա** - Չուտ մնացորդային ակտիվների փոխանցում կոոպերատիվի անդամներին իրենց փայերի համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ կանոնադրությամբ:

19) Հարկային հատուկ մոտեցում (հիմնական միջոցառումներ)

Եվրոպայում կոոպերատիվ ընկերակցությունների խթանման վերաբերյալ ԵՅ 2004թ. հայտարարության մեջ ասվում է. «Որոշ անդամ պետություններ (ինչպես օրինակ՝ Բելգիան, Իտալիան և Պորտուգալիան) համարում են, որ կոոպերատիվ կապիտալի առանձնահատուկ բնույթին բնորոշ սահմանափակումները արժանի են հարկային հատուկ վերաբերմունքի: Օրինակ, այն փաստը, որ կոոպերատիվի բաժնետոմսերը չեն ցուցակվում և հետևաբար լայնորեն մատչելի չեն ձեռք բերման համար, գրեթե անհնարին է դարձնում կապիտալի աճը. կամ այն փաստը, որ բաժնետոմսերը մարվում են իրենց անվանական արժեքով (այսինքն, չունեն վերավաճառքի արժեք) և ցանկացած եկամտաբերություն (շահաբաժին) սովորաբար սահամանափակ է լինում՝ կարող է տարհանոգել հնարավոր նոր անդամներին: Բացի այդ, պետք է նշել, որ պահուստներին մասհանումներ կատարելու հարցում կոոպերատիվների առջև խիստ պահանջներ են դրվում: Հարկային առանձնահատուկ վերաբերմունքը կարելի է ողջունել, սակայն կոոպերատիվների կարգավորման բոլոր ասպեկտներում պետք է հետևել այն սկզբունքին, որ կոոպերատիվի իրավաբանական անձին վերապահվող որևէ պաշտպանություն կամ արտոնություն պետք է համասանական լինի իրավական արգելքներին, հավելյալ սոցիալական արժեքին կամ տվյալ իրավական ձևին բնորոշ սահմանափակումներին և չպետք է հանգեցնի անբարեխիղճ մրցակցության: Բացի այդ, շնորհիվ որևէ այլ «առավելություն» չպետք է թույլ տա կոոպերատիվ ձևի անցանկալի օգտագործում ոչ *ճշմարիտ* կոոպերատիվների կողմից՝ որպես տվյալների պատշաճ բացահայտումից և կորպորատիվ կառավարման պահանջներից խուսափելու միջոց:

Ինչ վերաբերում է այսպիսի հատուկ վերաբերմունքի կիրառման հատուկ միջոցառումներին, դրանցից որոշները հստակորեն և սերտորեն կապված են կոոպերատիվների առանձնահատուկ բնույթի հետ (ինչպես, օրինակ, այն, ըստ որի անդամների հետ իրականացվող գործունեությունից ստացված ավելցուկային զուամարը չի համարվում շահույթ՝ հարկման տեսակետից կամ այն, ըստ որի օրինական անբաժանելի պահուստային ֆոնդին հատկացված ավելցուկը հարկման ենթակա չէ կամ ենթակա է մասամբ): Վերոնշյալ հատուկ հարկային միջոցառումները ոչ միայն համապատասխանում են կոոպերատիվների բնույթին, այլև կոոպերատիվին խրախուսում են ծավալել սեփական բնույթին հարիր գործունեություն:

- **Գերմանիա** - Ոչ:
- **Իտալիա** - ԱՅՈ: Անբաժանելի պահուստային ֆոնդին հատկացված եկամտի մասն ազատվում է շահութահարկից: Պատրոնաժի ձևով անդամներին բաշխված եկամուտը նվազեցվում է հարկվող եկամտից:
- **Հունգարիա** - Շահույթի այն մասը, որը մասհանվում է պահուստային ֆոնդին, ազատվում է հարկից:
- **Բուլղարիա** - ԱՅՈ: Շահութահարկից մասնակի ազատում շահույթի այն մասով, որը ուղղվում է ներդրումային ֆոնդին: Հարկերից ազատում կոոպերատիվի ձևավորման փուլում և լուծարման փուլում:

20) Վերահսկման (աուդիտի) պետական և/կամ այլ ձևեր, ներառյալ՝ կոոպերատիվներին բնորոշ նախազգուշական և ոչ թե զուտ ֆինանսական վերահսկողություն (հիմնական օբյեկտներ)

Կոոպերատիվների ստուգումը միշտ չէ, որ արդարացված է այն փաստով, որ կոոպերատիվը ենթակա է հարկային հատուկ վերաբերմունքի, քանի որ այն ունի ավելի լայն ընդգրկում և հիմնականում կենտրոնանում է ստուգման ենթարկվող կոոպերատիվների զուտ կոոպերատիվ բնույթի վրա (կան օրինակներ, երբ ստուգումն իրականացվում է նույնիսկ այն պարագայում, երբ կոոպերատիվները չեն օգտվում հատուկ հարկային վերաբերմունքից. տես Լեհաստանի օրինակը): Ավելին, որոշ երկրներում (օր.՝ Իտալիայում և Լեհաստանում), օրենքն ուղղակիորեն ընդունում է, որ կոոպերատիվների ստուգումը նպատակաուղղված է ոչ միայն կոոպերատիվներն աուդիտի ենթարկելուն, այլև դրանց օժանդակելուն, խորհուրդներ տալուն և աջակցելուն:

Ստուգումը որոշ դեպքերում իրականացնում է պետությունը կամ պետական մարմինները, իսկ այլ դեպքերում էլ՝ կոոպերատիվների դաշնությունները, այսինքն՝ կոոպերատիվ շարժման՝ պետության կողմից ճանաչված ներկայացուցչական կազմակերպությունները. որոշ դեպքերում (տես Ավստրիայի և Գերմանիայի օրինակները³⁶) կոոպերատիվները պարտադրված են դառնալ այդ կազմակերպություններից մեկի անդամ (պարտադիր անդամակցություն). այլ դեպքերում էլ (տես Իտալիայի օրինակը), նման պահանջ չի դրվում, իսկ որևիցե դաշնության անդամ չհանդիսացող կոոպերատիվները ստուգման են ենթարկվում պետության կողմից:

Հարկ է նշել, որ դաշնությունների կողմից կոոպերատիվների պարտադիր ստուգումներ են նախատեսվում այն երկրներում, որտեղ կոոպերատիվ շարժումը կայացած և զարգացած է (առաջին հերթին՝ Ֆրանսիայում, Գերմանիայում. Իտալիայում, Իսպանիայում):

- **Գերմանիա** - ԱՅՈ: Կատարվում է նախազրանցումային աուդիտ կոոպերատիվ աուդիտորական դաշնությունների կողմից:
- **Իտալիա**- ԱՅՈ:
- **Հունգարիա, Բուլղարիա**- ՈԶ:

³⁶EURICSE, 2010.

Կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումները հարևան Վրաստանում

Վրաստանը նախաձեռնել է կոոպերատիվների օրենսդրական լայնածավալ բարեփոխումներ: Վրաստանի խորհրդարանում ներկայումս քննարկվում է «Ֆերմերային խմբերի և ֆերմերների ասոցիացիաների մասին» ՎՅ օրենքը³⁷, որը ամենայն հավանականությամբ կընդունվի 2013թ. մայիսին: Մինչև այս օրենքի դրույթներին անդրադառնալը հակիրճ ներկայացնենք Վրաստանի կոոպերատիվների օրենսդրական դաշտը:

Ի տարբերություն Հայաստանի, Վրաստանում կոոպերատիվների գործունեությունը կարգավորվում է ոչ թե քաղաքացիական օրենսգրքով, այլ «Ձեռնարկատերերի մասին» ՎՅ օրենքով և «Սպառողական կոոպերացիայի մասին» ՎՅ օրենքով³⁸: Շուտով այս օրենքներին կմիանա նաև «Ֆերմերային խմբերի և ֆերմերների ասոցիացիաների մասին» ՎՅ օրենքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, թե կոոպերատիվների իրավական հիմնական հոդվածները որ օրենքում են, արդեն պարզ է, որ կոոպերատիվները Վրաստանում առևտրային կամ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություններ են: Այս օրենքում կոոպերատիվներին է վերաբերում 9 հոդված (հոդվածներ 60-68), որոնց մի մասը ձևափոխվել և ներդաշնակեցվել է Կոոպերատիվների միջազգային ալյանսի կոոպերատիվների ինքնության հռչակագրին:

«Ֆերմերային խմբերի և ֆերմերների ասոցիացիաների մասին» ՎՅ օրենքի հետ խորհրդարան է ներկայացվել նաև փոփոխությունների փաթեթ, որը վերաբերում է վերը նշված 9 հոդվածներին, Վրաստանի հարկային օրենսգրքին և քաղաքացիական օրենսգրքին:

Մասնավորապես 60-րդ հոդվածը տալիս է կոոպերատիվի նոր սահմանումը՝ համաձայն Կոոպերատիվների միջազգային ալյանսի և Ա193-ի և հաշվի առնելով շահույթի հետ կապված կոոպերատիվ մոտեցումը առ այն, որ կոոպերատիվը որպես կանոն չպետք է կենտրոնանա շահույթի ստացման նպատակի վրա, այլ պետք է գործի ըստ կոոպերատիվի սկզբունքների: Հոդվածում ներկայացված են ԿՄԱ հայտնի 7 սկզբունքներից 4-ը, որպես ընդհանուր սկզբունքներ, իսկ մնացածը այս կամ այն չափով ինտեգրացված են այլ հոդվածներում: Ըստ այս հոդվածի, հետևյալ տեսակի կոոպերատիվներ կարող են գործել Վրաստանում՝ **գյուղատնտեսական կոոպերատիվներ**, որոնք կներկայացվեն որպես ֆերմերային խմբեր և կկարգավորվեն «Ֆերմերային խմբերի և ֆերմերների ասոցիացիաների մասին» ՎՅ նոր օրենքով, **հումքի մատակարարման կոոպերատիվներ**, **մասսայական սպառման ապրանքների մեծածախ և մանրածախ գնումներով և վաճառքով զբաղվող կոոպերատիվներ**, **վարկային միություններ և սպառողական կոոպերատիվներ**, որոնք կարգավորվում են «Սպառողական կոոպերացիայի մասին» օրենքով: 61-րդ և 62-րդ հոդվածները կարգավորում են կոոպերատիվի անդամության հարցերը, 64-66-րդ հոդվածները ներկայացնում են Ընդհանուր ժողովի, ընտրությունների, ներկայացուցիչների հանդիպումների, վերստուգիչ խորհրդի և կառավարման խորհրդի հետ կապված դրույթները: 68-րդ հոդվածը կարգավորում է շահույթի և վնասի բաշխման հարցերը, ըստ որի ֆինանսական տարվա արդյունքների հաշվետվությունը հաստատելուց հետո ֆինանսական տարվա շահույթը կամ վնասը պետք է բաշխվի կոոպերատիվի անդամների միջև: Այս հոդվածում նշվում է, որ կոոպերատիվի կանոնադրությամբ պետք է ամրագրվի շահույթի որոշակի մասի՝ կոոպերատիվի պահուստային ֆոնդին փոխանցման հնարավորությունը և կանոնները:

Այսպիսով, առաջարկվող վերոնշյալ փոփոխությունները համահունչ են կոոպերատիվների միջազգային իրավունքի նորմերին:

³⁷ Stu Draft Law of the Republic of Georgia On Farmers Groups and Farmers Associations.

³⁸ Act of Georgia on Consumer Cooperation, 1997.

Մինչև նոր օրենքին անդրադառնալը, կարևոր է մասնակիորեն ներկայացնել նաև Վրաստանի գործող օրենքը «Սպառողական կոոպերացիայի մասին», որն ընդունվել է 1997թ.-ին: Չնայած ստացած խորհրդային նմանօրինակ ժառանգությանը, ինչ Հայաստանը, այս օրենքը զարմանալիորեն բավականին մոտ է սպառողական կոոպերատիվների միջազգային օրենսդրական դրույթներին: Օրենքում տրված են սպառողական կոոպերացիայի, սպառողական կոոպերատիվների, սպառողական կոոպերատիվների միությունների, անդամ/գործընկերների, ներկայացուցիչների, մուտքի վճարների, փայտափրակային կապիտալի, կոոպերատիվի գույքի, պահուստի և անբաժանելի ակտիվների կամ ֆոնդերի սահմանումները և բացատրությունը:

Ըստ այս օրենքի, սպառողական կոոպերատիվը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից, կամավոր սկզբունքներով, համատեղ գործունեության համար ձևավորած փայամասնակցային կապիտալով ստեղծված ընկերակցություն է, որ նպատակն է բավարարել իր անդամների տնտեսական և մշակութային կարիքները և արդյունավետորեն օգտագործել նյութական և ֆինանսական ռեսուրսները փոխօգնության հիման վրա:

Սպառողական կոոպերատիվը իրավաբանական անձ է: Օրենքը կարգավորում է սպառողական կոոպերատիվի գործունեության շրջանակը, նպատակները, անդամության կանոնները, անդամների իրավունքներն ու պարտականությունները, կոոպերատիվի կառավարման և վերահսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները, փայամասնակցային կապիտալի չափը, կոոպերատիվի գույքի ձևավորման և շահույթի բաշխման կանոնները, վերակազմավորման և լուծարման դրույթները:

Այս դրույթները ուսումնասիրելով, պարզ է դառնում, որ Վրաստանում սպառողական կոոպերատիվը նույնպես տնտեսական կամ առևտրային գործունեությամբ զբաղվող ընկերություն է, որի անդամները, անկախ իրենց ունեցած փայամասնակցությունից, ունեն մեկ ձայնի իրավունք և կոոպերատիվների պարտավորությունների համար պատասխանատու են միայն կոոպերատիվում ունեցած իրենց գույքի չափով (սահմանափակ պատասխանատվություն):

Օրենքում հստակ կերպով նշված է, որ կոոպերատիվի միջոցները գոյանում են անդամների նյութական և ֆինանսական ներդրումներից, ապրանքների և ծառայությունների վաճառքից, տնտեսական այլ գործունեությունից ստացված եկամուտներից, դրամաշնորհներից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Կոոպերատիվի միջոցները դասակարգվում են բաժանելի և անբաժանելի մասերի: Կոոպերատիվի անբաժանելի ակտիվները համարվում են կոոպերատիվի գործունակության երաշխիք դրա գոյության ամբողջ ընթացքում:

Օրենքով սահմանված են սպառողական կոոպերատիվների և դրանց միությունների ակտիվների իրավական պաշտպանության հիմքերը, կոոպերատիվների ինքնավարության և անկախության դրույթները: Օրենքում նույնիսկ տեղ են գտել կոոպերատիվի միջազգային տնտեսական գործունեության հարցերը, կոոպերատիվների շարժման աջակցության, կոոպերատիվների սկզբունքների և արժեքների լուսաբանման հարցերը, նույնիսկ այն, թե ով է ներկայացնելու Վրաստանի սպառողական կոոպերատիվների շահերը Կոոպերատիվների միջազգային ալյանսում:

«Ֆերմերային խմբերի և ֆերմերների ասոցիացիաների մասին» ՎՊ օրենքը կարելի համարել «զարգացման» օրենք: Օրենքի նպատակն է սահմանել ֆերմերային խմբերի և ասոցիացիաների ձևավորման իրավական հիմքերը գյուղատնտեսության զարգացմանն աջակելու նպատակով: Օրենքը նաև նպատակ է հետապնդում ձևավորել ֆերմերային խմբերի և ասոցիացիաների ստեղծման համար նպաստավոր օրենսդրական միջավայր, ստեղծել համապատասխան հարկային միջավայր, նվազեցնել վարչարարական արգելքները, նրանց գործունեության համար սահմանել ժողովրդավարության, կամավորության և ինքնավարության սկզբունքները:

Օրենքում տրված են հետևյալ տերմինների սահմանումները՝ գյուղատնտեսական հողեր, գյուղատնտեսական գործունեություն, գյուղմթերք, ֆերմեր, ֆերմերային խումբ, ֆերմերների

ասոցիացիա, ֆերմերային խմբի անդամ և ասոցիացիայի անդամ, անդամների տնտեսական մասնակցություն, ժողովրդավարական վերահսկողություն:

Ֆերմեր է համարվում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական կամ իրավաբանական անձը: Իսկ ֆերմերային խումբը ֆերմերների կողմից ստեղծված կամավոր և ինքնավար կազմակերպություն է՝ կոոպերատիվի կազմակերպարարական ձևով, այս օրենքի և «Ձեռնարկատերերի մասին» ՎՀ օրենքի համաձայն, որը ապահովում է նյութական և տեխնիկական ռեսուրսների համատեղ մատակարարում և օգտագործում, գյուղմթերքի արտադրության, վաճառքի և վարկային միջոցների թափանցիկ մատչելիություն:

Հետաքրքրական է, որ օրենքը պարտադրում է անվանման մեջ անպայման օգտագործել «ֆերմերային խումբ» բառակապակցությունը: Չնայած, որ ֆերմերային խմբի կազմակերպարարական ձևը ըստ օրենքի կոոպերատիվն է, օրենքը բոլոր դեպքերում պարտադրում է ֆերմերային խմբի անվանման մեջ օգտագործել ֆերմերային խումբ բառակապակցությունը, օրինակ՝ Կախեթի ֆերմերային խումբ կամ Կախեթի խաղող արտադրողների ֆերմերային խումբ:

Սա ամենայն հավանականությամբ արվում է կոոպերացիայի նոր իմիջի ձևավորման, կոոպերատիվ-կոլխոզ շփոթումներից խուսափելու և խորհրդային անցյալից ազատվելու նպատակով:

Ֆերմերային խմբի ձևավորումը նպատակ է հետապնդում բարձրացնելու ֆերմերների համատեղ գործունեության արդյունավետությունը ավելի շատ օգուտներ ստանալու համար, բարձրացնելու արտադրողականության մակարդակը ծախսերի նվազեցման միջոցով, բարելավելու շուկայահանման կառավարումը գյուղմթերքի վաճառքի ծավալների բարձրացման նպատակով և այլն:

Ֆերմերների ասոցիացիան (ընկերակցությունը) ֆերմերների և ֆերմերային խմբերի կամավոր միավորում է, որն ունի ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ այս օրենքի և ՎՀ քաղօրենսգրքի համաձայն: Ասոցիացիաների ստեղծումը նպատակ է հետապնդում աջակցելու անդամ ֆերմերներին և ֆերմերային խմբերին հետևյալ հարցերում.

- ֆերմերների և ֆերմերային խմբերի կարողությունների զարգացում, ուսուցումներ և վերապատրաստումներ,
- իրավաբանական խորհրդատվության, տեխնիկական աջակցության տրամադրում, նորարար տեխնոլոգիաների փոխանցում,
- ընդհանուր ռազմավարական պլանավորում,
- շուկայի վերլուծություն և օրենսդրական միջավայրի պաշտպանություն:

Ֆերմերների ասոցիացիան իր անվանման մեջ բոլոր դեպքերում պետք է ունենա «ֆերմերների ասոցիացիա» բառակապակցությունը:

Փաստորեն ֆերմերային խմբերը գրանցվում են որպես կոոպերատիվներ, որոնք առևտրային կազմակերպություններ են, իսկ ֆերմերների ասոցիացիաները գրանցվում են որպես ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք կոչված են կրթական, հետազոտական, տեխնիկական և այլ բնույթի աջակցություն տրամադրելու իրենց անդամ ֆերմերներին և ֆերմերային խմբերին (կոոպերատիվներին):

Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ շահույթի առավելագույն բաշխման մոտեցում չպետք է դրսևորել ֆերմերային խմբում, այլ պետք է սահմանել շահույթի սահմանափակ բաշխման քաղաքականություն՝ համաձայն կոոպերատիվի գործունեության սկզբունքների և կանոնադրության: Օրենքում կրկին տեղ են գտել ԿՄԱ սկզբունքները (տես նաև «Ձեռնարկատերերի մասին» ՎՀ օրենքի 60-րդ հոդվածը):

Օրենքի 8-րդ հոդվածը դասակարգում է ֆերմերային խմբերի տեսակները՝ կախված գործունեության հիմնական ուղղություններից: Ֆերմերային խմբերի տեսակներն են՝

- գյուղմթերքի համատեղ արտադրությամբ և վաճառքով զբաղվող ֆերմերային խումբ,
- գյուղմթերքի համատեղ վերամշակմամբ և վաճառքով զբաղվող ֆերմերային խումբ,
- գյուղատնտեսական գործունեության համար անհրաժեշտ ներդրանքների, տեխնիկական ռեսուրսների և ծառայությունների համատեղ մատակարարմամբ զբաղվող ֆերմերային խումբ,
- փոխադարձ ֆինանսական մեխանիզմների կիրառմամբ զբաղվող ֆերմերային խումբ,
- գյուղմթերքի սառնարանային պահպանմամբ և տեղափոխմամբ զբաղվող ֆերմերային խումբ,
- աշխարհագրական տեղանունների, սկզբնաղբյուրի ճանաչման կամ ավանդական մասնագիտությունների, ինչպես նաև որակի սխեմաների հարցերով զբաղվող ֆերմերային խումբ:

Օրենքով ֆերմերային խմբերին թույլատրվում է վաճառել ոչ անդամների գյուղմթերքը, պայմանով, որ ոչ անդամի հետ իրականացված տնտեսական գործառույթի արժեքը/ծավալը չպետք է գերազանցի սեփական անդամների հետ ունեցած տնտեսական գործառույթների ծավալներին:

Ֆերմերային խմբի ձևավորման համար անհրաժեշտ է առնվազն 5 անդամ/գործընկեր: Օրենքով նշվում է, որ անդամները պետք է պատրաստական լինեն ֆերմերային խմբում տնտեսական մասնակցության համար, այսինքն՝ մասնակցեն իրենց փայամասնակցային կապիտալով, աշխատուժով և այլ ռեսուրսներով:

Օրենքը սահմանում է, թե ինչ դրույթներ պետք է ունենա ֆերմերային խմբի և ֆերմերների ասոցիացիայի կանոնադրությունը: Հետևյալ հիմնական տեղեկատվությունն է անհրաժեշտ ունենալ ֆերմերային խմբերի կանոնադրություններում.

- ֆերմերային խմբի անվանումը,
- ֆերմերային խմբի իրավաբանական հասցեն,
- ֆերմերային խմբի անդամության հարցերը, ներառյալ նվազագույն անդամակցության ժամանակահատվածը, անդամության դադարեցման կանոններ, իրավունքներ և պարտականություններ, խախտման դեպքում պատժամիջոցներ, անդամության փոխանցման կամ ժառանգության հարցերը անդամի մահի դեպքում,
- ներկայացուցիչների հրավիրման կանոններն ու ընթացակարգերը,
- մուծումների, փայերի նվազագույն և առավելագույն չափերը,
- տնտեսական գործունեության մասշտաբից կախված կառավարման մարմինները, տնօրենների քանակը, ընտրության կարգը, ժամկետները,
- վերստուգիչ խորհրդի կազմը, ընտրության կարգը,
- հիմնադիր անդամների քանակի մասին տեղեկատվություն,
- շահույթի, վնասի բաշխման կանոններ և ընթացակարգեր,
- որոշումների կայացման և քվեարկության կանոններ,
- անդամավճարի չափ և վճարման պայմաններ,
- ներքին աուդիտի կանոններ, եթե նման գործառույթ անհրաժեշտ է,
- վեճերի լուծման ընթացակարգեր,
- ոչ անդամ ներդրողների հետ հարաբերությունների կանոններ,
- տեղեկատվության փոխանցման կառավարման քաղաքականություն:

Օրենքի 6-րդ բաժինը կարգավորում է ֆերմերային խմբի ֆինանսական կառուցվածքը: Անդամների պարտադիր մասհանումների չափը պետք է սահմանվի ֆերմերային խմբի կանոնադրությամբ: Խմբի փայամասնակցային կապիտալի ընդհանուր չափը որոշվում է ըստ անդամների քանակի: Անդամների ֆինանսական պատասխանատվությունը սահմանափակվում է խմբում ունեցած իրենց փայով: Անդամների փայերը անբաժանելի են, ենթակա չեն փոխանցման և դրանց արժեքը չի

կարող աճել: Անկախ անդամների ունեցած փայամասնակցային կապիտալից, ֆերմերային խմբի հետ ունեցած գործունեության քանակից կամ որակից, Ֆինանսական ավելցուկների և շահույթի բաշխումը պետք է սահմանափակ լինի և չգերազանցի կանոնադրությամբ սահմանված նորմերը:

Ֆերմերային խմբերը կարող են ստեղծել պահուստային, կրթական, գործառնական և այլ տեսակի ֆոնդեր, որոնց կանոնակարգումը պետք է տրվի խմբերի կանոնադրությամբ:

Ինչպես նշեցինք, այս օրենքը կարելի է դիտարկել որպես զարգացման օրենք: Օրենքի 8-րդ բաժինը ամբողջությամբ վերաբերում է պետության և ֆերմերային խմբերի միջև հարաբերությունների կարգավորմանը և աջակցության մեխանիզմներին:

Պետական բյուջեում և շուկայում տիրող իրավիճակից կախված՝ ֆերմերային խմբերը կարող են իրենց ստեղծման և զարգացման համար պետական աջակցություն ստանալ: Աջակցության հետևյալ ոլորտներն են առանձնացվել օրենքում.

- ա) գյուղատնտեսական և սոցիալ-մշակութային ավանդույթների վերականգնում և զարգացում,
- բ) աջակցություն ֆերմերային խմբերին կրթական և գիտասփյուռ ծրագրերի միջոցով, ֆերմերային խմբերի համար ժամանակակից տեխնոլոգիաների և նորարարությունների մատչելիության ապահովում,
- գ) ֆերմերային խմբերի համար նպաստավոր օրենսդրական, հարկային և վարկավորման միջավայրի ձևավորման նպատակով անհրաժեշտ միջոցառումների իրականացում:

Ֆերմերային խմբերի հաջող գործունեության համար պետությունը պետք է նպաստավոր և արտոնյալ մեխանիզմներ ստեղծի: Օրինակ՝ ֆերմերային խմբերի ստեղծման համար տարեկան ֆինանսական աջակցություն, ոչ ավելի քան առաջին 5 տարիների համար: Այս աջակցությունը կարող է փակել ֆերմերային խմբի ներդրումային ծախսերը:

Պետությունը կարող է աջակցություն տրամադրել նաև խմբի գործառնական ֆոնդին՝ նախապես հստակորեն հիմնավորված ծախսերի պարագայում: Նման աջակցությունը կարելի է հաշվարկել որպես ֆերմերային խմբի կողմից շուկայահանված արտադրանքի արժեքի որոշակի տոկոս: Հետևյալ ծախսերը ենթակա չեն իրականացվելու գործառնական ֆոնդին հատկացված պետական աջակցությամբ.

- արտադրական ծախսեր
- վարչական և անձնակազմի ծախսեր
- աուքսորսինգի կամ ենթապայմանագրային ծախսեր
- պետական տուրքեր
- ներդրումներ այլ ընկերությունների բաժնետոմսերում
- ապահովագրական ծախսեր, բացի բերքի կամ անասունների ապահովագրությունից
- կառավարման մարմինների հանդիպումների կազմակերպման ծախսեր
- վարձակալված գույքի գործառնական ծախսեր
- վերականգնվող ավելացված արժեքի հարկ
- ներդրումներ անհատ անդամների միջոցներում՝ ֆերմերային խմբի ընդհանուր նպատակներից դուրս

Գործառնական ֆոնդերին հատկացվող պետական աջակցության դեպքում որպես պարտադիր պայման նշվում է, որ հատկացվող աջակցության առնվազն 10 տոկոսը պետք է ուղղվի բնապահպանական միջոցառումներին:

Ֆերմերային խմբերը արտոնյալ կարգավիճակ են ստանում հանրային ծառայությունների ստացման մատչելիության առումով, օրինակ՝ խորհրդատվական, հետազոտական կամ գիտասփյուռ ծառայություններից օգտվելու դեպքում:

Պետական աջակցություն կարող է տրամադրվել շուկայական տեղեկատվական համակարգերի ստեղծման համար, հիմք ընդունելով Ֆերմերային խմբերի կամավոր պայմանագրային մասնակցությունը՝ ֆերմերային խմբերից ստացված տվյալների հիման վրա տվյալների բազաներ ստեղծելու և շուկայական հետազոտություններ անելու նպատակով:

Պետությունը պարտավորվում է համապատասխան տեղեկատվական, վերլուծական և վիճակագրական համակարգ ձևավորել, որը կբարելավի ֆերմերային խմբերի առևտրային գործունեությունը: Մասնավորապես, այդ համակարգերը կարող են լինել հետևյալ ձևով՝

- ֆերմերային խմբերի տնտեսական գործունեության հետ կապված և համապատասխանորեն դասակարգված իրավական ակտերի և օրենքների բազա,
- շուկայահանման պահանջների, շուկայի միտումների և վիճակագրական վերլուծությունների բազա,
- գոյություն ունեցող հանրային վիճակագրական հրապարակումների հարմարեցում ֆերմերային խմբերի տեղեկատվական կարիքներին համապատասխան (օրինակ՝ համատարած հաշվառման կամ հարցումներից ստացվող):

Պետական աջակցություն կարող է տրամադրվել գյուղմթերքի արտադրության և գյուղատնտեսական մթերքներով պատրաստվող սննդամթերքի արտադրության կոնկրետ մեթոդներին ուղղված տեղեկատվական միջոցառումների և ապրանքախթանման բարոգարչավմների համար:

Նախընտրելի են հետևյալ ուղղությունները.

- ա) հանրային կապերի զարգացմանն ուղղված միջոցառումներ,
- բ) գովազդային և գյուղմթերքի վաճառքի խթանման միջոցառումներ, որոնք ուղղված են շեշտադրելու ֆերմերային խմբերի կողմից արտադրված գյուղմթերքի առանձնահատուկ առավելությունները որպես «վրացական ապրանք», յուրահատուկ արտադրական մեթոդները, սննդարար և առողջարար հատկությունները և բնապահպանական մոտեցումները,
- գ) ֆերմերային խմբերի կողմից ներդրվող որակի համակարգերը՝ ներառյալ օրգանական գյուղատնտեսությունը,
- դ) ցուցահանդեսների, համոտեսների, տոնավաճառների մասնակցություն՝ ուղղված Վրաստանի ֆերմերային խմբերի արտադրանքի հեղինակության բարձրացմանը:

Պետական աջակցություն կարող է տրամադրվել նաև ֆերմերային խմբերի այն արտադրանքի համար, որը արտադրվել է համատեղ ստեղծված որակի սխեմաների շրջանակում, օրինակ՝ աշխարհագրական տեղանունների պահպանման, ճանաչման հետ կապված, սկզբնաղբյուրի ճանաչման հետ կապված որակի սխեմաներ:

Օրենքում կա նաև առանձին հոդված, որը վերաբերում է ֆերմերային խմբերի հետբերքահավաքային և արտահանման կարողությունների հզորացմանն ուղղված պետական աջակցության հնարավորությանը: Օրենքում մասնավորապես ասվում է, որ Վրաստանի կառավարությունը բոլոր անհրաժեշտ միջոցառումները կիրականացնի վրացական գյուղմթերքի արտահանումը ընդլայնելու և ֆերմերային խմբերի հետբերքահավաքային կարողությունները զարգացնելու համար: Անհրաժեշտության դեպքում այս առումով կկնքվեն համապատասխան միջազգային պայմանագրեր:

Օրենքը բավականին հարկային արտոնություններ է սահմանում ֆերմերային խմբերի համար: Նախ հարկային օրենսգրքով որոշակի փոփոխություններ են առաջարկվում, ըստ որի, եթե ֆիզիկական անձը զբաղվում է գյուղատնտեսությամբ և նրա եկամուտները մեկ օրացուցային տարվա կտրվածքով չեն գերազանցել 200000 լարին (մոտ 50 մլն դրամ), ապա նա ազատվում է եկամտահարկից: Օրենքով նախատեսվում է ֆերմերային խմբերին ազատել շահութահարկից: Սա վերաբերում է ոչ միայն խմբի կողմից տնտեսական գործունեության միջոցով ձևավորած շահույթին, այլև անդամների միջև բաշխված և ֆոնդերին մասհանված շահույթի մասնաբաժնին: Ֆերմերային խմբերը նաև ազատվում են գույքահարկից, այն շենքերի, շինությունների և գույքի

մասով, որոնք բացառապես օգտագործվում են ֆերմերային խմբի տնտեսական գործունեությունը իրականացնելու համար:

Հաջորդ արտոնությունը ֆերմերային խումբը ստանում է ակցիզային հարկի առումով: Ըստ օրենքի, գյուղատնտեսական արտադրության մեջ օգտագործվող վառելանյութի համար վճարված գնից անհրաժեշտ է կատարել ակցիզային հարկի վերահաշվարկ և հետվճարում: Վերահաշվարկ և փոխհատուցում կատարվում է համապատասխան փաստաթղթերը (զնված դիզվառելիքի ծավալը հաստատող ապրանքագրեր և այլն) ներկայացնելուց հետո:

Ինչպես տեսնում ենք, Վրաստանը բազմակողմանիորեն աջակցող պետական քաղաքականություն է մշակել ֆերմերային խմբերի գործունեության խթանման համար:

Հաջորդ բաժնում փորձենք ներկայացնել կոոպերատիվների խթանման պետական քաղաքականության այն միջազգային փաստաթղթերը, որոնք լանորեն շրջանառվում են և հաստատվել են անդամ երկրների կառավարությունների կողմից և ուղեցույց կարող են հանդիսանալ կոոպերատիվների մասին օրենքների և քաղաքականության մշակման և բարելավման համար:

Կոոպերատիվների խթանման պետական քաղաքականությունը

Ա193-ը, ՄԱԿ-ի «Կոոպերատիվների զարգացման համար նպաստավոր միջավայրի ստեղծմանն ուղղված ուղեցույցը» և Եվրոպական հանձնաժողովի «Եվրոպայի կոոպերատիվ հանրությունների խթանմանն» ուղղված 2004թ. հայտարարությունը կոոպերատիվների խթանման համար պետական քաղաքականությունների ձևավորման հստակ շրջանակ են առաջարկում: Այս երեք միջազգային փաստաթղթերն էլ, կարելի է ասել, գործողությունների փաթեթ են առաջարկում երկրների կառավարություններին կոոպերատիվների խթանմանն ուղղված համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով: Մասնավորապես Ա193-ը նշում է, որ անկախ երկրների զարգացածության մակարդակից, անհրաժեշտ է պատշաճ միջոցներ ձեռք առնել հետևյալ հարցերում կոոպերատիվներին օգնելու նպատակով՝

- հիմնել և զարգացնել եկամտաբեր գործունեություն և կայուն, պատշաճ զբաղվածություն.
- կրթության և ուսումնաստվական աշխատանքի միջոցով զարգացնել մարդկային ռեսուրսների կարողությունները, կոոպերատիվ շարժման առավելություններն ու օգուտները.
- զարգացնել կոոպերատիվների գործարար ներուժը, ներառյալ ձեռնարկչական և կառավարման կարողությունները.
- ամրապնդել դրանց մրցունակությունը, ինչպես նաև մատչելի դարձնել շուկան և հաստատակարգային (ինստիտուցիոնալ) ֆինանսավորումը.
- ավելացնել խնայողությունները և ներդրումները.
- բարելավել սոցիալական և տնտեսական բարեկեցությունը, հաշվի առնելով խտրականության բոլոր ձևերի վերացման անհրաժեշտությունը³⁹.

Անհրաժեշտ է խրախուսել կոոպերատիվների աշխատանքը հեշտացնող հատուկ միջոցառումների իրականացումը՝ դրանց անդամների և հանրության կարիքներին, այդ թվում՝ հասարակության խոցելի խմբերի կարիքներին արձագանքելու նպատակով՝ վերջիններիս սոցիալական ներառումը ապահովելու համար:

³⁹Տես Ա193, կետ 4:

Ա193-ի 2-րդ և 3-րդ բաժինները անդրադառնում են կոոպերատիվների խթանման քաղաքականությունների ընդհանուր շրջանակին, կառավարությունների դերին և այդ քաղաքականությունների իրականացմանը: Կառավարությունները պետք է ապահովեն կոոպերատիվների բնույթին ու գործառույթին, արժեքներին և սկզբունքներին համահունչ աջակցող քաղաքականություն և օրենսդրական դաշտ, որոնք՝

ա) կստեղծեն հաստատակարգային շրջանակ, որը թույլ կտար կոոպերատիվները գրանցել հնարավորինս արագ, հստակ, մատչելի և արդյունավետ ձևով:

բ) կխթանեն համապատասխան պահուստների ստեղծմանը նպատակաուղղված քաղաքականությունը, որի առնվազն մի մասը կարող է լինել անբաժանելի, ինչպես նաև՝ կոոպերատիվների ներքին համերաշխության ֆոնդեր:

գ) թույլ կտան ձեռնարկել միջոցներ կոոպերատիվների վերահսկողությունն այնպիսի պայմաններով իրականացնելու համար, որոնք համահունչ են կոոպերատիվների բնույթին և գործառույթներին:

դ) կխրախուսեն կոոպերատիվների՝ որպես ինքնավար և ինքնակառավարվող ձեռնարկությունների, զարգացմանը, մասնավորապես այն ոլորտներում, որտեղ կոոպերատիվները կարևոր դեր են խաղում կամ մատուցում են ծառայություններ, որոնք այլ կառույցները չեն մատուցում:

Ազգային քաղաքականությունը պետք է ապահովի, որ կոոպերատիվները չհիմնադրվեն կամ չօգտագործվեն ի խախտումն աշխատանքային օրենսդրության կամ չծառայեցվեն քողարկված աշխատանքային հարաբերություններին, ինչպես նաև պետք է պայքարի աշխատողների իրավունքները ոտնահարող կեղծ կոոպերատիվների դեմ՝ ապահովելով աշխատանքային օրենսդրության կիրառումը բոլոր ձեռնարկություններում: Քաղաքականությունը պետք է խթանի սեռային հավասարությունը կոոպերատիվներում և դրանց աշխատանքում, խթանի կոոպերատիվների լավագույն աշխատանքային գործելակերպերը խթանող միջոցները, ներառյալ համապատասխան տեղեկատվության մատչելիությունը:

Կառավարությունը պետք է հեշտացնի կոոպերատիվների համար աջակցող ծառայությունների մատչելիությունը, որպեսզի ուժեղացնի դրանց գործարար կենսունակությունը և աշխատանք և եկամուտ ստեղծելու կարողությունը: Այս ծառայությունները պետք է, հնարավորության դեպքում, ներառեն՝

- մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրեր,
- հետազոտական և կառավարման վերաբերյալ խորհրդատվության ծառայություններ,
- ֆինանսների և ներդրումների մատչելիություն,
- հաշվապահական և աուդիտորական ծառայություններ,
- կառավարման գծով տեղեկատվական ծառայություններ,
- տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ծառայություններ,
- խորհրդատվական ծառայություններ տեխնոլոգիայի և նորարարության մասին,
- իրավաբանական և հարկային ծառայություններ,
- մարկետինգի աջակցության ծառայություններ,
- անհրաժեշտության դեպքում այլ օժանդակ ծառայություններ:⁴⁰

Անհրաժեշտության դեպքում կառավարությունը պետք է միջոցներ ձեռնարկի հեշտացնելու կոոպերատիվների համար ներդրումային ֆինանսների և վարկերի մատչելիությունը: Այդպիսի միջոցները մասնավորապես պետք է թույլ տան առաջարկել վարկեր և ֆինանսական այլ հնարավորություններ, պարզեցնեն վարչական ընթացակարգերը, առողջացնեն կոոպերատիվի միջոցների հնարավոր անհամարժեք մակարդակները, կրճատեն վարկային գործարքների ծախսերը և այլն:

⁴⁰Տես Ա193, կետ 11:

ՄԱԿ-ի ուղեցույցում նշվում է, որ կոոպերատիվների իրավահավասարությունը ապահովելու համար կոոպերատիվների հատուկ արժեքներն ու սկզբունքները պետք է ստանան ամբողջական ճանաչում, ինչպես նաև պետք է ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի կոոպերատիվների առանձնահատուկ որակական հատկանիշներն ու գործունեությունը պատճառ չհանդիսանան խտրականության կամ որևէ այլ վնասի: Կառավարությունները պետք է մտահոգված լինեն փոփոխվող իրավիճակի պայմաններում կոոպերատիվների համար նպաստավոր միջավայր ստեղծելու և պահպանելու հարցում: Կառավարության և կոոպերատիվների միջև արդյունավետ գործակցությունը հետապնդում է այդպիսի միջավայրի ստեղծման նպատակ:⁴¹

Վերոնշյալ երեք փաստաթղթերն էլ հստակ կերպով կարևորում են կառավարությունների դերը **կոոպերատիվների հանրային ճանաչման և կոոպերատիվների կարևորության ընկալման** գործում: Կառավարությունների համար նպատակահարմար և օգտակար է հրապարակավ ճանաչել կոոպերատիվ շարժման առանձնահատուկ ներդրումը ազգային տնտեսությունում և հասարակության կյանքում և՛ քանակական, և՛ որակական առումով: Այն տարածքներում, որտեղ կոոպերատիվները կարող են մեծ դերակատարություն ունենալ, անհրաժեշտ է կոոպերատիվների կարևորության ընկալման լայնածավալ արշավներ կազմակերպել: Տեղեկացվածության բարձրացման միջոցառումները պետք է իրականացնել ոչ միայն մասնավոր տնտեսավարողների, այլև պետական, հանրային մարմինների շրջանում: Մասնավորապես, ԵՅ 2004 հայտարարության առաջին երկու գործողությունները վերաբերում են տեղեկացվածության բարձրացմանը և կոոպերատիվների կարևորության ընկալման տեղեկատվական արշավներին⁴²:

Կոոպերատիվների խթանման պետական քաղաքականություններում առանձնակի կարևորվում են կոոպերատիվների **վիճակագրության** հետ կապված խնդիրները: Կոոպերատիվների կարևորությունը ընկալելու և դրանց զարգացման ներուժը գնահատելու գործում խոչընդոտ են հանդիսանում վիճակագրական տվյալների բացակայությունը կամ դրանց անորակությունը: Հաշվի առնելով կոոպերատիվների վերաբերյալ եղած վիճակագրությունը Ազգային վիճակագրական ծառայության կանոնավոր ծրագրերի մեջ ինտեգրելու անհրաժեշտությունը, կարելի է մի շարք միջոցներ ձեռնարկել կոոպերատիվների համար և դրանց մասին եղած վիճակագրությունը բարելավելու համար, ինչպես նաև մասնակցել կոոպերատիվների վիճակագրության բարելավմանն ուղղված միջազգային ջանքերին, ներառյալ՝ ազգային վիճակագրական ծառայությունների կողմից օգտագործվելիք միանման սահմանումների ստեղծումը:

Պետական քաղաքականություններում տեղ են գտել նաև կոոպերատիվների **հետազոտությունների և կրթության** հետ կապված խնդիրները: Հաշվի առնելով կոոպերատիվ շարժման կարևորությունը, թերևս տեղին կլինի նախատեսել գործակցություն կառավարության և կոոպերատիվ շարժման կողմից իրականացվող, պետական քաղաքականությանը վերաբերող հետազոտական աշխատանքների միջև, հետազոտությունների արդյունքների, ներառյալ միջազգային կոոպերատիվ շարժման արդյունքների, հրապարակում և լայն տարածում: Շեշտադրումը պետք է կատարել այնպիսի կիրառական հետազոտությունների վրա, որոնք անմիջական օգտակարություն են ենթադրում կոոպերատիվների արդյունավետության բարձրացման, ստացած դրական արդյունքները հասարակությանը տրամադրելու և կոոպերատիվների և կառավարությունների միջև գործակցությունը բարելավելու առումով: Կառավարությունները կարող են նաև ազգային կրթական համակարգի բոլոր մակարդակների ուսումնական պլաններում ներառել կոոպերատիվ շարժման արժեքները, սկզբունքները, պատմությունը և հանրային կյանքում ունեցած ընթացիկ և հեռանկարային ներդրումը, ինչպես նաև տեղական մակարդակի կոոպերատիվներում խրախուսել և աջակցել կոոպերատիվներում մասնագիտացված ուսուցման կազմակերպմանը: Ա193-ը նույնպես խրախուսում է կառավարություններին, որ իրենց պետական քաղաքականությամբ

⁴¹Տես ՄԱԿ-ի ուղեցույցը, հոդված 6:

⁴²Տես EC 2004 Communication.

նպաստեն կոոպերատիվների սկզբունքների և գործելակերպերի վերաբերյալ կրթությանն ու ուսուցմանը՝ ազգային կրթության և ուսուցման բոլոր անհրաժեշտ մակարդակներում, ինչպես նաև առհասարակ հանրության մեջ:⁴³

ԵՅ 2004թ. հայտարարությունը կոոպերատիվների աջակցության գործողությունների մեջ նույնպես առաջարկում է կրթություն և վերապատրաստում, ինչպես նաև բիզնեսի աջակցության ծառայությունների մատուցում կոոպերատիվների համար: Վերջինս կարևորվում է այն իմաստով, որ կոոպերատիվներին հավուր պատշաճի բիզնես խորհրդատվություն մատուցելու համար անհրաժեշտ է հասկանալ կոոպերատիվների կարիքները և ընդհանրապես ընկալել կոոպերատիվների ինքնությունը:

Վերոնշյալ երեք փաստաթղթերն էլ անդրադառնում են պետական քաղաքականության մյուս կարևոր, եթե ոչ առավել կարևոր խնդրին, այն է՝ բարենպաստ իրավական, վարչական և օրենսդրական միջավայր ստեղծել կոոպերատիվների ձևավորման և բնականոն զարգացման համար: Օրինակ ԵՅ հայտարարության մեջ ասվում է, որ ԵՅ-ն ակտիվորեն կհամագործակցի պետական մարմինների, կոոպերատիվների հետ՝ կոոպերատիվների օրենսդրության բարելավման ուղղությամբ: ԵՅ-ն ազգային և եվրոպական կազմակերպություններին նաև քաջալերում է մշակել կոոպերատիվների «նոդելային» օրենք և առաջարկում իր աջակցությունն այս առումով:

Կոոպերատիվների մասին օրենքը կարող է ստեղծվել միայն այն դեպքում, երբ հստակ է կոոպերատիվների մասին կառավարության քաղաքականությունը: *«Անհրաժեշտ է ունենալ հետևողական ազգային քաղաքականություն, և կոոպերատիվների վերաբերյալ օրենսդրությունը կարելի է փոփոխել միայն կոոպերատիվների զարգացման վերաբերյալ նպաստավոր ազգային քաղաքականություն ընդունելուց հետո»*⁴⁴:

Պետական ֆոնդերի հատկացման առումով հստակ նշվում է, որ ցանկացած պարագայում կոոպերատիվի համար էական նշանակություն ունեն ֆինանսական ինքնուրույնությունը և լիարժեք անկախությունը: Քաղաքականության հարցում լավագույն մոտեցումն այն մոտեցումն է, երբ կոոպերատիվի նկատմամբ վերաբերմունքը նույնն է, ինչ ձեռնարկության որևէ այլ տեսակի նկատմամբ: Արժեքավոր են մի շարք այլ միջոցներ, ինչպիսիք են՝ կոոպերատիվների առանձնահատուկ բնույթի ճանաչումն ու դրա պաշտպանությունը, օրենսդրական և իրավակիրառական մակարդակներում կոոպերատիվների հատուկ ֆինանսական կարգավիճակի, կազմակերպական և կառավարման բնույթի պատճառով առաջացած խտրականության բացառումը, կոոպերատիվների կամ կոոպերատիվ շարժման ներքին ֆինանսական գործերին ուղղակի կամ անուղղակի ձևով որևիցե միջամտությունից խուսափելը և կոոպերատիվ ֆինանսական հաստատությունների հետ գործընկերության զարգացումը այնպիսի ուղղություններում, ինչպիսին է համայնքային և տարածաշրջանային զարգացումը՝ հենվելով կապիտալի մոբիլիզացման և կառավարման իրենց փորձի և հանրօգուտ նպատակների իրականացմանը նպաստող ձևերի վրա⁴⁵:

Կոոպերատիվների խթանմանն ուղղված պետական քաղաքականությունների մշակման ժամանակ պետք է ի նկատի ունենալ, որ կառավարության կողմից միջամտությունը և վերահսկողությունը կառուցողական է միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ է պաշտպանել հատուկ իրավակազմակերպչական ձևի՝ կոոպերատիվի բնույթը, ինչպես նաև՝ անդամների, վարկատուների և հանրության շահերը: Կառավարության կողմից ուժեղ վերահսկողությունը ոչ միայն վնասակար է և թանկ է նստում, այլև սպանում է կոոպերատիվ նախաձեռնությունները,

⁴³Տես Ա193, կետ 8.

⁴⁴Կոոպերատիվ օրենսդրության և քաղաքականության վերաբերյալ նախարարական 8-րդ խորհրդաժողով, Կուալա Լումպուր, 2007, էջ 3:

⁴⁵Տես ՄԱԿ-ի ուղեցույցը, հոդված 21:

փոխանակ խթանելու դրանք: «Կառավարությունը ցանկանում է, որ կոոպերատիվները լինեն ժողովրդավարական, բայց հաճախ նույն կոոպերատիվներում տեղ չի թողնում ժողովրդավարության համար»:⁴⁶

Որպես զարգացման գործիք կոոպերատիվների չարաշահումը և արտաքին պարտադրանքը ոչնչացնում են կոոպերատիվների հիմնական առավելությունը՝ մոբիլիզացնել անդամների սեփական ռեսուրսները իրենց իսկ շահույթի համար և ակտիվացնել կազմակերպված ինքնօգնության շարժիչ ուժերը, դրանով իսկ անուղղակիորեն նպաստելով ընդհանուր զարգացմանը:

Կոոպերատիվների պաշտոնականացումից հետո այլևս դժվար է լինում հասնել ապա-պաշտոնականացման: Եթե կոոպերատիվներն օգտագործվում են որպես կառավարության քաղաքականության իրականացման գործիքներ և ոչ թե դիտարկվում են որպես անդամների շահերին հետամուտ ինքնավար կազմակերպություններ, ապա կոոպերատիվ զարգացման համար անդամների սեփական ռեսուրսների մոբիլիզացումը սովորաբար ձախողվում է: Կառավարության քաղաքականությունն իրականացնող կոոպերատիվներին խթաններ և արտոնություններ առաջարկելը հանգեցնում է կեղծ կոոպերատիվները խրախուսելու վտանգին, որոնք հաճախ գործում են որպես կառավարության երկար ձեռք՝ միայն թղթի վրա գոյություն ունեցող և միայն արտաքին աջակցության տևողության չափ գործող որոշ նախագծերի իրականացման ժամանակ:

⁴⁶ Munkner Hans-H, 2012. Worldwide regulation of Cooperative Societies – an overview.

Եզրակացություններ

1. Կոոպերատիվ ձեռնարկությունները ազդեցիկ հաստատություններ են: Թե զարգացած, թե զարգացող երկրներում կոոպերատիվները նպաստում են սոցիալ-տնտեսական զարգացմանը և զբաղվածության աճին: Կոոպերատիվների դերն ու կարևորությունը գնալով ավելի ակնհայտ են դառնում գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով: Երկրների մեծ մասում կոոպերատիվները ավելի արդյունավետ կերպով են դիմակայել ճգնաժամին, քան ներդրողների սեփականությունը հանդիսացող ընկերությունները: Կոոպերատիվների ճկունությունը գնալով ավելի է գնահատվում, և քաղաքականություն մշակողներն ու հանրային կարծիք ձևավորողները մեծ ցանկություն ունեն հասկանալու, թե կոոպերատիվներն ինչ դեր կարող են խաղալ գլոբալ ճգնաժամի բացասական հետևանքների վերացման և այդ ճգնաժամը ծնող համակարգի բարեփոխման համար պայքարի հարցում:

2. Գործելով տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում, կոոպերատիվները ավելի երկարակյաց են, քան՝ ներդրողամետ ընկերությունները: Կոոպերատիվ մոդելը մշտապես հարմարվել է փոփոխվող պայմաններին, և տնտեսական ու սոցիալական նորանոր խնդիրներին լուծում տալու համար առաջացել են կոոպերացիայի նորարարական ձևեր:

3. Իրենց հիմնադրումից ի վեր կոոպերատիվները գործում են ոչ միայն որպես տնտեսական հաստատություններ, այլև՝ սոցիալական դերակատարներ, որոնք հստակ պարտավորություն են ստանձնում լուծելու տեղական համայնքների կամ շահագրգիռ կողմ հանդիսացող կարիքավոր խմբերի խնդիրները:

4. Կոոպերատիվների մասին օրենք մշակելու համար նախևառաջ պետք է իմանալ, թե ինչ է կոոպերատիվը: Կոոպերատիվների մասին բազմապիսի կարծիքներ կան, սակայն կոոպերատիվի իրավական սահմանման վերաբերյալ համաձայնության հասնելուց հետո կարծիքների բազմազանությունը տեղափոխվում է քննարկման այլ դաշտ, սակայն ոչ կոոպերատիվների օրենսդրական դաշտ: Կոոպերատիվների միջազգային այլանսի (ԿՄԱ) 1995թ.-ին ընդունված «Կոոպերատիվների ինքնության հռչակագիրը», Միավորված ազգերի կազմակերպության 2001թ.-ին ընդունված «Կոոպերատիվների զարգացման համար աջակցող միջավայրի ստեղծման» ուղեցույցը և Աշխատանքի միջազգային կազմակերպության 2002թ.-ին ընդունված «Կոոպերատիվների աջակցության» թիվ 193 առաջարկությունը կազմում են կոոպերատիվների հանրային, միջազգային իրավունքի հիմքը: Այս փաստաթղթերի բովանդակությունը պետք է հարգվի օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու կամ ազգային օրենքներ մշակելու ժամանակ:

5. Որպեսզի բարդություններ չառաջանան կոոպերատիվների օրենսդրություն մշակելու ժամանակ, անհրաժեշտ է հստակ կերպով տարանջատել կոոպերատիվները և սոցիալական ձեռնարկությունները, ինչպես նաև կոոպերատիվները և բաժնետիրական ձեռնարկությունները:

6. Նախկին Խորհրդային Միության երկրներում, ներառյալ Հայաստանում, ինչպես նաև Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում, սոցիալիստական անցյալի ժառանգության հարցը շարունակում է խնդրահարույց մնալ: Երկրների մեծ մասում կոոպերատիվները դեռևս հարկադրված են պայքարել սոցիալիստական անցյալի բացասական իմիջի դեմ: Օրենսդիրների համար հիմնախնդիրը եղել և որոշ դեպքերում շարունակում է մնալ կոոպերատիվ օրենսդրական դաշտ ստեղծելը բնույթի ինքնավար և ինքնօգնող կազմակերպությունների համար, որոնք սպասարկում են իրենց անդամների տնտեսական և սոցիալական շահերը շուկայական տնտեսության նոր միջավայրում: Առ այսօր, կոոպերատիվների համար ստեղծված օրենսդրական դաշտը ուղղակիորեն կրում է քաղաքական ասպարեզում առկա երկիմաստությունների և հակասությունների ազդեցությունը, օրինակ՝ տարբեր հայեցակարգերի վրա հիմնված միևնույն օրենքի առկայությունը, նույն եզրույթները տարբեր իմաստներով օգտագործելը, կիսատ-պռատ բարեփոխումներն՝ առանց հին կանոնակարգումներից հստակորեն հրաժարվելու և առանց կոոպերատիվների համար այլ ձեռնարկությունների հետ իրավահավասար դաշտ ստեղծելու:

7. Ոչ սպառողական կոոպերատիվների և ոչ էլ արտադրական կոոպերատիվների համար շահույթը հիմնական նպատակը չէ: Անշուշտ, շուկայում գոյատևելու համար կոոպերատիվները պետք է վաստակեն ավելին, քան ծախսում են, այն է՝ ֆինանսական տարվա ավարտին ունենան ավելցուկային եկամուտ: Դրանց եկամուտները գոյանում են մասամբ շուկայի իրենց գործընկերների և հաճախորդների հետ գործարքներից: Այս ավելցուկն անհրաժեշտ է կոոպերատիվի, որպես ծառայություն մատուցող կազմակերպության, ծախսերը ծածկելու համար՝ հասնելու այն նպատակին, որի համար կազմակերպությունը ստեղծվել է: Կոոպերատիվ կազմակերպությունների հիմնական գործունեությունը և գլխավոր նպատակն է ծառայություն մատուցել իրենց անդամներին՝ նպաստավոր պայմաններով (ինքնարժեքին մոտ) կամ - արտադրողների կոոպերատիվների դեպքում - իրենց անդամներին առաջարկել անվտանգ և լավ վարձատրվող աշխատատեղեր: Կոոպերատիվների՝ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների տարաբաժանումը անհրաժեշտ է վերանայել՝ ելնելով այսօրվա պայմաններից: Կոոպերատիվ ձեռնարկությունների ձեռնարկչական գործունեությունը, լինելով ավելի շատ ծառայությունների մատուցման կողմնորոշում ունեցող, քան շահույթ հետապնդող ձեռնարկություններ, պետք է ճանաչվի օրինական, ներառյալ տարեկան ավելցուկային եկամտի բաշխումը կոոպերատիվի անդամների միջև՝ պատրոնաժի տեսքով, կոոպերատիվի անդամների հետ կատարած բիզնես գործարքների համամասնությամբ:

8. Բազմաթիվ միջազգային և պետական ծրագրեր և միջոցառումներ միտված են եղել խթանելու կոոպերատիվների զարգացումը ՀՀ-ում: Կոոպերատիվների զարգացման ներկայացված 3 փուլերում էլ գրանցվել է որոշակի առաջընթաց, այնուամենայնիվ ֆերմերների մտածելակերպի, կոոպերատիվների ինքնության և սկզբունքների մասին թյուր պատկերացումների, կոոպերատիվի կառավարմանը, ինչպես նաև տնտեսական գործունեությանը անդամների մասնակցության բացակայության կամ պասիվ մասնակցության պատճառով ձևավորված կոոպերատիվների մեծամասնությունը դադարեց գոյություն ունենալ կամ գոյություն ունենալ միայն թղթի վրա: Առ այսօր, կոոպերատիվները մնում են թերզարգացած և հեռու են գյուղատնտեսական արժեքային շղթաների լիարժեք մասը համարվելուց:

9. ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը առաջին անգամ մեծապես կարևորեց ֆերմերային կազմակերպությունների և կոոպերատիվների դերը իր ռազմավարական ծրագրերում: Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկում առանձնացված են Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանն ու գործունեության խթանմանը ուղղված միջոցառումներ:

10. Կոոպերատիվների վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ միայն ՀՀ պետքեզհատից, այն էլ՝ միայն ընդհանրական: 2013թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում ըստ պետքեզհատի տվյալների, գրանցված են 3737 արտադրական և 307 սպառողական կոոպերատիվներ: Թե իրականում քանի արտադրական կոոպերատիվ է փաստացի աշխատում, որքան է գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների մասնաբաժինը այս թվի մեջ կամ փաստացի քանի սպառողական կոոպերատիվ է այսօր աշխատում, դժվար է պարզել: Այստեղ օգնության է պետք կանչել ՀՀ պետականուտների կոմիտեին:

11. Պատճառները, որոնք խանգարում են կոոպերատիվներին հասնել հաջողության, դառնալու արժեքային համակարգի լիիրավ մասնիկ, բազմապիսի են: Այս պատճառների մեջ իրենց ուրույն տեղն են գրավում իրավական հարթության մեջ գտնվող պատճառները, մասնավորապես ՀՀ-ում գործող կոոպերատիվներին առնչվող օրենքները: Գործող օրենքները լիարժեքորեն չեն կարգավորում կոոպերատիվների ձևավորման, գործունեության և լուծարման գործընթացի հարաբերությունները և ունեն կատարելագործման ու համալրման անհրաժեշտություն: Օրենսդրական բարեփոխումները էական նշանակություն կունենան կոոպերատիվների զարգացման և կայունության համար:

12. Հայաստանը չունի կոոպերատիվների վերաբերյալ մեկ, ամբողջական, համապարփակ օրենք, ինչպես ընդունված է շատ երկրներում: Կոոպերատիվների ոլորտը հիմնականում կարգավորվում է

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որի 51.3 հոդվածը նշում է, որ «կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ-առևտրային) կազմակերպություններ»: ՀՀ քաղօրենսգրքում, որպես կոոպերատիվների առանձին տեսակներ, նշվում են սպառողական կոոպերատիվները և համատիրությունները: Այս տեսակների առանձնահատկությունները կարգավորվում են առանձին օրենքներով՝ «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով և «Համատիրության մասին» ՀՀ օրենքով: Այս օրենքները վերլուծելով պարզ է դառնում, որ ըստ ՀՀ քաղօրենսգրքի և վերը նշված կոոպերատիվների առանձին տեսակները կարգավորող օրենքների, կոոպերատիվները Հայաստանում կարող են լինել **առևտրային**, որի մեջ մտնում են նաև **արտադրական կոոպերատիվները**, որոնք, ըստ 51.3 հոդվածի, շահույթի նպատակ հետապնդող կազմակերպություններ են և **ոչ-առևտրային**, որի մեջ մտնում են սպառողական կոոպերատիվները և համատիրությունները, որոնք շահույթի նպատակ չհետապնդող կազմակերպություններ են: Այս օրենքները չեն համապատասխանում Ա193-ի և ԿՄԱ դրույթներին:

13. «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղօրենսգրքի վերլուծությունից պարզ է դառնում, որ կոոպերատիվների գործունեության բազմաթիվ օրենսդրական տարրեր պետք է իրենց կարգավորումը ստանան կոոպերատիվների կանոնադրություններում, քանի որ այս օրենքները լիարժեքորեն չեն կարգավորում կոոպերատիվների ձևավորման, գործունեության և լուծարման գործընթացի հարաբերությունները և ունեն կատարելագործման ու համալրման անհրաժեշտություն: Ավելին, սպառողական կոոպերացիայի մասին օրենքի դրույթները չեն համապատասխանում սպառողական կոոպերատիվների մասին միջազգայնորեն ընդունված պատկերացումներին և սկզբունքներին:

14. Քանի որ կոոպերատիվի կանոնադրությունը, ըստ էության, կոոպերատիվների մասին օրենքից բխող դրույթներն են կոնկրետ կոոպերատիվի դեպքում, ուստի, չունենալով նորմալ, բովանդակալից օրենսդրական դրույթներ կոոպերատիվների օրենքներում, հնարավոր չէ ունենալ նաև նորմալ կանոնադրություն, որը պետք է լինի կոոպերատիվների ներքին օրենսդրությունը: Կոնկրետ Հայաստանի պարագայում ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրեթե բոլոր կոոպերատիվները, թե արտադրական, թե սպառողական, ընդունել են «օրինակելի» կանոնադրություն՝ առանց քննարկելու կամ հասկանալու, թե արդյոք տվյալ մոտիվն առհասարակ պետք է իրենց կոոպերատիվին: Սպառողական և արտադրական կոոպերատիվների որոշ կանոնադրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ կոոպերատիվների կանոնադրությունները նույնպես չեն արտացոլում կոոպերատիվների սկզբունքներն ու արժեքային համակարգը, ավելին, արտադրական կոոպերատիվների դեպքում, նույնիսկ հակասում են միջազգայնորեն ընդունված արտադրական կոոպերատիվների սահմանմանը և գործունեության ընդհանուր առանձնահատկություններին:

15. Վերլուծությունը ցույց է տալիս, որ կոոպերատիվների օրենսդրական մոտ 20 ուսումնասիրված հիմնական տարրերի մեծ մասի կարգավորումը առկա չէ և՛ կոոպերատիվների կանոնադրություններում, և՛ կոոպերատիվների մասին օրենքներում:

16. Կոոպերատիվների ինքնությանը և գործունեությանը վերաբերող տարրեր պարունակող օրենք է «Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» ՀՀ օրենքը, որն ամենայն հավանականությամբ կարող էր հավակնել կոոպերատիվների մասին օրենք կոչվելուն, քանի որ պարունակում է կոոպերատիվների գաղափարախոսությանը և արժեքային համակարգին մոտարկված ավելի շատ տարրեր, քան ՀՀ քաղօրենսգրքը կամ «Սպառողական կոոպերացիայի» մասին ՀՀ օրենքը: Այս օրենքը կարող է ուղեցույց լինել նաև գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենք մշակելու համար:

17. Սպառողական կոոպերատիվներում առանձնահատուկ խնդիր է հաշվապահական և հարկային հաշվառումը: ՀՀ գործող հարկային օրենսդրության համաձայն, այս կազմակերպությունները կարող են լինել ինչպես շահութահարկ, այնպես էլ ԱԱՀ վճարողներ, քանի որ սպառողական

կոոպերատիվների կողմից իրականացվող գործառնությունները կարող են դիտարկվել ինչպես շահույթի ստացման նպատակ հետապնդող, այնպես էլ շահույթի նպատակ չհետապնդող: Գործնականում շատ հազվադեպ են հանդիպում հաշվապահներ, ովքեր տիրապետում են սպառողական կոոպերատիվների հաշվապահական և հարկային հաշվառման առանձնահատկություններին: Հաշվի առնելով, որ սպառողական կոոպերատիվների մեծ մասը գտնվում է մարզերում, և նկատի ունենալով գյուղական վայրերում աշխատող հաշվապահների մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակը, պետք է քայլեր ձեռնարկել վերոնշյալ խնդիրների հրատապ լուծման ուղղությամբ:

18. Հարևան Վրաստանը ներկայումս նախաձեռնել է կոոպերատիվների օրենսդրական լայնածավալ բարեփոխումներ: Այս բարեփոխումները համահունչ են կոոպերատիվների միջազգային իրավունքի նորմերին: «Ֆերմերային խմբերի և ֆերմերների ասոցիացիաների մասին» ՎՀ օրենքը շուտով կընդունվի: Այս օրենքի նպատակն է սահմանել ֆերմերային խմբերի և ասոցիացիաների ձևավորման իրավական հիմքերը գյուղատնտեսության զարգացմանն աջակցելու նպատակով: Օրենքը նաև նպատակ է հետապնդում ձևավորել ֆերմերային խմբերի և ասոցիացիաների ստեղծման համար նպաստավոր օրենսդրական միջավայր, ստեղծել համապատասխան հարկային միջավայր, նվազեցնել վարչարարական արգելքները, նրանց գործունեության համար սահմանել ժողովրդավարության, կամավորության և ինքնավարության սկզբունքները: Այս օրենքի ընդունումով և օրենքում տեղ գտած հարկային արտոնությունների և բազմակողմանի պետական աջակցության կիրարկմամբ Վրաստանի գյուղատնտեսության մրցակցային առավելությունները ակնհայտորեն կբարելավվեն, որը նոր մարտահրավերներ կստեղծի Հայաստանից արտահանվող գյուղատնտեսական մթերքների համար: Այս հանգամանքը անհրաժեշտ է հաշվի առնել կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումների իրականացման, ինչպես նաև կոոպերատիվների համար աջակցող պետական քաղաքականության մշակման ժամանակ:

19. Ա193-ը, ՄԱԿ-ի «Կոոպերատիվների զարգացման համար նպաստավոր միջավայրի ստեղծմանն ուղղված ուղեցույցը» և Եվրոպական հանձնաժողովի «Եվրոպայի կոոպերատիվ հանրությունների խթանման» ուղղված 2004թ. ընդունված հայտարարությունը կոոպերատիվների խթանման համար պետական քաղաքականությունների ձևավորման հստակ շրջանակ են առաջարկում: Այս երեք միջազգային փաստաթղթերն էլ, կարելի է ասել, գործողությունների փաթեթ են առաջարկում երկրների կառավարություններին՝ կոոպերատիվների խթանմանն ուղղված համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով: Վերոնշյալ երեք փաստաթղթերն էլ հստակ կերպով կարևորում են կառավարությունների դերը կոոպերատիվների հանրային ճանաչման և կոոպերատիվների կարևորության ընկալման գործում: Կոոպերատիվների խթանման՝ տարբեր երկրների պետական քաղաքականություններում առանձնակի կարևորվում են կոոպերատիվների վիճակագրության, հետազոտությունների և կրթության հետ կապված խնդիրները: Վերոնշյալ երեք փաստաթղթերն էլ անդրադառնում են պետական քաղաքականության մյուս կարևոր խնդրին, այն է՝ բարենպաստ իրավական, վարչական և օրենսդրական միջավայր ստեղծել կոոպերատիվների ձևավորման և բնականոն զարգացման համար:

20. Որպես զարգացման գործիք կոոպերատիվների չարաշահումը և արտաքին պարտադրանքը ոչնչացնում են կոոպերատիվների հիմնական առավելությունը, այն է՝ մոբիլիզացնել անդամների սեփական ռեսուրսները իրենց իսկ շահույթի համար և ակտիվացնել կազմակերպված փոխադարձ օգնության շարժիչ ուժերը, դրանով իսկ անուղակիորեն նպաստելով ընդհանուր զարգացմանը: Կառավարության քաղաքականությունն իրականացնող կոոպերատիվներին խթաններ և արտոնություններ առաջարկելը հանգեցնում է կեղծ կոոպերատիվները խրախուսելու վտանգին, որոնք հաճախ գործում են որպես կառավարության երկար ձեռք՝ միայն թղթի վրա գոյություն ունեցող և միայն արտաքին աջակցության տևողության չափ գործող որոշ նախագծերի իրականացման ժամանակ:

Առաջարկություններ

1. Օրենսդրական բարեփոխումների լավագույն մոտեցումը կլինեն մշակել կոոպերատիվների մասին մեկ, համընդհանուր օրենք: Ինչպես տեսանք, կոոպերատիվների վերաբերյալ հայկական օրենսդրությունը չի համապատասխանում ԿՄԱ-ի և Ա193-ի դրույթներին, որոնք կազմում են կոոպերատիվների հանրային, միջազգային իրավունքի բաղկացուցիչ մասերը: Ներկայումս գլոբալ մակարդակով միտումը նույնպես կոոպերատիվների ընդհանուր օրենք ունենալն է, որը կկարգավորեր բոլոր տիպի կոոպերատիվների գործունեությունը: Այդ օրենքը կարող է առանձին բաժիններով անդրադառնալ այլ տեսակի կոոպերատիվների իրավական կարգավորմանը, օրինակ՝ գյուղատնտեսական, աշխատավորական, վարկային և այլն:

Լայնորեն ընդունված է, որ կոոպերատիվների մասին ընդհանուր օրենքը լավագույնս կերաշխավորի կոոպերատիվների ինքնությունը և բոլոր կոոպերատիվների ինքնավարությունը: Սովորաբար ընդհանուր օրենքները շատ մանրամասն չեն լինում և այդ առումով ընդհանրական օրենքի պարագայում զգալիորեն նվազում է բյուրոկրատական քաշքշուկը: Ընդհանուր օրենքը հնարավորություն կտա խուսափել կոոպերատիվ շարժման կտրտվածությունից: Առանձին օրենքների պարագայում, տարբեր տեսակի կոոպերատիվներ գրանցվում են ըստ տարբեր օրենքների և հիմնականում գործում են մեկուսի և առանձնացված: Միջազգային կազմակերպությունները և այլ տնտեսավարողները ավելի հաճախ են օգտագործում օրենքները տեղեկատվության և հաղորդակցության նպատակով: Այս ընդհանուր օրենքը իրական ուղենիշ և հղման կետ կհանդիսանար կոոպերատիվների օրենսդրական դաշտի վերաբերյալ պատկերացում կազմելու համար:

Ընդհանուր օրենքը հնարավորություն կտար հզորացնելու կոոպերատիվ շարժումը: Եթե Հայաստանում սկսեն զարգանալ աշխատավորական, սոցիալական կամ ֆինանսական կոոպերատիվներ, անհրաժեշտություն է լինելու նրանց գործունեությունը նույնպես կարգավորել առանձին օրենքներով: Իսկ ունենալով կոոպերատիվների մասին մեկ, ընդհանուր օրենք, հեշտությամբ կլուծվի նոր տեսակի, նորարար կամ որևէ տեսակի կոոպերատիվների գործունեության հարցը:

Նոր, ժամանակակից, կոոպերատիվների իրական ինքնությունը և սկզբունքները քարոզող, միջազգային օրենսդրական նորմերին համահունչ մեկ, համընդհանուր օրենքը Հայաստանի պարագայում «օրենսդրական գիլյոտինի» դեր կկատարեր, այսինքն շրջանառությունից դուրս կհաներ կոոպերատիվների գործունեությունը իբր կարգավորող, սակայն իրականում չկարգավորող և ոչինչ չասող մի քանի օրենքներ, օրինակ՝ «Սպառողական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ քաղօրենսգրքի կոոպերատիվներին վերաբերող հոդվածները:

2. Ինչպես նշեցինք, վերոնշյալը լավագույն մոտեցումը կլինեն: Եթե ինչ-ինչ պատճառներով հնարավոր չլինի հասնել այն բանին, որ ունենանք կոոպերատիվների մասին մեկ, համընդհանուր օրենք, ապա այլընտրանքային մոտեցումը պետք է լինի իրականացնել կոոպերատիվների մասին գոյություն ունեցող օրենքների փոփոխություններ և նոր օրենքների մշակում ԿՄԱ-ի, Ա193-ի դրույթների և միջազգայնորեն ընդունելի օրենսդրական տարրերին համապատասխան: Այս առաջարկությունը, կարծում ենք, ավելի աշխատատար և ծախսատար է լինելու, քանի որ բարեփոխումների պետք է ենթարկել թե ՀՀ քաղօրենսգրքը, թե «Սպառողական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև պետք է մշակել «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ նոր օրենք:

Այս պարագայում անհրաժեշտ է կոոպերատիվների ինքնությունը, սկզբունքները, կոոպերատիվների և սոցիալական տնտեսության այլ ձեռնարկությունների ու բաժնետիրական ընկերությունների տարբերությունները բնորոշող իրավական տարրերը ներառել կոոպերատիվների մասին օրենքների մեջ: Դա անելու համար պետք է նախևառաջ հրաժարվել սոցիալիստական անցյալի ժառանգությունից: Չի կարող արտադրական կոոպերատիվը լինել

առևտրային, իսկ սպառողական կոոպերատիվը՝ ոչ առևտրային: Կոոպերատիվների՝ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների տարաբաժանումը անհրաժեշտ է վերանայել, քանի որ ըստ միջազգային կոոպերատիվ չափորոշիչների, կոոպերատիվների բոլոր տեսակներն ու ձևերը – սկսած ծառայություններ մատուցող կոոպերատիվներից մինչև արտադրական կոոպերատիվներ – սահմանվում և կարգավորվում են նույն չափորոշիչներով և երկրների մեծ մասում կարգավորվում են մեկ, համընդհանուր օրենքով:

Կոոպերատիվների տնտեսական գործունեությունը, լինելով ավելի շատ ծառայությունների մատուցման կողմնորոշում ունեցող, քան շահույթ հետապնդող ձեռնարկություններ, պետք է ճանաչվի օրինական, ներառյալ տարեկան ավելցուկային եկամտի բաշխումը կոոպերատիվի անդամների միջև՝ պատրոնաժի տեսքով, կոոպերատիվի անդամների հետ կատարած բիզնես գործարքների համամասնությամբ: Կոոպերատիվները որպես տնտեսական կազմակերպություններ նույնպես պետք է ապահովեն դրական տնտեսական արդյունք: Սակայն դրանց նպատակը ոչ թե հենց այդ դրական արդյունքի ապահովումն է, այլ դրա միջոցով իրենց անդամների ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքների բավարարումը: Ինչպես արդեն նշել ենք, կոոպերատիվների դրական տնտեսական արդյունքը բաժանվում է 2 առանձնահատուկ մասերի՝ ոչ անդամներից ստացված շահույթ և անդամներից ստացված ավելցուկ: Ահա այս և նմանօրինակ տարրերին պետք է մեծ ուշադրություն դարձնել օրենսդրական փոփոխությունների և նոր օրենքների մշակման ժամանակ:

Օրենսդրական փոփոխությունները անհրաժեշտ է սկսել հենց կոոպերատիվների սահմանումից: Կոոպերատիվի սահմանումը պետք է արտացոլի այն առանձնահատկությունները, որով կոոպերատիվը տարբերվում է այլ տիպի բիզնես կառույցներից: Խոսքը վերաբերում է կոոպերատիվի ինքնության և կոոպերատիվի անդամների խթանմանը: Կոոպերատիվի ինքնության սկզբունքն այն է, որ կոոպերատիվի անդամները կոոպերատիվի համահիմնադիրներն են, համաֆինանսավորողներն են, կոոպերատիվի համասեփականատերերն ու համավերահսկողներն են և վերջապես կոոպերատիվի համօգտագործողներն ու համաշահառուներն են: Կոոպերատիվի անդամների խթանման սկզբունքն այն է, որ կոոպերատիվի անդամների վիճակի բարելավումն ավելի նախընտրելի է, քան ներդրված կապիտալից բարձր հատույց ապահովելը: Այս երկու սկզբունքների համակցությունը հաստատում է կոոպերատիվի երկակի էությունը: Այսինքն. կոոպերատիվը միևնույն ժամանակ և մարդկանց ընկերակցություն է, և տնտեսական ձեռնարկություն: Կամ ավելի ստույգ՝ մարդկանց խումբ, ովքեր ունեն ձեռնարկություն: Չնայած այս ձեռնարկությունը պետք է աշխատի շահույթ ստանալու մոտեցմամբ, այն հստակ կերպով տարբերվում է կապիտալիստական ձեռնարկություններից: Կոոպերատիվի ճիշտ սահմանումը անհրաժեշտ է, որպեսզի կոոպերատիվները տարբերվեն շահույթի նպատակ չհետապնդող կազմակերպություններից, բարեգործական կազմակերպություններից և սոցիալական տնտեսության այլ տեսակի խաղողիներից:

Առաջարկում ենք ընդունել ԿՄԱ-ի և Ա193-ի դրույթներին համահունչ սահմանում, որը կբովանդակի կոոպերատիվի ինքնության առանցքային տարրերը և կկենտրոնանա նպատակի, կառուցվածքի և գործունեության այլ տարրերի վրա:

3. Կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումների կամ կոոպերատիվների մասին որևէ նոր օրենքի մշակման ժամանակ հաշվի առնել կոոպերատիվների օրենսդրության մեջ ամենացայտուն կերպով արտահայտված՝ կոոպերատիվների ինքնության և սկզբունքներին վերաբերող, ինչպես նաև իրավական առումով կարևոր տարրերը: Սույն հաշվետվության մեջ մենք տարբեր երկրների օրինակով անդրադարձել ենք 20 տարրերի, որոնք հիմնականում կարգավորվում են կոոպերատիվների օրենքներով, ինչպես նաև թե ուղղակիորեն, թե անուղղակիորեն առնչվում են կոոպերատիվների սկզբունքներին և Ա193-ի դրույթներին:

Եթե նշված որոշ իրավական տարրերի կարգավորումը կարելի է թողնել կոոպերատիվի կանոնադրությանը, ապա հետևյալների կարգավորումը հենց օրենքում առավել ցանկալի է.

- անդամների նվազագույն թիվ,

- ներդրող անդամներ,
- ավելցուկի բաշխումը և մասնավորապես ավելցուկի հատկացումը պարտադիր պահուստային ֆոնդերին,
- պահուստների բաշխումը,
- շահաբաժինների բաշխումն ըստ վճարված կապիտալի,
- շահաբաժինների/փոխհատուցումների/պատրոնաժի տարբերակումը գործունեության հիման վրա և գործունեության համամասնությամբ,
- ձայնի իրավունքը,
- ոլորտային բաժինների ժողովներ,
- փոխարկում ընկերության կամ կազմակերպության իրավաբանական այլ ձևի,
- լուծարման դեպքում միջոցների հանձնումը,
- հարկային հատուկ մոտեցում,
- վերահսկման (աուդիտի) պետական և/կամ այլ ձևեր, ներառյալ՝ կոոպերատիվներին բնորոշ նախազգուշական և ոչ թե զուտ ֆինանսական վերահսկողություն:

Առաջարկում ենք այս իրավական տարրերը դարձնել լայն քննարկման առարկա, քննարկումներին ներգրավելով կոոպերատիվներին, պետական քաղաքականություն մշակողներին, ակադեմիական ոլորտի ներկայացուցիչներին, տնտեսական (գյուղատնտեսական) և իրավական վերլուծաբաններին, միջազգային կազմակերպություններին և այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներին:

4. Անհրաժեշտ է ավելի խորը ուսումնասիրել կոոպերատիվներին, մասնավորապես գյուղատնտեսական կոոպերատիվներին առնչվող հարկային քաղաքականությունը: Ինչպես տեսանք, Վրաստանը գյուղատնտեսական կոոպերատիվներին ազատել է բոլոր տեսակի լուրջ հարկերից և նախատեսել է բազմակողմանի պետական աջակցություն: Մեր ֆերմերների մրցակցային առավելությունը նույն հարթության վրա պահելու համար անհրաժեշտ է նմանօրինակ հարկային արտոնություններ սահմանել և պետական աջակցություն ցուցաբերել գյուղատնտեսական կոոպերատիվներին, այլապես ժամանակի ընթացքում Հայաստանը կկորցնի այն մրցակցային առավելությունները, որոնք մենք այսօր ունենք ինչպես արտահանվող թարմ գյուղմթերքի, այնպես էլ վերամշակվող և արտահանվող գյուղմթերքի ոլորտներում: Այնուհանդերձ, մինչև հարկային արտոնության խնդիրներին հասնելը, պետք է ունենալ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» նոր, ժամանակակից և ԿՄԱ-ի, Ա193-ի դրույթներին մոտարկված օրենք:

5. Կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումների հետ միաժամանակ անհրաժեշտ է մշակել կոոպերատիվների խթանման պետական քաղաքականություն: Ա193-ը, ՄԱԿ-ի «Կոոպերատիվների զարգացման համար նպաստավոր միջավայրի ստեղծմանն ուղղված ուղեցույցը» և Եվրոպական հանձնաժողովի «Եվրոպայի կոոպերատիվ հանրությունների խթանման» ուղղված 2004թ. ընդունված հայտարարությունը գործողությունների փաթեթ են առաջարկում երկրների կառավարություններին կոոպերատիվների խթանմանն ուղղված համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով: Այդ փաստաթղթերում առկա առաջարկությունները պետք է հաշվի առնել կոոպերատիվների (կամ որևէ տեսակի կոոպերատիվների, օրինակ՝ գյուղատնտեսական) ազգային խթանման քաղաքականություն մշակելու ժամանակ:

Մասնավորապես առաջարկում ենք կոոպերատիվների խթանման պետական քաղաքականության մեջ կենտրոնանալ կոոպերատիվների հանրային ճանաչման և կոոպերատիվների կարևորության ընկալմանն ուղղված գործողություններին, կոոպերատիվների վիճակագրության, հետազոտությունների և կրթության հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներին, կոոպերատիվների համար բարենպաստ պայմաններով ֆինանսական ռեսուրսների ներգրավմանն ուղղված գործողություններին և մեծ հաշվով կոոպերատիվների համար բարենպաստ իրավական, վարչական և օրենսդրական միջավայր ստեղծելուն ուղղված պետական միջոցառումներին:

Օգտագործված գրականություն

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

«Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենք

«Համատիրության մասին» ՀՀ օրենք

«Զրոգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենք

«Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» ՀՀ օրենք

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենք

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք

ՀՀ հաշվապահական ստանդարտներ

ՀՀ պետնեգիստրի տվյալները կոոպերատիվների վերաբերյալ

Act of Georgia on Consumer Cooperation, 1997.

Boevsky, I. (2012). Support for Farmers' Cooperatives; Country Report Bulgaria. Wageningen: Wageningen UR.

Borzaga, Carlo, Galera, Giulia and Nogales, Rocío (eds.) (2008) *Social Enterprise: A New Model for Poverty Reduction and Employment Generation*, Bratislava, Slovakia: United Nations Development Programme Regional Bureau for Europe and the Commonwealth of Independent States.

Birchall, Johnston (2012) 'The Potential of Co-operatives during the Current Recession: Theorizing Comparative Advantage', paper presented at the Euricse Conference in Venice.

Birchall, Johnston and Hammond Ketilson, Lou (2009) 'Resilience of the Cooperative Business Model in Times of Crisis', Geneva: Sustainable Enterprise Programme, International Labour Organization.

Dasgupta, Partha (2012) 'New Frontiers of Cooperation in the Economy', paper presented at the Euricse Conference in Venice.

Defourny, Jacques and Nyssens, Marthe (2012) 'Social Cooperatives: When Social Enterprise Meets the Cooperative Tradition', paper presented at the Euricse Conference in Venice.

Draft Law of the Republic of Georgia On Farmers Groups and Farmers Associations, 2013.

EURICSE, 2010. Study on the implementation of the Regulation 1435/2003 on the Statute for European Cooperative Society (SCE).

European Commission, 2004, Communication from the Commission to the Council and the European Parliament, the European Economic and Social Committee and the Committee of Regions: On the Promotion of Cooperative Societies in Europe. Brussels, 23.02.2004, COM (2004)18.

Hagen Henry, (2013) "Guidelines for Cooperative Legislation", third revised edition, ILO, ISBN 978-92-9-126792-4

Hansmann, Henry B. (1996) *The Ownership of Enterprise*, Cambridge, MA: Harvard University Press.

International Co-operative Alliance (2012) 'Statistical Information on the Co-operative Movement'.

International Co-operative Alliance, Office for Asia and Pacific (ICA ROAP): Joint Declaration, Fifth Asia-Pacific Co-operative Ministers' Conference, Beijing 11-16 October 1999, New Delhi 2000.

ICA ROAP: Recommendations, Ministers' Conference on Coop Legislation & Policy "Fair Globalisation through Co-operatives", 12-15, March 2007, Kuala Lumpur, New Delhi 2008.

ILO, 2002, "Promotion of Cooperatives", Recommendation No. 193. International Labour Conference (90th session, June 3, 2002, Geneva).

Law on Entrepreneurs, Republic of Georgia.

MacPherson, Ian (2012) 'Cooperatives' Concern for the Community: From Members towards Local Communities' Interests', paper presented at the Euricse Conference in Venice.

Mayo, Ed (2012) 'Global Business Ownership 2012: Members and Shareholders across the World', Manchester: Cooperatives UK.

Melkonyan, Khachatryan, Arakelyan, Pogosyan (2008). Dairy Cooperatives' development constraints in transition countries. Analysis of Basic Cooperative Principles (Armenian Dairy Sector Case).

Munkner Hans-H, 2012. Worldwide regulation of Cooperative Societies – an overview.

Przotin, Virginie (2012), 'Workers' Cooperatives: Good, Sustainable Jobs in the Community', paper presented at the Euricse Conference in Venice.

Szabg, G. G., (2012). Support for Farmers' Cooperatives; Country Report Hungary. Wageningen: Wageningen UR.

Valentinov, Vladislav, Tortia, Ermanno and Iliopoulos, Constantine (2012) 'Agricultural Cooperatives', paper presented at the Euricse Conference in Venice.

UN, 2001, "United Nations Guidelines aimed at creating a supportive environment for the development of cooperatives", A/56/73, E/2001/68

Zamagni, Stefano (2012) 'The Impact of Cooperatives on Civil and Connective Capital', paper presented at the Euricse Conference in Venice.

Zamagni, Vera (2012) 'Interpreting the Roles and Economic Importance of Cooperative Enterprises in a Historical Perspective', paper presented at the Euricse Conference in Venice.

www.aciamericas.coop

www.arspiu.com/en/carmac

www.fca.am

www.ica.coop

www.minagro.am

www.socialeconomy.eu.org

Չավելված 1. ILO - R.193 – Կոոպերատիվների առաջխաղացումը Առաջարկություն, 2002 (Ա193)

Կոոպերատիվների առաջխաղացման ընդունման վերաբերյալ առաջարկություն. Ժնև, ԱՄԿ 90-րդ նիստ (20 հունվարի, 2002թ.) – Կարգավիճակը՝ արդիական գործիք (տեխնիկական կոնվենցիա):

Առաջարան

Աշխատանքի միջազգային կազմակերպության ընդհանուր խորհրդաժողովը,

որը գումարվել է ժնևում՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության գրասենյակի կառավարման խորհրդի կողմից, վերջինիս 2002թ. հունիսի 3-ի 90-րդ նիստում,

ընդունելով կոոպերատիվների կարևորությունը աշխատատեղերի ստեղծման, ռեսուրսների մոբիլիզացման, ներդրումների հայթայթման և դրանք տնտեսությանը ծառայեցնելու հարցում,

ընդունելով, որ կոոպերատիվներն իրենց բազմազան ձևերով նպաստում են ամենալիարժեք մասնակցությանը բոլոր մարդկանց տնտեսական և սոցիալական զարգացմանը,

ընդունելով, որ գլոբալացումը կոոպերատիվների համար ստեղծել է նոր և տարաբնույթ ճնշումներ, հիմնախնդիրներ, մարտահրավերներ և հնարավորություններ և որ գլոբալացման օգուտների ավելի արդարացի բաշխում ապահովելու համար պահանջվում են ազգային և միջազգային մակարդակներում մարդկանց համերաշխության ավելի ուժեղ ձևեր, նշելով Աշխատանքի վայրում հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին ԱՄԿ հռչակագիրը, որն ընդունվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության 86-րդ խորհրդաժողովում (1998թ.), նշելով ԱՄԿ կոնվենցիաներով և առաջարկություններով նախատեսված իրավունքներն ու սկզբունքները, մասնավորապես՝ Չարկադիր աշխատանքի մասին 1930թ. կոնվենցիան, Միավորման ազատության և կազմակերպելու իրավունքի պաշտպանության մասին ԱՄԿ 1948թ. կոնվենցիան, Կազմակերպելու իրավունքի և հավաքական սակարկության իրավունքի մասին 1949թ. կոնվենցիան, Չավասար փոխհատուցման մասին 1951թ. կոնվենցիան, Սոցիալական ապահովության (նվազագույն չափորոշիչների) մասին 1952թ. կոնվենցիան, Չարկադիր աշխատանքի վերացման մասին 1957թ. կոնվենցիան, Խտրականության (աշխատանք և զբաղմունք) մասին 1958թ. կոնվենցիան, Աշխատանքային քաղաքականության մասին 1964թ. կոնվենցիան, Նվազագույն տարիքի մասին 1973թ. կոնվենցիան, Գյուղի աշխատողների կազմակերպությունների մասին 1975թ. կոնվենցիան և առաջարկությունները, Մարդկային ռեսուրսների զարգացման մասին 1975թ. կոնվենցիան և առաջարկությունները, Աշխատանքային քաղաքականության (լրացուցիչ դրույթներ) մասին 1984թ. առաջարկությունները, Փոքր ու միջին ձեռնարկություններում աշխատատեղերի ստեղծման մասին 1998թ. առաջարկությունները, և Երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերի մասին 1999թ. կոնվենցիան, ինչպես նաև հղում կատարելով Ֆիլադելֆիայի հռչակագրով սահմանված այն սկզբունքին, որ «աշխատանքն ապրանք չէ»,

հղում կատարելով այն սկզբունքին, որ աշխատողների կողմից պատշաճ աշխատանքի կատարումը ամենուրեք Աշխատանքի միջազգային կազմակերպության հիմնական նպատակն է,

որոշում կայացնելով կոոպերատիվների առաջխաղացման վերաբերյալ որոշակի առաջարկների հայտերի ընդունման մասին, որը նիստի օրակարգի չորրորդ հարցն է և

որոշարկելով, որ այդ առաջարկների հայտերը պետք է ներկայացվեն առաջարկությունների տեսքով՝

երկու հազար երկու թվականի հունիսի քսանին ընդունում է հետևյալ առաջարկությունները, որոնց կարելի է հղում տալ որպես Կոոպերատիվների վերաբերյալ 2002թ. առաջարկությունների առաջխաղացում:

I. ԾԻՐԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Հայտնի է, որ կոոպերատիվները գործում են տնտեսության բոլոր ոլորտներում: Սույն Առաջարկությունը կիրառելի է կոոպերատիվների բոլոր տեսակների և ձևերի համար:
2. Սույն Առաջարկության շրջանակում «կոոպերատիվ» եզրույթը նշանակում է իրենց ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքներն ու ձգտումները համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով բավարարելու նպատակով միավորված անձանց ինքնավար ընկերակցություն:
3. Կոոպերատիվների ինքնության առաջխաղացումը և ամրապնդումը պետք է խրախուսել՝ հիմնվելով հետևյալի վրա՝
 - (ա) ինքնօգնության, ինքնապատասխանատվության, ժողովրդավարության, հավասարության, արդարացիության և համերաշխության կոոպերատիվ (գործակցային) արժեքներ, ինչպես նաև ազնվության, շիտակության, սոցիալական պատասխանատվության և այլոց մասին հոգատարության բարոյական արժեքներ,
 - (բ) միջազգային կոոպերատիվ շարժման կողմից մշակված և սույն փաստաթղթի հավելվածում զետեղված կոոպերատիվ սկզբունքները: Այդ սկզբունքներն են՝ կամավոր և բաց անդամակցություն. անդամների կողմից ժողովրդավարական վերահսկողություն. անդամների տնտեսական մասնակցություն. ինքնավարություն և անկախություն. կրթություն, ուսումնաստվություն և տեղեկատվություն. գործակցություն կոոպերատիվների միջև. համայնքի մասին մտահոգվածություն:
4. Պետք է միջոցներ ձեռք առնել կոոպերատիվների ներուժին նպաստելու ուղղությամբ՝ բոլոր երկրներում, անկախ վերջիններիս զարգացածության մակարդակից՝ այդ երկրներին և իրենց անդամակցությանը հետևյալ հարցերում օժանդակելու նպատակով՝
 - (ա) հիմնել և զարգացնել եկամտաբեր գործունեություն և կայուն, պատշաճ զբաղվածություն.
 - (բ) կրթության և ուսումնաստվական աշխատանքի միջոցով զարգացնել մարդկային ռեսուրսների կարողությունները և արժեքների իմացությունը, կոոպերատիվ շարժման առավելություններն ու օգուտները.
 - (գ) զարգացնել դրանց գործարար ներուժը, ներառյալ ձեռնարկչական և կառավարման կարողությունները.
 - (դ) ամրապնդել դրանց մրցունակությունը, ինչպես նաև մատչելի դարձնել շուկան և հաստատակարգային (ինստիտուցիոնալ) ֆինանսավորումը.
 - (ե) ավելացնել խնայողությունները և ներդրումները.
 - (զ) բարելավել սոցիալական և տնտեսական բարեկեցությունը, հաշվի առնելով խտրականության բոլոր ձևերի վերացման անհրաժեշտությունը.
 - (է) նպաստել մարդկային կայուն զարգացմանը և
 - (ը) հիմնել և ընդլայնել տնտեսության կենսունակ և դինամիկ զարգացող ինքնատիպ ոլորտ, որը ներառում է համայնքի սոցիալական և տնտեսական կարիքներին արձագանքող կոոպերատիվներ:
5. Անհրաժեշտ է խրախուսել կոոպերատիվների՝ որպես համերաշխության սկզբունքով առաջնորդվող ձեռնարկությունների և կազմակերպությունների, աշխատանքը հեշտացնող հատուկ միջոցառումների իրականացումը՝ դրանց անդամների և հանրության կարիքներին, այդ թվում՝ հասարակության խոցելի խմբերի կարիքներին արձագանքելու նպատակով՝ վերջիններիս սոցիալական ներառումը ապահովելու համար:

II. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ

6. Հավասարակշռված հասարակությունը անհրաժեշտաբար պետք է ունենա ուժեղ պետական և մասնավոր հատվածներ, ինչպես նաև ուժեղ կոոպերատիվ, փոխադարձ և սոցիալական ու ոչ կառավարական այլ ոլորտներ: Հենց այս ոլորտում է, որ կառավարությունները պետք է ապահովեն կոոպերատիվների բնույթին ու գործառույթին համահունչ և բաժին 3-ով նախատեսված կոոպերատիվ արժեքներով ու սկզբունքներով առաջնորդվող աջակցող քաղաքականություն և օրենսդրական դաշտ, որոնք՝

(ա) կստեղծեն հաստատակարգային շրջանակ, որը թույլ կտար կոոպերատիվները գրանցել հնարավորինս արագ, հստակ, մատչելի և արդյունավետ ձևով:

(բ) կխթանեն համապատասխան ռեգերվների ստեղծմանը նպատակաուղղված քաղաքականությունը, որի առնվազն մեկ մասը կարող է լինել անբաժանելի, ինչպես նաև՝ կոոպերատիվների ներքին համերաշխության ֆոնդեր:

(գ) թույլ կտային ձեռնարկել միջոցներ կոոպերատիվների վերահսկողությունն իրականացնելու այնպիսի պայմաններով, որոնք համահունչ են կոոպերատիվների բնույթին և գործառույթներին, հարգում են կոոպերատիվների ինքնավարությունը և համապատասխանում են ազգային օրենսդրությանն ու գործելակերպին և որոնք պակաս կիրառելի չեն ձեռնարկությունների և սոցիալական կազմակերպությունների այլ ձևերի համար կիրառելի պայմաններից:

(դ) կնպաստեն կոոպերատիվների անդամակցությանը կոոպերատիվները միավորող կառույցներին, որոնք արձագանքում են կոոպերատիվների անդամների կարիքներին:

(ե) կխրախուսեն կոոպերատիվների՝ որպես ինքնավար և ինքնակառավարվող ձեռնարկությունների, զարգացմանը, մասնավորապես այն ոլորտներում, որտեղ կոոպերատիվները կարևոր դեր են խաղում կամ մատուցում են ծառայություններ, որոնք այլ կառույցները չեն մատուցում:

7.

Երրորդ մասում նախատեսված արժեքներով և սկզբունքներով առաջնորդվող կոոպերատիվների առաջխաղացումը պետք է համարվի ազգային և միջազգային տնտեսական և սոցիալական զարգացման հենամիջերից մեկը:

(2) Կոոպերատիվներին պետք է վերաբերվել ազգային օրենքի և գործելակերպի համաձայն և ոչ պակաս նպաստավոր պայմաններով, քան այլ ձեռնարկությունների և սոցիալական կազմակերպությունների դեպքում: Կառավարությունները անհրաժեշտության դեպքում պետք է ձեռնարկեն կոոպերատիվ գործունեության աջակցության այնպիսի միջոցառումներ, որոնք բավարարեն հատուկ սոցիալական և հանրային քաղաքականության նախանշած արդյունքերը, ինչպիսիք են՝ զբաղվածության խթանումը կամ այնպիսի գործունեության զարգացումը, որը օգտակար կլինի խոցելի խմբերին կամ տարածաշրջաններին: Այդպիսի միջոցառումները, այլ միջոցառումների շարքում, հնարավորության սահմաններում, կարող է ներառել հարկային արտոնություններ, վարկեր, դրամաշնորհներ, հանրային աշխատանքային ծրագրերին մասնակցելու հնարավորություն և գնումների մասին հատուկ դրույթներ:

(3) Պետք է հատուկ ուշադրության արժանանա կանանց մասնակցության աճը տարբեր մակարդակների կոոպերատիվ շարժումներում, մասնավորապես կառավարման և ղեկավարման մակարդակներում:

8.

(1) Ազգային քաղաքականությունը պետք է նկատելիորեն՝

(ա) Նպաստի ԱՄԿ-ի կողմից սահմանված աշխատանքի հիմնարար չափորոշիչները և Աշխատանքի վայրում հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին ԱՄԿ-ի հռչակագիրը՝ կոոպերատիվների բոլոր աշխատողների համար, առանց դույզն ինչ տարբերակման:

(բ) Ապահովի, որ կոոպերատիվները չհիմնադրվեն կամ չօգտագործվեն ի խախտումն աշխատանքային օրենսդրության կամ չժառանգվեն քողարկված աշխատանքային հարաբերություններին, ինչպես նաև պայքարի աշխատողների իրավունքները ոտնահարող կեղծ կոոպերատիվների դեմ՝ ապահովելով աշխատանքային օրենսդրության կիրառումը բոլոր ձեռնարկություններում:

գ) Խթանի սեռային հավասարությունը կոոպերատիվներում և դրանց աշխատանքում:

դ) Խթանի այն միջոցները, որոնք պետք է ապահովվեն կոոպերատիվների լավագույն աշխատանքային գործելակերպեր, ներառյալ համապատասխան տեղեկատվության մատչելիությունը:

ե) Ջարգացնի տեխնիկական և մասնագիտական հմտությունները, ձեռնարկչական և կառավարչական ունակությունները, բիզնես ներուժի իմացությունը, ընդհանուր քաղաքականության հմտությունները՝ անդամների, աշխատողների և ղեկավարների մասին և զարգացնի նրանց համար տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաների մատչելիությունը:

զ) Նպաստի կոոպերատիվների սկզբունքների և գործելակերպերի վերաբերյալ կրթությանն ու ուսուցմանը ազգային կրթության և ուսուցման բոլոր անհրաժեշտ մակարդակներում, ինչպես նաև առհասարակ հանրության մեջ:

է) Նպաստի այնպիսի միջոցառումների ձեռնարկմանը, որոնք ապահովում են անվտանգությունն ու առողջությունն աշխատավայրում:

ը) Ապահովի վերապատրաստման և աջակցության այլ ձևեր՝ կոոպերատիվների արդյունավետության և մրցունակության մակարդակը բարձրացնելու և դրանց արտադրած ապրանքների և ծառայությունների որակը բարելավելու համար:

թ) Կոոպերատիվների համար մատչելի դարձնի վարկային ռեսուրսները:

ժ) Մատչելի դարձնի կոոպերատիվների մուտքը շուկա:

ի) Նպաստի կոոպերատիվների մասին տեղեկատվության տարածմանը:

լ) Ձգտի բարելավել ազգային վիճակագրությունը կոոպերատիվների մասին՝ նպատակ ունենալով ձևակերպել և իրականացնել քաղաքականության զարգացումը:

(2) Այդ քաղաքականությունը պետք է՝

(ա). Անհրաժեշտության դեպքում տարածաշրջանային և տեղական մակարդակներում ապակենտրոնացնի քաղաքականության ձևակերպումը և իրականացումը և կոոպերատիվների վերաբերյալ կանոնակարգերը:

(բ). Սահմանի իրավական պարտավորությունները կոոպերատիվների ոլորտում, ինչպիսիք են գրանցումը, ֆինանսական լիցենզիաների ձեռքբերումն ու ստուգումը:

(գ) Խթանի կոոպերատիվներում կորպորատիվ կառավարման լավագույն փորձը:

9. Կառավարությունները պետք է նպաստեն կոոպերատիվների դերի բարձրացմանը՝ մարզինալ զուտ կենսապահ գործունեությունը (որ երբեմն համարվում է «ոչ ֆորմալ տնտեսություն») վերափոխելու իրավական տեսակետից պաշտպանված աշխատանքի, որը լիովին ինտեգրված է հիմնական տնտեսական կյանքին:

III. ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԿՈՌՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

10. (1) Անդամ պետությունները պետք է ընդունեն կոոպերատիվների վերաբերյալ համապատասխան օրենսդրություն և կանոնակարգեր, որոնք ղեկավարվում են 3-րդ մասում ամրագրված՝ կոոպերատիվի արժեքներով և սկզբունքներով և անհրաժեշտության դեպքում վերանայեն այդ օրենսդրությունը և կանոնակարգերը:

(2) Կառավարությունները պետք է խորհրդատվություն ապահովեն կոոպերատիվ կազմակերպությունների, ինչպես նաև շահագրգիռ գործատուների և աշխատավորների շահերը պաշտպանող կազմակերպությունների համար՝ կոոպերատիվների համար կիրառելի օրենսդրության, քաղաքականության և կանոնակարգերի մշակման և վերանայման գործում:

11. (1) Կառավարությունները պետք է հեշտացնեն կոոպերատիվների համար աջակցող ծառայությունների մատչելիությունը, որպեսզի ուժեղացնեն դրանց գործարար կենսունակությունը և աշխատանք ու եկամուտ ստեղծելու կարողությունը:

(2) Այս ծառայությունները պետք է, հնարավորության դեպքում, ներառեն՝

(ա) Մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրեր:

(բ) Հետազոտական և կառավարման վերաբերյալ խորհրդատվության ծառայություններ:

(գ) Ֆինանսների և ներդրումների մատչելիություն:

(դ) Հաշվապահական և աուդիտորական ծառայություններ:

(ե) Կառավարման գծով տեղեկատվական ծառայություններ:

(զ) Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ծառայություններ:

(է) Խորհրդատվական ծառայություններ տեխնոլոգիայի և նորարարության մասին:

(ը) Իրավաբանական և հարկային ծառայություններ:

(թ) Մարկետինգի աջակցության ծառայություններ

(ժ) Անհրաժեշտության դեպքում այլ օժանդակ ծառայություններ:

(3) Կառավարությունները պետք է հեշտացնեն այս օժանդակ ծառայությունների ստեղծումը: Կոոպերատիվներին և դրանց կազմակերպություններին պետք է խրախուսել մասնակցել այս ծառայությունների կազմակերպման և ղեկավարման գործընթացին, իսկ անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ ֆինանսավորել դրանք:

(4) Կառավարությունները պետք է ճանաչեն կոոպերատիվների և դրանց կազմակերպությունների դերը՝ մշակելով համապատասխան գործիքներ, որոնց նպատակն է ազգային և տեղական մակարդակներում ստեղծել և ամրապնդել կոոպերատիվներ:

12. Անհրաժեշտության դեպքում կառավարությունները պետք է միջոցներ ձեռնարկեն հեշտացնելու համար կոոպերատիվների համար ներդրումային ֆինանսների և վարկերի մատչելիությունը: Այդպիսի միջոցները մասնավորապես պետք է՝

(ա) Թույլ տան առաջարկել վարկեր և ֆինանսական այլ հնարավորություններ:

(բ) Պարզեցնեն վարչական ընթացակարգերը, առողջացնեն կոոպերատիվի միջոցների հնարավոր անհամարժեք մակարդակները և կրճատեն վարկային գործարքների ծախսերը:

(գ) Նպաստեն կոոպերատիվների ֆինանսավորման համար ինքնավար համակարգի ձևավորմանը, ներառյալ խնայողական, վարկային, բանկային և ապահովագրական կոոպերատիվները:

(դ) Ներառեն հատուկ դրույթներ անապահով խմբերի համար:

13. Կոոպերատիվ շարժման խթանման համար կառավարությունները պետք է խրախուսեն տեխնիկական, առևտրային և ֆինանսական կապերի զարգացումը կոոպերատիվների բոլոր ձևերի միջև, դրանով իսկ նպաստելով փորձի փոխանակմանը և ռիսկերի ու օգուտների բաշխմանը:

IV. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԴԵՐՈՂ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՐԱՆՑ ՄԻՋԵՎ ԵՂԱԾ ԿԱՊԸ

14. Գործատուների և աշխատավորների կազմակերպությունները, հասկանալով կոոպերատիվների նշանակությունը, կայուն զարգացման նպատակների հասնելու համար պետք է ձգտեն կոոպերատիվ կազմակերպությունների հետ միասին գտնել ճանապարհներ և միջոցներ կոոպերատիվի առաջխաղացման համար:

15. Գործատու կազմակերպությունները պետք է քննարկեն և անհրաժեշտության դեպքում ընդլայնեն անդամակցության հնարավորությունները՝ իրենց միանալ ցանկացող կոոպերատիվների համար և ապահովեն անհրաժեշտ աջակցություն՝ նույն պայմաններով ու ժամկետներով, որոնք կիրառվում են այլ անդամների համար:

16. Աշխատավորների կազմակերպություններին պետք է խրախուսել՝

(ա) խորհուրդներ տալ և աջակցել կոոպերատիվների աշխատողներին՝ աշխատավորական կազմակերպություններին միանալու համար,

(բ) աջակցել իրենց անդամներին՝ կոոպերատիվներ ստեղծելու գործում, այդ թվում՝ նպատակ ունենալով դյուրացնելու հիմնական ապրանքների եւ ծառայությունների մատչելիությունը,

(գ) մասնակցություն ցուցաբերել տարբեր մակարդակների՝ ազգային և միջազգային, հանձնաժողովներին և աշխատանքային խմբերին, որոնք քննարկում են կոոպերատիվների վրա հնարավոր ազդեցություն ունեցող տնտեսական և սոցիալական խնդիրներ,

(դ) աջակցել և մասնակցել նոր կոոպերատիվների ստեղծմանը, նպատակ ունենալով ստեղծել կամ պահպանել աշխատատեղեր, ներառյալ՝ ձեռնարկությունների հնարավոր փակման դեպքերում,

(ե) աջակցել եւ մասնակցել կոոպերատիվների արտադրողականության բարելավմանն ուղղված ծրագրերին,

(զ) խթանել կոոպերատիվների հնարավորությունների հավասարությունը,

(է) նպաստել կոոպերատիվների աշխատակազմի իրավունքների իրականացմանը,

(ը) իրականացնել կոոպերատիվների խթանմանն ուղղված որևէ այլ գործունեություն:

17. Կոոպերատիվներին և դրանք ներկայացնող կազմակերպություններին պետք է խրախուսել՝

(ա) ստեղծել ակտիվ հարաբերություններ գործատուների եւ աշխատավորների կազմակերպությունների, ինչպես նաև շահագրգիռ պետական և ոչ պետական մարմինների հետ՝ նպատակ ունենալով բարենպաստ մթնոլորտ ստեղծել կոոպերատիվների զարգացման համար,

(բ) տնօրինել իրենց անձնական աջակցության ծառայությունները եւ նպաստել դրանց ֆինանսավորմանը,

(գ) առնչվող կոոպերատիվներին տրամադրել առևտրային եւ ֆինանսական ծառայություններ,

(դ) Ներդրումներ անել և առաջ տանել մարդկային ռեսուրսների՝ անդամների, աշխատողների և ղեկավարների զարգացումը:

- (ե) շարունակաբար զարգացնել ազգային և միջազգային կոոպերատիվները և դրանց հետ գործակցությունը,
- (զ) ազգային կոոպերատիվ շարժումը ներկայացնել միջազգային մակարդակում,
- (է) իրականացնել կոոպերատիվների առաջխաղացման համար անհրաժեշտ այլ գործունեություն:

V. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

18. Միջազգային գործակցությանը պետք է նպաստել՝

- (ա) տեղեկատվության փոխանակման վերաբերյալ քաղաքականություններով եւ ծրագրերով, որոնք ապացուցել են իրենց արդյունավետությունը զբաղվածության ստեղծման եւ կոոպերատիվների անդամների եկամտի համար:
- (բ) Խրախուսելով եւ խթանելով կոոպերատիվների զարգացման մեջ ներգրավված ազգային և միջազգային մարմինների և հաստատությունների միջև հարաբերությունները, թույլ տալու համար՝
 - (i) անձնակազմի եւ գաղափարների, կրթական եւ ուսումնական նյութերի, մեթոդաբանությունների և նորմատիվ նյութերի փոխանակումը,
 - (ii) կոոպերատիվների և դրանց զարգացման վերաբերյալ հետազոտական նյութերի և այլ տվյալների կազմումն ու օգտագործումը,
 - (iii) կոոպերատիվների միջև դաշինքների և միջազգային գործընկերության հաստատումը,
 - (iv) կոոպերատիվ արժեքների և սկզբունքների առաջխաղացումը և պաշտպանությունը,
 - (v) կոոպերատիվների միջև առևտրային հարաբերությունների ստեղծումը:
- (գ) Կոոպերատիվների համար ապահովելով ազգային և միջազգային տվյալների մատչելիությունը, ինչպիսիք են՝ շուկայական տեղեկատվություն, օրենսդրություն, վերապատրաստման մեթոդներ և մեխանիզմներ, տեխնոլոգիաներ և ապրանքի չափորոշիչներ:
- (դ) Երաշխավորված և հնարավոր դեպքերում զարգացնելով, կոոպերատիվների, գործատու և աշխատավորական կազմակերպությունների հետ խորհրդակցության միջոցով՝ կոոպերատիվների աջակցությանն ուղղված տարածաշրջանային և միջազգային ընդհանուր ուղեցույցներ և օրենսդրություն:

VI. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹ

19. Ներկա Առաջարկությունը 1966թ. Կոոպերատիվների (զարգացող երկրներ) վերաբերյալ առաջարկության վերանայված տարբերակն է և փոխարինում է վերջինիս:

Ֆավելված 2. Կոոպերատիվների զարգացման համար նպաստավոր միջավայրի ստեղծմանն ուղղված ուղեցույցի նախագիծ

A/56/73, E/2001/68 – Միավորված ազգերի կազմակերպություն, 2001թ.

Նպատակները

1. Վեհաժողովի և Տնտեսական և սոցիալական խորհրդում, ինչպես նաև վերջին շրջանում տեղի ունեցած միջազգային խորհրդաժողովների շրջանակում կառավարություններն ընդունել են, որ կոոպերատիվներն էական նշանակություն ունեն որպես ընկերակցություններ և ձեռնարկություններ, որոնց միջոցով քաղաքացիները կարող են արդյունավետ կերպով բարելավել իրենց կյանքը՝ միաժամանակ նպաստելով իրենց համայնքի և պետության տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական առաջընթացին: Նրանք ընդունել են, որ կոոպերատիվ շարժումը յուրահատուկ և հիմնական շահագրգիռ կողմն է թե ազգային և թե միջազգային գործերում:

2. Կառավարություններն ընդունում են, որ կոոպերատիվ շարժումը ընկերակցությունների և ձեռնարկությունների կազմակերպման՝ մեծապես ժողովրդավարական, տեղական մակարդակում ինքնավար, բայց միջազգայնորեն ինտեգրված ձև է, որի միջոցով քաղաքացիները հենվում են սեփական ուժերի, ինքնօգնության և նպատակների իրականացման հարցում սեփական պատասխանատվության վրա, ընդ որում այդ նպատակները ներառում են ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական և բնապահպանական խնդիրներ, ինչպիսիք են՝ աղքատության հաղթահարումը, արդյունավետ գեղավածության ապահովումը և սոցիալական ինտեգրման խրախուսումը:

3. Հետևաբար, կառավարությունները ձգտում են ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կոոպերատիվները, ձեռնարկատիրական այլ ձևերի հետ հավասար հիմունքներով կարող են մասնակցել և զարգացնել արդյունավետ գործընկերություն՝ համապատասխան նպատակներին հասնելու համար: Քաղաքականությունը պետք է պաշտպանի և զարգացնի կոոպերատիվների ներուժը՝ օգնելու անդամներին իրենց անհատական նպատակներին հասնելու հարցում՝ դրանով իսկ նպաստելով հասարակության ավելի լայն իմաստով ձգտումներին:

4. Սակայն նման քաղաքականությունն արդյունավետ կարող է լինել միայն այն դեպքում, եթե դրանում հաշվի առնվեն կոոպերատիվների և կոոպերատիվ շարժման առանձնահատուկ բնույթը, որն էականորեն տարբերվում է ընկերակցությունների և ձեռնարկությունների բնույթից, որոնք կոոպերատիվ արժեքներով և սկզբունքներով չեն կազմակերպվում:

5. Սույն ուղեցույցի նպատակն է խորհուրդ տալ կառավարություններին և նախատեսել լայնընդարկուն սկզբունքներ, որոնց վրա կարող է լավագույնս հենվել կոոպերատիվների վերաբերյալ ազգային քաղաքականությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առավել կոնկրետ և մանրակրկիտ ազգային քաղաքականության համար պատասխանատու է յուրաքանչյուր կառավարություն: Կոոպերատիվ շարժման վերաբերյալ կառավարության ունեցած ակնկալիքների, գլոբալ առումով արագ փոփոխվող պայմանների և բուն կոոպերատիվ շարժման մեջ եղած փոփոխությունների պատճառով ՄԱԿ-ի անդամ երկրների մեծ մասում իրականացվող քաղաքականությունների համար օգտակար կարող է լինել որոշակի վերանայումը, իսկ որոշ դեպքերում՝ էական վերափոխումը:

Կոոպերատիվներին և կոոպերատիվ շարժմանը վերաբերող քաղաքականություն

6. Քաղաքականության նպատակն է հնարավորություն տալ ճանաչել կոոպերատիվները որպես իրավաբանական անձանց, ապահովել կոոպերատիվների և կոոպերատիվ շարժումը կազմող բոլոր կազմակերպությունների և հիմնարկների իրական իրավահավասարությունը այլ միությունների և մարմինների հետ: Կոոպերատիվների իրավահավասարությունը ապահովելու համար կոոպերատիվների հատուկ արժեքներն ու սկզբունքները՝ որպես հասարակության համար ցանկալի և օգտակար, պետք է ստանան ամբողջական ճանաչում, ինչպես նաև պետք է ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի կոոպերատիվների առանձնահատուկ որակական հատկանիշներն ու գործունեությունը պատճառ չհանդիսանան խտրականության կամ որևէ այլ վնասի:

7. Այդ նպատակին հասնելու համար կառավարությունները մտահոգված են փոփոխվող պայմաններում կոոպերատիվների համար նպաստավոր միջավայր ստեղծելու և պահպանելու հարցում: Կառավարության և կոոպերատիվների միջև արդյունավետ գործակցությունը հետապնդում է այդպիսի միջավայրի ստեղծման նպատակ:

Չանրային ճանաչում

8. Կառավարության համար նպատակահարմար և օգտակար է հրապարակավ ճանաչել կոոպերատիվ շարժման առանձնահատուկ ներդրումը ազգային տնտեսությունում և հասարակության կյանքում և քանակական, և՛ որակական առումով: Կոոպերատիվների միջազգային այլաձևի կողմից կազմակերպված՝ կոոպերատիվների միջազգային օրվա համատեղ նշումը՝ Վեհաժողովի 47/90, 49/55 և 51/58 բանաձևերի համաձայն, կարող է առիթ հանդիսանալ կոոպերատիվ շարժման մասին տեղեկությունները հրապարակայնորեն տարածելու համար:

Իրավական, դատական և վարչական դրույթներ

9. Եթե կոոպերատիվները պարտավորվում են դրական ներդրում ունենալ իրենց անդամների և իրենց համայնքների կյանքի բարելավման գործում, ապա անհրաժեշտ է համապատասխան դրույթ ունենալ իրավական, դատական և վարչական պրակտիկայում: Իրավական դրույթները կարող են ընդունել առանձին ազգային իրավական համակարգերին համապատասխան ձևեր: Ընդ որում այդ դրույթները պետք է վերաբերեն կոոպերատիվների կարգավիճակին, իրավունքներին և պարտականություններին, կոոպերատիվ շարժման ընդհանրապես և, անհրաժեշտության դեպքում, կոոպերատիվների հատուկ կատեգորիաներին կամ կոոպերացիայի հատուկ ասպեկտներին:

10. Ազգային սահմանադրություն

Նպատակահարմարության դեպքում կոոպերատիվների օրինականությունը և կոոպերատիվ շարժումը կարող են ճանաչվել այս փաստաթղթով: Այն դրույթները, որոնք սահմանափակում են կոոպերատիվների ստեղծումը և գործունեությունը, պետք է համապատասխանաբար փոփոխվեն:

11. **Ընդհանուր օրենք կոոպերատիվների համար, թե մեկ օրենք կոոպերատիվների մասին.** Կոոպերատիվների մասին ընդհանուր օրենքը կամ այնպիսի օրենքը, որի մեջ մտնում են նաև կոոպերատիվները, պետք է ապահովի, որ կոոպերատիվներն օգտվեն ընկերակցությունների և ձեռնարկությունների այլ տեսակների հետ իրական իրավահավասարությունից և ոչ թե ենթարկվեն խտրականության լոկ իրենց բնույթի պատճառով: Օրենքները պետք է ներառեն հղումների, սահմանումների և դրույթների հետևյալ հիմնարար խումբը. այն փաստի ճանաչումը, որ կոոպերատիվ արժեքների և սկզբունքների հիման վրա ընկերակցությունների և ձեռնարկությունների կազմակերպումը օրինական է. կոոպերատիվ մոտեցման կիրառելիության ճանաչումը ընկերակցությունների և ձեռնարկությունների նկատմամբ, վերջինիս ներդրումը ազգային կյանքում և կոոպերատիվ շարժման կարգավիճակի հարցում՝ որպես հասարակության ներսում կարևոր շահագրգիռ կողմ. կոոպերատիվների սահմանումը՝ օգտագործելով «Կոոպերատիվի ինքնության հռչակագիրը», որն ընդունել է Կոոպերատիվների միջազգային այլաձևը 1995թ.-ին. կոոպերացիայի արժեքների և սկզբունքների եզակի բնույթի ճանաչումը և դրանից ելնելով՝ օրենսդրության և գործելակերպի մեջ դրանց հանդեպ առանձին և հստակ վերաբերմունքի ճանաչումը. հանձնառությունը, որ ոչ դրանց եզակի բնույթը և ոչ էլ օրենքում դրանց հանդեպ եզակի ու հստակ վերաբերմունքը չպետք է դառնան խտրականության պատճառ՝ դիտավորությամբ թե առանց դիտավորության. հանձնառություն, որ որևէ օրենք կամ գործելակերպ չպետք է սահմանափակի քաղաքացիների իրավունքները՝ լիարժեքորեն մասնակցելու կոոպերատիվ շարժմանը՝ որևէ չափով, որը համահունչ կլինի շարժման արժեքներին, ընդ որում՝ առանց սահմանափակելու այդ շարժման գործունեությունը. դրույթ այն մասին, որ ընդհանուր օրենքը վերաբերում է կոոպերատիվների բոլոր կատեգորիաներին, բայց նաև, կոոպերատիվների որոշակի կատեգորիաների իրավիճակին արձագանքելու նպատակով, հնարավոր է կիրարկել հատուկ օրենքներ, որոնք համահունչ կլինեն ընդհանուր օրենքին. պայման, որ իրավական և վարչական կանոնակարգումները հիմնված լինեն միայն կոոպերատիվների մասին ընդհանուր կամ հատուկ օրենքների վրա. որ բոլոր կանոնակարգումները հստակ կերպով բացահայտեն այն օրենքի դրույթը, որի վրա դրանք հիմնված են և այն նպատակը, որի համար դրանք ստեղծվել են. կոոպերատիվ շարժման լիարժեք ինքնավարության և ինքնակարգավորման կարողության ճանաչումը. այն

փաստի ճանաչումը, որ շարժման գործերին կառավարության միջամտությունը պետք է հստակ կերպով սահմանափակվի առհասարակ բոլոր ընկերակցությունների և ձեռնարկությունների նկատմամբ հավասարապես կիրառվող միջոցներով՝ ապահովելու համար դրանց համապատասխանությունը օրենքներին: Խարժեքները կարելի է կատարել միայն ապահովելու համար հետևյալը՝ իրական հավասարություն վերաբերմունքի մեջ, ինքնակարգավորման հարցում կոոպերատիվ շարժման պարտականությունների սահմանումը բոլոր բնորոշ դեպքերում: Դրույթ այն մասին, որ օրենքների և կանոնակարգերի տեքստերը հասանելի լինեն կոոպերատիվների բոլոր անդամներին և աշխատակիցներին: Դրույթ այն մասին, որ կոոպերատիվ շարժման մասնակիցները լիարժեք կերպով մասնակցեն հատուկ օրենքների կամ դրանց կիրարկմանը վերաբերող իրավական կամ վարչական կանոնակարգերի ու ուղեցույցների նախագծերի կազմմանը: Դրույթ կոոպերատիվների պետական գրանցման պահպանության վերաբերյալ՝ որպես բոլոր ընկերակցությունների և ձեռնարկությունների գրանցման ընթացակարգերի մաս: օրենքների և գործելակերպերի շարունակական մշտադիտարկման և կանոնավոր վերանայման ընթացակարգերի մասին դրույթ, որը կներառի կոոպերատիվ շարժման ներկայացուցիչների լիարժեք և իրավահավասար մասնակցություն և կոոպերատիվների համար անհրաժեշտ միջավայրի վրա օրենսդրության և գործելակերպերի ազդեցության վերաբերյալ հետազոտություններ, կառավարությունների պատասխանատվության նախորդում՝ ձևակերպելու և իրականացնելու կոոպերատիվների այնպիսի քաղաքականություն, որը կծգտեր ստեղծել աջակցող և նպաստավոր միջավայր՝ միաժամանակ խուսափելով շարժման ինքնավարության որևիցե խախտումից և պատասխանատու ինքնակարգավորման համար դրա կարողունակության որևիցե նվազումից, ինչպես նաև կծգտեր ներգրավվել շարժման հետ արդյունավետ և հավասար գործընկերության մեջ՝ բոլոր այն պարագաներում, երբ այն կարող է եպես նպաստել պետական քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը: կոոպերատիվների միջազգային շարժմանը կառավարության աջակցության արժեքի ճանաչում, այդ թվում՝ միջկառավարական գործունեության միջոցով: և կոոպերատիվ շարժման՝ որպես հասարակության մեջ գլխավոր շահագրգիռ կողմի, պարտականությունների սահմանումը՝ ապահովելով այդ պարտականությունների համադրելիությունը լիարժեք ինքնավարության հետ:

12. Հատուկ օրենքներ կոոպերատիվների որոշակի կատեգորիաների համար

Կոոպերատիվների վերաբերյալ օրենսդրության հիմնական դրույթների համապատասխան, և ճանաչելով որոշ կոոպերատիվներին բնորոշ բիզնես բնույթը, կարող է անհրաժեշտություն առաջանալ կոոպերատիվների որոշ տեսակների համար օրենքում հատուկ դրույթներ ավելացնել՝ հնարավորություն տալով այլ տեսակի միավորումների և ձեռնարկությունների հետ միասին հավասարությունից օգտվելու և իրենց հատկանիշների պատճառով խտրականության չենթարկվելու:

13. Կոոպերատիվների հետ ուղղակիորեն կապված իրավական և վարչական գործելակերպը: Դրանք պետք է համահունչ լինեն կոոպերատիվների ընդհանուր օրենքներին և, մասնավորապես, նման գործելակերպին վերաբերող դրույթներին:

14. Այլ օրենքներ և գործելակերպեր, որոնք կարող են ազդեցություն ունենալ կոոպերատիվների վրա: Կառավարությունները պետք է ձգտեն բացառել կամ վերացնել այն դրույթները, որոնք կարող են խտրականության պատճառ հանդիսանալ կամ վնասել կոոպերատիվներին: Կառավարությունները պետք է ստեղծեն այնպիսի միջավայր, որ անհրաժեշտության դեպքում կոոպերատիվները կարողանան բացահայտել և տեղեկացնել վերանայման անհրաժեշտություն ունեցող դեպքերի մասին:

15. Օրենքների և իրավական ու վարչական գործելակերպերի մշտադիտարկում, վերանայում և վերստուգում: Սա անհրաժեշտ է՝ կոոպերատիվ շարժման վրա օրենքների և իրավական ու վարչական գործելակերպերի լիարժեք դրական ազդեցությունն ապահովելու համար: Եթե բացահայտվեն խտրականություն բովանդակող դրույթներ, ապա դրանք անհրաժեշտ է հնարավորին չափ արագ դարձնել անգործունակ՝ կասեցնելով տվյալ գործելակերպին վերաբերող վերանայված օրենքների կիրարկումը կամ վերանայված կանոնակարգերի և ուղեցույցների ընդունումը: Այս գործընթացը պետք է նպատակ հետապնդի կառավարություններին ձերձ պահել կոոպերատիվների և կոոպերատիվ շարժման ներքին գործերին միջամտելուց՝ բոլոր այն դեպքերում, երբ դեռևս գոյություն ունի նման միջամտություն, և հասնել այն սկզբունքի լիարժեք ու գործուն գիտակցմանը, որ կոոպերատիվները, իրենց տարբերություններով հանդերձ, իրավահավասար են այլ ձեռնարկությունների և քաղաքացիական ընկերակցությունների հետ:

16. Վերոնշյալ նպատակներից ելնելով, խորհրդակցության և գործակցության համար պետք է ստեղծել ֆորմալ ընթացակարգեր, որոնցով պետք է նախատեսել կոոպերատիվ շարժման կանոնավոր և լիարժեք

մասնակցությունը: Կարելի է օգտվել նաև մասնագիտացված միջազգային կոոպերատիվ կազմակերպությունների և միջկառավարական կազմակերպությունների կողմից առաջարկվող հատուկ ծրագրերից և ուղեցույցներից:

Հետազոտություն, վիճակագրություն և տեղեկատվություն

17. Հետազոտություն. Հաշվի առնելով կոոպերատիվ շարժման կարևորությունը, թերևս տեղին կլինի նախատեսել գործակցություն կառավարության և կոոպերատիվ շարժման կողմից իրականացվող, պետական քաղաքականությանը վերաբերող հետազոտական աշխատանքների միջև, հետազոտությունների արդյունքների հրապարակում և լայն տարածում, ներառյալ միջազգային կոոպերատիվ շարժման, միջկառավարական կազմակերպությունների և ՄԱԿ-ի ստացած արդյունքները: Շեշտադրումը պետք է կատարել այնպիսի կիրառական հետազոտությունների վրա, որոնք անմիջական օգտակարություն են ենթադրում կոոպերատիվների արդյունավետության բարձրացման, ստացած դրական արդյունքները հասարակությանը տրամադրելու և կոոպերատիվների և կառավարությունների միջև գործակցությունը բարելավելու առումով:

18. Վիճակագրություն. Կարելի է մի շարք միջոցներ ձեռնարկել կոոպերատիվների համար և դրանց մասին եղած վիճակագրությունը բարելավելու համար՝ հաշվի առնելով կոոպերատիվների վերաբերյալ եղած վիճակագրությունը Ազգային վիճակագրական ծառայության կանոնավոր ծրագրերի մեջ ինտեգրելու անհրաժեշտությունը, ինչպես նաև մասնակցել կոոպերատիվների վիճակագրության բարելավմանն ուղղված միջազգային ջանքերին, ներառյալ՝ ազգային վիճակագրական ծառայությունների կողմից օգտագործվելիք միանման սահմանումների ստեղծումը:

19. Տեղեկատվություն. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառավարությունները կանոնակարգում և մեծապես ազդում են տեղեկատվության տարածման վրա, մի շարք միջոցառումներ կարող են օգտակար լինել կոոպերատիվ շարժման վերաբերյալ գիտելիքների ընդլայնման և նախապաշարումներն ու թյուրըմբռնումները հաղթահարելու առումով: Այդ միջոցառումներն են՝ տեխնիկական և ֆինանսական օժանդակություն՝ շահագրգիռ այլ կողմերին ցուցաբերված օժանդակության չափով. բացառել զուտ կոոպերատիվ բնույթի պատճառով եղած խտրականությունը. կոոպերատիվ շարժման համար հանրային լրատվամիջոցների հավասար և ոչ խտրական մատչելիություն՝ ազգային կյանքում իր ունեցած ներդրմանը համապատասխան. ձեռնարկել նախապաշարումների և ապատեղեկատվության հաղթահարմանն ուղղված դրական գործողություններ այն դեպքերում, երբ կոոպերատիվ եզրույթն օգտագործվում է իր նախկին և ոչ տեղին կիրառությամբ. հանրային լրատվամիջոցների միջոցով տարածել տեղեկատվական նյութեր կոոպերատիվների հետ գործակցությամբ իրականացվող կամ կոոպերատիվների աջակցությամբ ուղղված՝ միջկառավարական գործողությունների վերաբերյալ. կառավարական կամ միջկառավարական մարմինների կողմից նախապատրաստված տպագիր կամ էլեկտրոնային նյութերի տարածում՝ նույն գերակայություններով և ռեսուրսներով, ինչ հատկացվում է շահագրգիռ այլ կողմերի մասին տեղեկատվությանը:

Կրթություն

20. Հաշվի առնելով կոոպերատիվ շարժման կարևոր ներդրումը կրթության բնագավառում, կարելի է իրականացնել մի շարք օգտակար միջոցառումներ, այդ թվում՝ հատկացնել պետական ֆոնդեր, ինչպես հատկացվում են ձեռնարկությունների այլ տեսակներին՝ կրթական նպատակներով: Կառավարությունները կարող են նաև ազգային կրթական համակարգի բոլոր մակարդակների ուսումնական պլաններում ներառել կոոպերատիվ շարժման արժեքները, սկզբունքները, պատմությունը և հանրային կյանքում ունեցած ընթացիկ և հեռանկարային ներդրումը, ինչպես նաև տեղական մակարդակի կոոպերատիվներում խրախուսել և աջակցել կոոպերատիվներում մասնագիտացված ուսուցման կազմակերպմանը:

Պետական ֆոնդերի հատկացումը

21. Արդյունավետ կոոպերատիվ ձեռնարկության համար էական նշանակություն ունեն ֆինանսական ինքնուրույնությունը, ամբողջական պատասխանատվությունը և լիարժեք անկախությունը:

Քաղաքականության հարցում լավագույն մոտեցումն այն մոտեցումն է, երբ կոոպերատիվի նկատմամբ վերաբերմունքը նույնն է, ինչ ձեռնարկության որևէ այլ տեսակի նկատմամբ: Արժեքավոր են նաև մի շարք այլ միջոցներ, ինչպիսիք են՝ կոոպերատիվների առանձնահատուկ բնույթի ճանաչումն ու դրա պաշտպանությունը, օրենսդրական և իրավակիրառական մակարդակներում կոոպերատիվների հատուկ ֆինանսական կարգավիճակի, կազմակերպական և կառավարման բնույթի պատճառով առաջացած խտրականության բացառումը, կոոպերատիվների կամ կոոպերատիվ շարժման ներքին ֆինանսական գործերին ուղղակի կամ անուղղակի ձևով որևիցե միջամտությունից խուսափելը և սեփական ֆինանսական գործերի համար շարժման պատասխանատվության ճանաչումը և կոոպերատիվ ֆինանսական հաստատությունների հետ գործընկերության զարգացումը այնպիսի ուղղություններում, ինչպիսին է համայնքային և տարածաշրջանային զարգացումը՝ հենվելով կապիտալի մոբիլիզացման և կառավարման իրենց փորձի և հանրօգուտ նպատակների իրականացմանը նպաստող ձևերի վրա:

Գործակցություն և գործընկերության հաստատակարգային (ինստիտուցիոնալ) մեխանիզմներ

22. Կառավարության մաս կազմող բոլոր գերատեսչություններն ու մարմինները, որոնք շփվում են կոոպերատիվ շարժման հետ, պետք է տեղյակ լինեն և իրենց գործելակերպը համապատասխանեցնեն կոոպերատիվների մասին ազգային քաղաքականությանը: Այդ համապատասխանությունն ապահովելու առումով օգտակար կլինի համակարգել կառավարության ներսում որոշակի գործառույթներ, ինչպես նաև ստեղծել կոոպերատիվ շարժման հետ կապի պատասխանատու օղակ:

23. Խորհուրդ է տրվում, որ մեկ բաժին կամ գրասենյակ ստանձնի կենտրոնացված համակարգումը, նպատակային և կապի իրականացման գործառույթները, որոնցից առավել կարևոր կարող են համարվել հետևյալները՝ կոոպերատիվների վերաբերյալ մեկ ամբողջական համակողմանի ազգային քաղաքականության մշակում. համապատասխան ուղեցույցների ձևակերպում և կառավարության բոլոր օղակներում դրանց հետևողական իրականացում, այդ թվում՝ իրականացման մշտադիտարկումը և վերստուգումը. իրավաբանական գերատեսչությունների հետ գործակցություն՝ ընդհանուր և հատուկ օրենքների նախագծեր գրելու նպատակով. կոոպերատիվ շարժման հետ կապի, խորհրդակցության և գործակցության իրականացում:

24. Պատասխանատու մարմնի համար առավել արդյունավետ գտնվելու վայրը կլինի այնպիսի բաժինը կամ գերատեսչությունը, որի վրա արդեն դրված են ռազմավարական և համակարգող գործառույթներ, ինչպես օրինակ՝ վարչապետի կամ նախագահի գրասենյակը, կամ՝ զարգացման պլանավորման գործընթացի կառավարման համար պատասխանատու որևիցե գրասենյակ:

25. Կարևորվում է հաստատակարգային այնպիսի մեխանիզմի առկայությունը, որը հնարավորություն է տալիս իրականացնել կանոնավոր խորհրդակցություններ և արդյունավետ գործակցություն կառավարությունների և կոոպերատիվ շարժման միջև:

26. Անհրաժեշտ է աջակցել միջկառավարական ծրագրերի և միջազգային կոոպերատիվ շարժման միջև կապին:

Հավելված 3. Բուլղարիայի և Հունգարիայի կոոպերատիվների օրենքների համեմատական վերլուծություն:

	Բուլղարիա	Հունգարիա
1) Սահմանումը և նպատակը	Կոոպերատիվը ֆիզիկական անձանց ընկերակցություն է փոփոխական կապիտալով և անդամների փոփոխական թվով, ովքեր գործունեություն են ծավալում կոոպերացիայի և փոխադարձ օգնության հիման վրա՝ բավարարելու իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքները: Կոոպերատիվը իրավաբանական անձ է: Անդամները իրավունք ունեն մասնակցելու և օգտվելու կոոպերատիվի գործունեությունից և պարտավորվում են աջակցել կոոպերատիվի գործունեությանը:	Կոոպերատիվը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող տնտեսավարող սուբյեկտ է, որը հիմնադրվում է փայամասնակցային կապիտալով, որի չափը նշվում է կանոնադրությամբ: Այն գործում է բաց անդամության սկզբունքով և փոփոխական կապիտալով, նպատակ ունենալով աջակցել անդամներին՝ բավարարելու իրենց տնտեսական, մշակութային, կրթական, սոցիալական և առողջապահական կարիքները:
2) Տնտեսական գործունեություն (սահմանափակումներ)	Հետևյալ սահմանափակումները կան. - Վերաապահովագրում - Բանկային գործ, սակայն փոխօգնության նպատակով փոխառությունները գյուղատնտեսական կոոպերատիվներում թույլատրվում են - Ֆինանսների ոլորտ	Սահմանափակումներ չկան
3) Գործունեություն ոչ անդամների հետ (ընդունելիություն և սահմանափակումներ)	Այս մասին դրույթներ չկան	Այս մասին դրույթներ չկան
4) Գրանցում	ԱՅՈ - առևտրային կազմակերպությունների ռեեստրում	ԱՅՈ – ձեռնարկությունների ռեեստրում
5) Անդամների նվազագույն թիվը	7	7, ֆիզիկական կամ իրավաբանական անձ, սակայն իրավաբանական անձանց քանակը չպետք է գերազանցի անդամների քանակի կեսը
6) Ներդրող անդամներ (ընդունելիություն)	Այս մասին դրույթներ չկան	ԱՅՈ Եթե կանոնադրությամբ թույլատրվում է: Ներդրող անդամների քանակը չպետք է գերազանցի բոլոր անդամների 10 տոկոսը, իսկ նրանց փայամասնակցության անվանական արժեքը չպետք գերազանցի ողջ փայատիրական կապիտալի 30 տոկոսը:
7) Նոր անդամների ընդունումը	Նոր անդամների ընդունումը թույլատրվում է կառավարման խորհրդի կողմից և հաստատվում	Կոոպերատիվի նպատակին համապատասխան, կանոնադրություններում կարող են նշվել

	Ընդհանուր ժողովի կողմից: Մերժված թեկնածուները կարող են բողոքարկել Ընդհանուր ժողով:	անդամության պայմանները և դիմումների գնահատման ընթացակարգը: Անդամների իրավունքներն ու պարտականությունները որոշվում են հավասարության սկզբունքի կիրառմամբ: Անդամությունը հաստատվում է կանոնադրությամբ նշված մարմնի կողմից: Մերժված թեկնածուները կարող են բողոքարկել Ընդհանուր ժողովին:
8) Կապիտալի փոփոխականությունը	ԱՅՈ	ԱՅՈ
9) Նվազագույն կապիտալի պահանջ	ՈՉ (բայց յուրաքանչյուր անդամ պետք է մուծի կանոնադրությամբ սահմանված փայի արժեքը)	ՈՉ (բայց կանոնադրությամբ կարող է սահմանվել)
10) Ավելցուկի բաշխումը և մասնավորապես ավելցուկի հատկացումը օրինական պարտադիր պահուստային ֆոնդերին	Պահուստային և ներդրումային ֆոնդերը պարտադիր են: Տվյալ ֆոնդերի չափը համապատասխանաբար պետք է լինեն փայմասնակցային կապիտալի ոչ պակաս 20%-ի և 10%-ի չափով:	Կոոպերատիվը իր հարկված շահույթի մի մասը պետք է հատկացնի կրթական ֆոնդին իր ֆիզիկական անձ հանդիսացող անդամների սոցիալական, մշակութային և կրթական կարիքները բավարարելու և այլ աջակցություն տրամադրելու նպատակով:
11) Պահուստների բաշխումը	Պահուստային և ներդրումային ֆոնդերից հեռացող անդամներին հատուցումներ չեն տրվում, բայց այս ֆոնդերը բաշխելի են կոոպերատիվի լուծարման պարագայում կամ Ընդհանուր ժողովի հատուկ որոշման դեպքում:	Կրթական ֆոնդը համարվում է պահուստային ֆոնդ:
12) Վճարված կապիտալի շահաբաժինների բաշխումը (ընդունելիություն և սահմանափակումներ)	Սահմանափակում չկա, սակայն շահույթի բաշխումը պետք է կատարել պահուստային և ներդրումային ֆոնդերին մասհանումներ կատարելուց հետո միայն:	ԱՅՈ
13) Շահաբաժինների/փոխհատուցումների /պատրոնաժի տարբերակումը և բաշխումը գործունեության հիման վրա և գործունեության համամասնությամբ	Տարբերակում չկա Չի նշված, թե արդյոք շահույթը բաշխվում է անդամի՝ կոոպերատիվի գործունեության մեջ ունեցած մասնակցության (գործարքների քանակ և որակ), թե՝ կոոպերատիվում իր ունեցած փայմասնակցային կապիտալի հիման վրա:	ԱՅՈ Ընդհանուր ժողովը կորոշի, թե արդյոք հարկված շահույթը պետք է բաշխվի՝ - անդամների միջև՝ ըստ կոոպերատիվի հետ ունեցած տնտեսական գործակցության. - անդամների միջև՝ ըստ կոոպերատիվում ունեցած իրենց փայմասնակցային կապիտալի:
14) Չայնի իրավունքը	Մեկ անդամ, մեկ ձայն	Մեկ անդամ, մեկ ձայն
15) Ոլորտային բաժինների ժողովներ (ընդունելիություն)	ԱՅՈ	ԱՅՈ Կանոնադրությամբ կսահմանվի ոլորտային

		Ժողովներ կազմակերպելու հարցը, եթե կոոպերատիվն ունի 500-ից ավելի անդամներ կամ՝ հիմնավորված այլ դեպքերում:
16) Փոխարկում ընկերության կամ կազմակերպության այլ իրավաբանական ձևի (ընդունելիություն)	Այս մասին դրույթներ չկան	ԱՅՈ
17) Կառավարման կամ վարչական խորհուրդներ/մարմիններ. արդյո՞ք միայն անդամներն են իրավասու	ԱՅՈ Կառավարման խորհրդի անդամները պետք է ընտրվեն միայն կոոպերատիվի անդամներից:	ԱՅՈ Բայց այս դրույթը կարող է պարունակել բացառություն, եթե կանոնադրությամբ սահմանված է, որ կոոպերատիվի հիմնական գործունեության իրականացման ժամանակ անհրաժեշտ է ունենալ հատուկ փորձագիտական ունակություններ՝ կոոպերատիվի առանձնահատկություններին, ժողովրդավարական կառավարման գործառույթներին համահունչ:
18) Լուծարման դեպքում ակտիվների փոխանցում	Ջուտ մնացորդային ակտիվների փոխանցում կոոպերատիվի անդամներին իրենց փայերի համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ կանոնադրությամբ:	Ակտիվները բաշխվում են անդամների միջև, բացառությամբ կրթական ֆոնդի, որը փոխանցվում է այլ կոոպերատիվի կամ կոոպերատիվների դաշնության:
19) Հարկային հատուկ մոտեցում (հիմնական միջոցառումներ)	ԱՅՈ - շահութահարկից մասնակիորեն ազատում շահույթի այն մասով, որը ուղղվում է ներդրումային ֆոնդին - հարկերից ազատում կոոպերատիվի ձևավորման փուլում և լուծարման փուլում:	ԱՅՈ Շահույթի այն մասը, որը մասհանվում է պահուստային ֆոնդին, ազատվում է հարկից մինչև 6.5%-ով:
20) Վերստուգման (աուդիտի) հանրային և/կամ այլ ձևեր, ներառյալ՝ կոոպերատիվներին ներհատուկ կանխազգուշացնող ստուգումը, ընդ որում՝ ոչ զուտ ֆինանսական (հիմնական օբյեկտներ)	ՈՉ	ՈՉ

Աղբյուրը՝ EURICSE, 2010.

Հավելված 4. Գերմանիայի և Իտալիայի կոոպերատիվների օրենքների համեմատական վերլուծություն:

	Գերմանիա	Իտալիա
1) Սահմանումը և նպատակը	Տարբեր թվաքանակով անդամներ ունեցող ընկերակցություններ, որոնց նպատակն է նպաստել իրենց անդամների եկամուտների աճին, նրանց տնտեսությունների զարգացմանը կամ նրանց սոցիալական և մշակութային կարիքների բավարարմանը՝ համատեղ սեփականություն հանդիսացող և համատեղ վարվող ձեռնարկության միջոցով:	Կոոպերատիվները փոփոխական կապիտալ և փոխադարձ նպատակներ ունեցող ընկերակցություններ են, որոնք գրանցված են կոոպերատիվ ընկերակցությունների ռեեստրում, քաղաքացիական օրենսգրքի 2512 հոդվածի երկրորդ մասով նախատեսված կարգով: Փոխադարձ նպատակը ենթադրում է ապրանքներ կամ ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ իրականացնելու մասին համաձայնագրերի կնքում:
2) Տնտեսական գործունեություն (սահմանափակումներ)	Սահմանափակումներ չկան (բացառությամբ միայն ապահովագրական գործունեության, որի համար նախատեսված է հատուկ իրավական ձև՝ փոխադարձ ապահովագրության ընկերակցություն և սեփական վերահսկողական մարմին:	Սահմանափակումներ չկան
3) Գործունեություն ոչ անդամների հետ (ընդունելիություն և սահմանափակումներ)	Թույլատրվում է միայն այն դեպքում, եթե նախատեսված է կանոնադրությամբ: Սահմանափակումներ չկան:	Թույլատրվում է միայն այն դեպքում, եթե նախատեսված է կանոնադրությամբ: Հիմնականում փոխադարձ կոոպերատիվները (ՅՓԿ-ները) կարող են փոխգործողությունների մեջ մտնել ոչ անդամների հետ, այն էլ՝ միայն որոշակի սահմաններում, ընդ որում ՅՓԿ-ն գերազանցապես աշխատում է անդամների հետ: Այլ կոոպերատիվների (ԱԿ-ների) դեպքում, ոչ անդամների հետ փոխգործողությունների հարցում որևիցե սահմանափակում չկա:
4) Գրանցում	ԱՅՈ Կոոպերատիվ ընկերակցությունների ռեեստրում:	ԱՅՈ ձեռնարկությունների ռեեստրում և կոոպերատիվ ընկերակցությունների ռեեստրում:
5) Անդամների նվազագույն թիվը	3 ֆիզիկական անձ	3 ֆիզիկական անձ կամ 9 ֆիզիկական կամ իրվաբանական անձ. 3 կոոպերատիվ՝ երկրորդային կոոպերատիվների դեպքում
6) Ներդրող անդամներ (ընդունելիություն)	ԱՅՈ Եթե կանոնադրությունը թույլ է տալիս	ԱՅՈ Եթե կանոնադրությունը թույլ է տալիս

7) Նոր անդամների ընդունումը	Գրավոր դիմումի հիման վրա, ընդ որում՝ օրենքով նախատեսված բովանդակությամբ: Ընդունումը ենթակա է ղեկավարության կողմից հաստատման:	Ընդունումը ենթակա է ղեկավարության կողմից հաստատման: Սերժված թեկնածուները կարող են դիմել ընդհանուր ժողովին:
8) Կապիտալի փոփոխականությունը	ԱՅՈ	ԱՅՈ
9) Նվազագույն կապիտալի պահանջ	ՈՉ Բայց կանոնադրությամբ կարելի է ամրագրել նվազագույն կապիտալ	ՈՉ Բայց յուրաքանչյուր անդամ պետք է բաժանորդագրվի 25 եվրոյի չափով առնվազն մեկ փայ:
10) Ավելցուկի բաշխումը և մասնավորապես ավելցուկի հատկացումը օրինական պարտադիր պահուստային ֆոնդերին	Պարտադիր օրինական պահուստային ֆոնդի վերաբերյալ դրույթներ չկան: Պահուստները պետք է նախատեսվեն կանոնադրությամբ (կամավոր պահուստներ) և սովորաբար լինեն անբաժանելի: Կանոնադրությամբ կարելի է նախատեսել, որ ավելցուկային գումարը ոչ թե բաշխվում է, այլ հատկացվում օրենքով սահմանված կամ այլ պահուստներին:	Կանոնադրությամբ պետք է նախատեսվել ավելցուկի բաշխման կանոններ: Տարեկան ընդհանուր շահույթի 30%-ը պետք է հատկացվի օրինական պահուստային ֆոնդին՝ նախքան որևիցե այլ հատկացում անելը, ընդ որում՝ առանց սահմանափակումների:
11) Պահուստների բաշխումը	Կամավոր պահուստները կարելի է չբաշխել, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ	ՉՓԿ-ները կարող են պահուստները չբաշխել անդամներին: ԱԿ-ները կարող են պահուստը բաշխել անդամներին:
12) Վճարված կապիտալի շահաբաժինների բաշխումը (ընդունելիություն և սահմանափակումներ)	ԱՅՈ Սահմանափակումներ չկան: Օրենքը նախատեսում է տարեկան ավելցուկի մի մասը, իրենց վճարած փայտիրական կապիտալի համամասնությամբ, հատկացնել անդամներին: Կանոնադրությամբ կարելի է նախատեսել փայտիրական հաշիվներին հատկացման կամ անդամներին բաշխման տարբեր ձևեր:	ԱՅՈ Բայց սահմանափակումներ կան ՉՓԿ-ների առումով: Թե ՉՓԿ-ները և թե ԱԿ-ները պետք է շահույթներից պարտադիր կարգով մասնաբաժին հատկացնեն օրինական պահուստային ֆոնդին (30%) և կոոպերատիվների դաշնությունների կողմից վարվող փոխադարձ ֆոնդերին (3%):
13) Շահաբաժինների/փոխհատուցումների /պատրոնաժի տարբերակումը և բաշխումը գործունեության հիման վրա և գործունեության համամասնությամբ	Չամպատապիտան դրույթ չկա: Կանոնադրության մեջ կարելի է նախատեսել ավելցուկի հատկացում պատրոնաժի փոխհատուցման ձևով:	Պատրոնաժը հստակ կերպով տարբերվում է շահաբաժինից: Փոխհատուցումները պետք է բաշխել կոոպերատիվի հետ անդամների փոխգործողությունների քանակի և որակի համամասնությամբ: Փոխհատուցումների բաշխման հարցում սահմանափակումներ չկան (բացի աշխատավորական կոոպերատիվներից):
14) Չայնի իրավունքը	Գործում է մեկ անդամ, մեկ ձայն սկզբունքը, բայց կանոնադրությամբ կարելի է նախատեսել որոշ	Գործում է մեկ անդամ, մեկ ձայն սկզբունքը, բայց կանոնադրությամբ կարելի է նախատեսել

	<p>բացառություններ.</p> <ul style="list-style-type: none"> - լրացուցիչ ձայներ (միայն մինչև 3 ձայն), - լրացուցիչ ձայներ այն կոոպերատիվներում, որտեղ անդամների ավելի քան 3/4-ը ձեռնարկատերեր են (բայց յուրաքանչյուր ընդհանուր ժողովի ժամանակ մինչև բոլոր ձայների 1/10-ը): <p>Երկրորդային կոոպերատիվ ընկերակցությունների համար գործում են հատուկ կանոններ:</p>	<p>որոշ բացառություններ.</p> <ul style="list-style-type: none"> - ավելի շատ ձայներ (բայց՝ ոչ ավելի քան հինգ ձայն) իրավաբանական անձ հանդիսացող անդամի համար՝ կապված վերջինիս ունեցած կապիտալի քանակից կամ իր անդամների թվից, - ավելի շատ ձայներ՝ ձեռնարկատեր անդամներ ունեցող կոոպերատիվներում (բայց ոչ ավելի քան յուրաքանչյուր ընդհանուր ժողովի ժամանակ ձայների ընդհանուր քանակի 1/10-ը), ելնելով անդամի՝ փոխադարձ փոխանակումներին մասնակցությունից (բայց ոչ ավելի քան այս առումով արտոնյալ համարվող բոլոր անդամների 1/3-ը) - վերահսկիչ մարմնի ընտրության ժամանակ ավելի շատ ձայներ՝ ելնելով ունեցած կապիտալի քանակից կամ փոխադարձ փոխանակումներին մասնակցությունից (առանց սահմանափակումների)
<p>15) Ուղրտային բաժինների ժողովներ (ընդունելիություն)</p>	<p>ԱՅՈ Պատվիրակների ժողով՝ եթե այդպիսին նախատեսված է 1500 –ից ավելի անդամ ունեցող կոոպերատիվների կանոնադրություններում</p>	<p>ԱՅՈ Եթե նախատեսված է կանոնադրությամբ, ինչպես նաև՝ որոշակի հանգամանքների առկայության դեպքում կամ անդամների որոշակի կատեգորիաների դեպքում: Դրանք նույնիսկ պարտադիր են, եթե կոոպերատիվն ունի 3000-ից ավելի անդամներ և իր գործունեությունն իրականացնում է 2 կամ ավելի շրջաններում կամ եթե ունի ավելի քան 500 անդամ և իր անդամների հետ իրականացնում է 2 տարբեր բնույթի փոխադարձ հարաբերություններ:</p>
<p>16) Փոխարկում ընկերության կամ կազմակերպության այլ իրավաբանական ձևի (ընդունելիություն)</p>	<p>ԱՅՈ</p>	<p>Միայն ԱԿ-ները կարող են փոխարկվել իրավական այլ ձևի ընկերությունների (բայց այս դեպքում դրանք պետք է իրենց միջոցները փոխանցեն փոխադարձ ֆոնդերին՝ համաձայն պարտադիր նվազագույն կապիտալը, որը փոխանցվում է որպես արդյունք ստեղծված ընկերությանը)</p>
<p>17) Կառավարման կամ վարչական խորհուրդներ/մարմիններ. արդյո՞ք միայն անդամներն են իրավասու.</p>	<p>ԱՅՈ Իրավասու են միայն անդամները: Սակայն, որպես անդամ հաճախ ընդունվում են պրոֆեսիոնալ</p>	<p>Կառավարման մարմին – ՈՉ, բայց վերահսկիչ մարմնի անդամներն ընտրվում են կոոպերատիվի անդամներից:</p>

	մենեջերներ՝ միայն այն նպատակով, որպեսզի իրավասու լինեն խորհրդում ծառայելու համար (աջակից անդամներ): Կոոպերատիվների դիտորդ խորհուրդները պետք է բաղկացած լինեն առնվազն 2 անդամից: Սկսած 2006թ.-ից, գործում են հատուկ դրույթներ փոքր կոոպերատիվների համար (որոնք ունեն 20-ից ոչ ավելի անդամներ): Նման փոքր կոոպերատիվները կարող են աշխատել առանց վերահսկիչ հանձնաժողովի, որի պարտականությունները ստանձնում է ընդհանուր ժողովը, ընդ որում այդպիսի կոոպերատիվների խորհուրդը կազմված է լինում միայն 1 անձից:	Վարչական մարմին. վարչական մարմնի անդամների մեծամասնությունը ընտրվում է կոոպերատիվի անդամների թվից:
18) Լուծարման դեպքում ակտիվների փոխանցում	Կարգավորվում է կանոնադրության համաձայն: Լուծարման դեպքում մնացած միջոցները կարելի է բաշխել անդամների միջև՝ պայմանով, որ կանոնադրությամբ կարող է այլ բան նախատեսվել: Անդամների փայամասերի վճարումից հետո մնացած միջոցները կարող են բարեգործական նպատակներով հատկացվել որևիցե ֆիզիկական կամ իրավաբանական անձի այն համայնքում, որտեղ գտնվում է տվյալ լուծարված կոոպերատիվի գրանցված գրասենյակը:	Մնացորդային զուտ միջոցների փոխանցում փոխադարձ ֆոնդերին՝ կոոպերատիվ շարժմանը նպաստելու նպատակով (ՀՓԿ-ներ): Համաձայն կանոնադրության (ԱԿ-ներ):
19) Հարկային հատուկ մոտեցում (հիմնական միջոցառումներ)	ՈՉ Բացառությամբ՝ - այն գումարի, որը հանվում է պատրոնաժային փոխհատուցման ձևով անդամներին բաշխված եկամտի հարկվող մասից, պայմանով, որ եկամուտը ստացված լինի անդամների հետ գործարքներից, որ անդամների նկատմամբ պահպանվի հավասար վերաբերմունքը և որ գումարները վճարվեն անդամներին:	ԱՅՈ - Ամբաժանելի պահուստային ֆոնդին հատկացված եկամտի մասն ազատվում է շահութահարկից: - Պատրոնաժի ձևով անդամներին բաշխված եկամուտը նվազեցվում է հարկվող եկամտից:
20) Վերստուգման (աուդիտի) հանրային և/կամ այլ ձևեր, ներառյալ՝ կոոպերատիվներին ներհատուկ կանխազուշացնող ստուգումը, ընդ որում՝ ոչ զուտ ֆինանսական (հիմնական օբյեկտներ)	ԱՅՈ Կատարվում է նախագրանցումային աուդիտ կոոպերատիվ աուդիտորական դաշնությունների կողմից: Պահանջվում է պարտադիր անդամակցություն կոոպերատիվ աուդիտորական դաշնությունում:	ԱՅՈ Վերահսկիչ մարմինը տնտեսական զարգացման նախարարն է, բայց կոոպերատիվի աուդիտն իրականացվում է ներկայացուցչական կոոպերատիվ կազմակերպությունների կողմից: Հիմնական նպատակն է հարգել կոոպերատիվի փոխադարձ բնույթի հետ կապված կանոնները:

Աղբյուրը՝ EURICSE, 2010.